6735

1917

059
9-70

120[illegible]

Մ. ՁԱՇԿԵԱՆԻ

# „ԾՈՑԻ" ՕՐԱՑՈՅՑ

## 1917 թ.



ԵՐԵՍՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ.

## Ա) ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

*Տօնք եկեղեցականք*

5. 6. 7. և 13. Յունուարի տօնք Ծնն-
դեան և Անուանակոչութեան Քրիստոսի.
Փետ. 9—Ս. Վարդանանց զօրավ
Փետ. 14 Տեառնընդառաջ.
Մարտի 18—Մուտն 'ի Վիրապն
Գրիգորի Լուսաւորչին.
Զատկական տօներին.
Ապրիլի 7 Տօն Աւետման.
Յունիսի 3—Ելն է Վիրապէն Ս. Գրիգ
Լուսաւորչին:
Յունիսի 17—Գիւտ նշխարաց Ս. Գրի
գորի Լուսաւորչին.
Յունիսի 22—Ս. Թարգմանչաց Սբ
Սահակայ և Մեսրոպայ.
Վարդավառին Տարեդարձ Ս. Օծման Վեհ
Ն. Ս. Գէորգ Ե. Ա. Հ. Հայոց Կաթողիկոսի
Յուլիսի 15—Ս. Առաքելոյն Թադէոսի
Ս. Սանդխտոյ կուսին.
Սեպտ. 8—Տօն Ծննդ. Ս. Աստուած
» 30 Անուանակոչութիւն Վեհ
Ն. Ս. ԳԷՈՐԳ Ե. Ա. Հ. Հայոց Կաթողիկոսի
Հոկտ. 14. Ս. Թարգմանչաց մերոց
Նոյ. 21—Ընծայումն Ս. Աստուածած.
Դեկ. 2—Ս. Առաքելոյն Թադէոսի և
Բարդուղիմէոսի.
Դեկ. 9. Տօն Յղութ. Ս. Աստուածածնի

059
Գ-70

# „ԾՈՑԻ" ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՕՐԱՑՈՅՑ 1917 թ.



Աշխատութիւն
ՄՌԿԱՐ ՋՄՇԿԵԱՆԻ
Երեսուներորդ տարի

Թիֆլիս. Տպարան Տ. Մ. Ռօտինեանց

(79)

'Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ.
ԳԷՈՐԳ Ե.

Սրբազնագոյն Կաթողիկոսի Ամենայն Հայոց.

—

Ի ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Տ. Տ. ՍԱՀԱԿ Բ. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

Եւ

ի Պատրիարքութեան Հայոց Կ. Պօլսոյ Ամենապատիւ Տ. ԶԱՒԷՆ բարձր-սրբազան արքեպիսկոպոսի.

49964-ա

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

Գ-35879-66



ԴԱՇՆ ԱԶԳԱՑ, [illegible]
1, Կայսր Նիկոլայ II. 2, Անգլ. թգ. Գէորգ.
3, Ֆրանս. նխ. Պուանկարէ. 4, Ճապոնիայի.
5, Բելգիայի. 6, Իտալիայի. 7, Սերբիայի.
8, Չերնոգորիայի 9, Ռումինիայի.

# Ա Զ Դ

Պատիւ ունիմ տեղեկացնել ի գիտութիւն յարգելի ընթերցողներիդ, որ չնայելով ներկայ—պատերազմական ժամանակիս ամեն բանի թանգութեան և թղթի գինը քառապատիկ աւելանալուն, բայց և այնպէս ինչպէս, 30 տարի անընդհատ ու շարունակ, այնպէս և այս անգամ հրատարակում ենք նաև 1917 թ. սոյն «Ծոցի» օրացոյցը, որի թէ հասարակ թղթի վրայ տպագրելու վերաբերութեամբ և թէ գինը 30 կոպէկ նշանակելուն, խնդրում եմ ընթերցողներիդ ներողամտութիւնը։ Ինչ վերաբերում է գնողներին՝ որպէս զի հերթին-ժամանակին շուտ ստանան, պէտք է շտապեն օր առաջ պատուէր տալու և ժամանակիս փոստային կարգերից խուսափելու համար, հաշիւը կանխիկ ուղարկելու։

Հասցէն՝ Թիֆլիս, Մակար Զմշկեան։

## ԲԱՐԵՄԱՂԹՈՒԹԻՒՆ ՆՈՐ-ՏԱՐՈՒԱՑ ԱՌԹԻՒ.

Երբ ներկայ համաշխարհային պատերազմը սկսուեց բազմաթիւ անձինք հարցնում էին ինձ. «Գ. Զմշկեան, այս պատերազմի մասին ձեր աստղերը ի՞նչ են գուշակում»։

Եւ թէև ընդհանուրի կարծիքը պատերազմի մի քանի ամիս տևելն էր, սակայն հետևեալն էի պատասխանում*)։

«Այս պատերազմը երկարատև է լինելու, վերջն էլ այն ժամանակ, երբ երկու կողմից անչափ կոտորածից յետոյ սպառուած չեզոք տէրութիւնները կը միջամտեն հաշտուելու։ Հայաստանի համար էլ պէտք է աշխատել որ կոտորած չլինի, ապա թէ ոչ, գաղթականութիւն առաջանալով, Հայաստանը կամա-

*) Գուշակութիւնս թէև մեզանից անկախ պատճառով ժամանակին անկարող եղանք հրատարակել. սակայն հարիւրաւոր անձինք այժմ էլ կը յիշեն ու կը վկայեն։

յանալ, որը տեղից կը տայ դեպլոմատներին ատտոնօմեան չիրագործելու։ Ամեն տեղ սուգ ու շիւան կը տիրի, Եւրոպա, այս ներկայ օրերին երանի կը տանջւ։

Վերոյիշեալ գուշակութիւններից թէև շատերը թերահաւատութեամբ էին վերաբերվում, սակայն այժմս ակնյայտ է, որ երկու տարի ու կէսուայ ընթացքում, դրանց մեծ մասը կատարվել է ու դեռ ևս շարունակվում է կատարուել։ Ուստի առաջիկայ Նոր տարուան հետ բարեմաղթենք, որ համաձայնութեան պետութիւնները յաղթող հանդիսանան և որ առաջ վերջ տրուի երկրագնդիս վրայ մինչև այժմս չտեսնուած այս սոսկալի կոտորածներին, որպէս զի թէ ամբողջ աշխարհը հանգստանայ, թէ Հայաստան երկրի նահատակ ժողովրդի իղձերը իրականանան և թէ պատերազմող ազգ-մրկներն ու աքսորուած գաղթականներն ցնծութեամբ իրանց հայրենի օջախը վերադառնան։ Մ. Զմշկեան

## Ա) 1917 Թ. ՀԱՅՈՑ ՏՈՄԱՐԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐԸ

| | |
|---|---|
| Գիր տարւոյն է . . . . . | Լ. |
| Վերադիրը . . . . . | 17. |
| Եօթներեակը . . . . . . | Է. |
| Իննեւտասներեակը . . . . | 16. |
| Տանուտէրն . . . . . | Սաղ. ծն. |

## Բ) ՏԱՐԵՄՈՒՏՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Հայոց՝ ըստ բուն Տոմարի | Օգոստ. | 11-ին |
| » ըստ Ագաթիայի | Մարտի | 21 » |
| Լատինաց՝ (ըստ Նոր Տոմ.) | Դեկ. | 19 » |
| Յունաց | Յունուարի | 1 » |
| Մահմեդականաց՝ | Յունիսի | 10 » |
| Հրէից՝ | Սեպտեմբերի | 7 » |
| Հաբեշաց՝ | Օգոստոսի | 26 » |
| Ղպտաց | Օգոստոսի | 1 » |
| Նեստորականների | Հոկտեմբերի | 1 » |

Չինաց՝ Փետրվարին (լուսնի առաջին օրը) երբ արեւը գտնւ Ջրհոս համաստեղութեան մէջ է գտնվում։

## Գ) ՀԱՅՈՑ ՇԱՐԺԱԿԱՆ ԵՒ ԱՆՇԱՐԺ ՅԱՅՏՆԻ ՏՕՆԵՐԸ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Սբ Կաղանդի Կիրակի Յունուարի 1-ին.

» ԾՆՆԴԵԱՆ Ուրբաթ . . 6 »

Միջոց ունի 17 օր:

Առաջաւորաց Բարեկ. Յունվ. 22 »

Բուն-Բարեկենդան Փետ. 12 »

ՕՐ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ Գշ. Փետ. 14 »

ԶԱՏԻԿ . . . . . Ապրիլի 2 »

ՕՐ ԱՒԵՏՄԱՆ Ուրբ. Ապրիլի 7 »

Երեւման Ս. Խաչի » 30 »

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ Մայիսի 11 »

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ » 21 »

Բարեկ. Ս. Լուս. պհց. Յունիսի 11 »

Ս. Գրիգոր Լուսաւորիչ » 17 »

Բարեկ. Վարդ. պհց. Յուլիսի 2 »

ՎԱՐԴԱՎԱՌ . . » 9 »

Միջոց ունի չորս շաբաթ.



Բարեկ. Ս. Աստուած. պհց. Օգ. 6 »

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստած. » 13 »

Միջոց ունի չորս շաբաթ.

Բարեկ. Ս. Խաչի Սեպտեմբերի 10 »

ԽԱՉՎԵՐԱՑ. » 17 »

Բարեկ. Վարագայ Ս. Խաչի » 24 »

Վարագայ Ս. Խաչ. Հոկտ. 1 »

Միջոց ունի 9 շաբաթ.

Գիւտ Խաչ. . . Հոկտեմբ. 29 »

Յիսնակաց Բարեկ. Նոյեմբ. 19 »

Երից ամաց Ընծ. Ս. Աստածնի » 21 »

Ս. Յակոբայ Բարեկ. Դեկտ. 9 »

Յղութիւն Ս. Աստածնի. » 10 »

Միջոց ունի 14 օր.

Բարեկ. Ծննդ. պահոց Հինգշաբթի

Դեկտեմբերի . . . . . . . . 28 »

Հայաստանեայց եկեղեցւոյ պսակի խորհուրդ կատարուելու արգելուած օրերը։

Ամէն լուս-չորեքշաբթի, լուս ուրբաթ և շաբաթ-կիրակնամուտ երեկոներին։
Հինգ Տաղաւարաց մեռելոցներին։
Անուանակոչութեան, Տեառնընդառաջի Աւետման, Ս. Աստուածածնայ Յղութեան, Ծննդեան և Երից ամաց ընծայման տօներին ու նախատօնակներից յետոյ։
Ծննդեան, ութօրէից, Զատկական օրերի առաջին շաբաթը, Վարդավառի 3 օրերը, Վերափոխման 10 օրերը և Ս. Խաչի ամբողջ շաբաթը։
Ինչպէս ամբողջ Մեծի պահոց այնպէս և այլ շաբաթական Առաջաւորաց, Հոգեգալստեան, Լուսաւորչի, Վարդավառի։ Վերափոխման, Ս. Խաչի, Յիսնակի, Ս. Յակոբայ և Ծննդեան պահոց ընթացքում *)։

*) Ըստ եկեղեցական կանոնի, օրը հաշվում է արևի մայր մտնելուց։
Տ. Աշխ.

# ՅՈՒՆՈՒԱՐ

## 31 ՕՐ

Երկիրը բացի իր առանցքի վերայ պտտուելուց, պտտում է նաև արևի շուրջը — 365 օրում 5 ժ. 48 ր. 51 վայրկեանում։ Եւ այդ ժամանակամիջոցը անուանել են տարի։ Հին ժամանակները այդ շրջանը անուանում էին Կենդանակերպեան կամ Զոդիակոսեան շրջան։ Երկիրը պտտուելով արևի շուրջը՝ անցնում է 12 համաստեղութիւններ, որոնց անուանել են Կենդանակերպներ. իսկ իւրաքանչիւր համաստեղութիւնը ամիս։ Զրհոս կենդանակերպ համաստեղութեանը — համապատասխանող Յունուար ամսին, անուանել են Հովմայեցւոց

չաստուած Ցանոսի անունով, որովհետև Հռոմուլոսի ժառանգ Նումեա Պոմպէլիոսը, կարգաւորելով ու լրացնելով Հռոմուլոսի տարուայ ամիսների թիւը, ի պատիւ Ցանոսի 12 բագիններով տաճար հիմնեց և տարուայ առաջին ամիսը ի պատիւ Նորա անուանեց Ցանուար։ Մեր նախնիքն էլ, ինչպէս ուրիշ ազգեր, նայելով բնութեան երևոյթներին, երկրի սովորութեան, աւանդութեան, նաև մարդկանց զբաղմունքների և պատահած ժամանակին, ամիսներին յարմար անուններ էին տալիս. օրօրինակ՝ տարեգլուխը, է յիշատակ Ջըրհեղեղի սկսել են Օգոստոս ամսից, Ջրհեղեղի վերջանալու և Նոյեան Նաւի—տապանի կանգնած տեղին հասնելու պատճառաւ անուանել են Նաւասարդ, որ է Նաւ-աստ-արդ, (Նաւը-արգէն-այստեղ է կամ Նաւը հասել է արգէն)։ Ցունուարին անուանել են Արաց։ Սանսկրիտերէն լեզուով «նոր-սարդ» խօսքը կը նշանակէ Նոր-տարի։

Այստեղ աւելորդ չենք համարում յիշել որ Եւրոպայում մինչև 1567 թուականը Մարտ ամսից էին սկսում Նոր-տարին, որովհետև Ցունուար ամիսը տարուայ 11-րդ ամիսն էր հաշվում. իսկ 1567 թ. ֆրանսիական Կարլոս X-ի հրովարտակով, Նոր տարին—ամանորը Ցունուարի մէկից սկսեցին գործածել, որը մինչև այժմս շարունակվում է ամբողջ Եւրոպայում։

Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Հ

1 ✠ Կիր. բյ. 3. օր Ծննդ. պահոց։ Տարեմուտ և կաղանդ։ Ռուսաց Տօն Անուանակոչութեան Տեառն և Տօն Ս. Բարսեղի հայրապետին։ 20

2 Բշ. բկ. 4 օր Ծննդեան պահոց։ 21

3 Գշ. գյ. 5 օր Ծննդ. պահոց։ 22

☾ Վր. քռ. լս. Սառնամանիք։

4 Դշ. գկ. 6 օր Ծննդեան պահոց։ 23

5 Եշ. դյ. Ճրագալոյց Ծննդեան։ Նաւակատիք։ Երեկոյեան զկնի պատարագի Նախատօնակ (մինչև ամսոյս 14-ն ամեն երեկ. նախատօնակ կատարի)։ Ռուս. Ճրագալոյց Աստուածայայտնութեան։ 24

6 ✠ Ուր. դկ. ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ջրօրհնէք։ Ուտիք է մեզ անմիջոց ութ օր։ Ռուսաց և Յունաց՝ Մկրտութիւն Տեառն։ 25

7 ✠ Շբ. ռյ 2. օր Ծննդեան։ Յիշատակ մեռելոց։ Ռուսաց՝ Ս. Յովհաննու Կարապետին։ 26

Օ | ՅՈՒՆՈՒԱՐ | Հ

8 ✠ Կիր. ռկ. 3. օր Ծննդեան։ 27

☉ Արեգակն ’ի Ջրհոսն մտանէ։

9 Բշ. բյ. 4. օր Ծննդեան 28

10 Գշ. բկ. 5. օր Ծննդեան։ 29

☽ Առ. լս. [illegible] եղ.

11 Դշ. գյ. 6. օր Ծննդեան։ 1

12 Եշ. գկ. 7. օր Ծննդեան պահոց։ 2

13 ✠ Ուր. դյ. 8 օր Ծննդեան և ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ։ Երեկոյին նախատօնակ։ 3

14 Շբ. դկ. Տօն Ծննդեան Ս. Յովհաննու Կարապետին։ 4

15 ✠ Կիր. ռյ. Բ. կիր. զկնի Ծննդ. 5

16 Բշ. ռկ. Ս. Պետրոսի հայրապետին, Վլասայ եպիս. և Աբիսողոմայ առաքելային։ 6

17 Գշ. բյ. Ս. Անտոնի Տրիփոնի, Պարսամայ և Ոնոփրիոսի ճգնաւորացն 7

18 Դշ. բկ. Պահք։ 8

◑ Լռ. քռ. լս. Ցրտոտ եղ.

19 Եշ. գյ. Ս. Թէոդոսի Թագաւորին և մեծն Եփեսոսի։ 9

20 Ուր. գկ. Պահք։ 10

21 Շբ. փյ. Ս. Հայրապետացն Աթա- 11
նասի և Կիւրղի:
22 ✠ Կիր. փկ. Բ. Կիր. զկնի Ծննդ. 12
Բարեկենդան Առաջաւորաց պահ.
23 Բշ. ոյ. 1. օր Առաջաւ. պահոց: 13
24 Գշ. ոկ. 2. օր Առաջ. պահոց: 14
25 Դշ. բյ. 3. օր Առաջաւ. պահոց: 15
Ⓐ Լր. լուս. [illegible]:
26 Եշ. բկ. 4. օր Առաջաւ. պահոց: 16
27 Ուր. քյ. 5 օր Առաջաւ. պահոց: 17
Յիշատակ Յօնաննու մարգարէին:
28 Շբ. քկ. Ս. Սարգսի զօրավարին 18
և որդւոյ նորա Մարտիրոսի և չո-
րեքտասան զինուորացն:
29 ✠ Կիր. փյ. Գ. Կիր. զկնի Ծննդեան: 19
30 Բշ. փկ. Ս. Ատովմեանց զօրավա- 20
րացն:
31 Գշ. ոյ. Ս. Սուքիասեանց վկա- 21
յիցն:

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը աւելացել է 1 ժ. 52 րոպէ:



ՅՈՒՆՈՒԱՐ.—Ջրհոսն: Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համեստ է, բարի, օրհնէլի, խելացի, ուրախ, հեռաքրքիր, կասկածոտ և հանճարեղ՝ որից և օգտուող: Միակ պակասութիւնը՝ անչափ փառամոլութիւնն է: Սկզբում չունեոր, վերջը կարողութեան տէր, միայն այդ ամենն էլ վատնող: Երեխաներ նաև քիչ ունեցող:

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաստատակամ է, վեհանձն, անկեղծ, չաայլ, ուրախ և աւելի իր բաւականութիւնների ետեից ընկնող: Իր զուարթ բնաւորութեան շնորհիւ հեշտութեամբ կըտանէ զանազան վշտեր և անյաջողութիւններ, որոնց սպասելու է հէնց ամուսնութեան սկզբից: Շատ տեղ կըճանապարհորդի և ջահիլ ժամանակ իր քաշած նե-

3587-66
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴ...
Гос. библиотека
ՀԱՍԽ-Арм. ССР

ղութիւններից մեծ հարստութիւն ձեռք կըբերէր, բայց ծերութեան ժամանակ զգուշանալու է, որ անդամալոյծ չդառնայ։

Առհասարակ յունուարին ծընուածները հոկտեմբեր ամսուայ կէսից մինչև նոյեմբերի կէսը հիւանդանալուց զգուշանալու են։ Իսկ իրենց գործերի ամենայաջող ժամանակը դեկտեմբերի 15-ից մինչև յունուարի 15-ն է։

---

# ՓԵՏՐՈՒԱՐ

28 ՕՐ

Օրացոյցը կամ ժամանակի հաշիւը սկսուեցաւ հին ժամանակները յոյներից և հռովմայեցիներից, այդ պատճառով նոր ազգերն էլ մինչև այսօր հին ազգերի գործածած անուններն են գործ դնում։ Այս ամիսն էլ, Հռոմուլոսի ժառանգ Նումեա Պոմպէլիոսը կարգադրեց տարեշրջանի երկրորդ ամիս համարել։ Որովհետև այս ամիսը ընդհանրապէս անձրևոտ էր լինում, և հնումն նուիրուած էր ի պատիւ ծովի չաստուած Պօսիդոնին, իսկ Ֆեպրէ, իտալերէն նշանակում է տենդոտ և անձրևներից առաջացած Հռովմի շրջակայքում այս ամսում տեղի ունեցած տենդի համաճարակի պատճառով փետրուարին անուանում էին տենդի ամիս։ Փետրվար ամիսը համա-

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| | պատասխանում է—Ձուկ համաստեղութեանը և վերցրած է Ցեբրայեցի բառից։ Այսպէս անուանում էին հռովմայեցիք զոհաբերութեանը՝ որ սովորաբար այս ամսին էին կատարում։ Մեր նախնիքն էլ երևի հէնց այս պատճառաւ անուանել են այս ամսին Մեհեկի (երևի Մեհենաց ամիս)։ | |
| 1 | Դշ. ով. Պահք։ | 22 |
| 2 | Եշ. քյ. Ս. Ոսկեանց քահանայիցն։ Ց. և Ռ. Տեառնընդառաջ։ ☽ Վր. քա. լս. Տեղ տեղ ձիւնաբուքեր։ | 23 |
| 3 | Ուր. բյ. Պահք։ | 24 |
| 4 | Շբ. ֆյ. Ս ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ հայրապետին Մերոյ։ | 25 |
| 5 | ✠ Կիր. ըյ. Դ. Կիր. զկնի Ծննդեան։ | 26 |
| 6 | Բշ. ըյ. Ս. Մարկոսի, եպիսկոպոսին, Պիոնի քհն., Կիւրղի և Բենիամինի սարկաւագացն և Ս. վկայիցն Աբդլմսեհի, Որմզդանայ և Սայենի։ Ցերեկ. Նախատօնակ։ | 27 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 7 | Գշ. ըյ. Ս. ՂԵՒՈՆԴԵԱՆՑ քահ. ☉ Արեգ. 'ի Ձուկն։ Օր էջանելոյ ջերմութեան արեւու յ'օդս։ | 28 |
| 8 | Դշ. ոյ. Պահք։ Ցերեկ. Նախատօն. ☽ Նն. լուսնի։ Բփօբիբ։ | 29 |
| 9 | ✠ Եշ. ըյ. Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ զօրավարացն մերոց և 1036 վկայիցն, որք անկան 'ի մեծ պատերազմին Աւարայրի։ Տօն ազգային և Ցիշատակ մեռելոց։ | 1 |
| 10 | Ուր. բյ Պահք։ Ց. և Ռ. Բարեկ. եօթնեկի։ | 2 |
| 11 | Շբ. բյ. Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյ՝ 150 հայրապետացն։ Զկնի երեկոյեան ժամասացութեան ծածկեսցի սեղանն վարագուրաւ։ Ց. և Ռ. Բարեկ եօթնեկի։ | 3 |
| 12 | ✠ Կիր. ըյ. Բուն-Բարեկենդան։ Նաև Ց. և Ռուսաց։ | 4 |
| 13 | Բշ. ոյ. 1. օր մեծի պահոց։ Ցերեկ. Նախատօնակ. | 5 |
| 14 | ✠ Գշ. ըյ. 2. օր մեծի պահոց։ ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋ. | 6 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| | Օր իջանելոյ ջերմութեան արեւու 'ի ջուրս։ | |
| 15 | Դշ. թյ. 3. օր մեծի պահոց։ | 7 |
| 16 | Եշ. թկ. 4. օր մեծի պահոց։ | 8 |
| | ☽ Առ. քռ. լս. Ձեռմից եղ. | |
| 17 | Ուր. ֊ փյ. 5. օր մեծի պահոց։ | 9 |
| 18 | Շբ. փկ. 6 օր մեծի պահոց։ Ս. Թէոդորոսի զօրավարին. Նաւ Ց. և Ռուսաց։ | 10 |
| 19 | ✱ Կիր. ցյ. 7. օր. մեծի պահոց։ Բ. Կիր. Բառասնորդ. պահոց։ | 11 |
| 20 | Բշ. ցկ. 8. օր մեծի պահոց։ | 12 |
| 21 | Գշ. ադ. 9. օր մեծի պահոց։ Օր իջանելոյ ջերմութեան արեւու ի հողն։ | 13 |
| 22 | Դշ. ակ. 10. օր մեծի պահոց։ | 14 |
| 23 | Եշ. բյ. 11. օր մեծի պահոց։ | 15 |
| 24 | Ուր. բկ. 12. օր մեծի պահոց։ ☾ Եր. լս. Սառնամանիք։ | 16 |
| 25 | Շբ. փյ. 13. օր մեծի պահոց։ Կիւրղի Երուսաղեմայ հայրապետին և միւս Կիւրղի եպիսկոպոսի և մօրն նորա Աննայի։ | 17 |

| Օ | ՓԵՏՐՈՒԱՐ | Ն |
|---|---|---|
| 26 | ✱ Կիր. փկ. 14. օր մեծի պահոց։ Գ. Կիր. Բառասնորդական պահոց.—(Անառակին)։ | 18 |
| 27 | Բշ. ցյ. 15. օր մեծի պահոց։ | 19 |
| 28 | Գշ. ցկ. 16. օր մեծի պահոց։ | 20 |

—

Այս ամսոյս 1-ից մինչև 28-ը օրն աւելացել է 7 ժ. 2 րոպէ։

ՓԵՏՐՈՒԱՐ.—Ձուկն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան խաղաղամոլ է, համարձակ, գիտուն, անապարծ ու զուարթ։ Ջահիլ ժամանակ չունենար, սակայն հարստանալուց յետոյ շատ լղոզ, վատնող։ Թէև լաւ շրջանների սիրահար, բայց մինչև 40 տարեկան հասակը կանանցից քամբաղ։ Եւ իւր անընդունակութեան շնորհիւ վնասներ կրելով ինքն է միայն տուժում։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը հաղուա-

ջիտ գեղեցկուհի է լինում, յաճախ սրտով բարի, խելօք, ընդունակութեանց տէր ու դրական կարծիքներ ունեցող։ Երեխաներ էլ քիչ է ունենում։ Առհասարակ փետրուար ամսում ծնուածները արի են լինում և ծառայութեան մէջ բաղդաւոր, բայց չարամիտ մարդկանցից զգուշանալու են։



# ՄԱՐՏ

31 Օր.

Հռովմայեցոց մէջ Հռոմուլոսի տարուայ առաջին ամիսը Մարտն էր, որ իր անունը ստացել է պատերազմի չաստուած Արամազդի և Հերայի զաւակ Մարսից (Արէս), որը (աւանդութեամբ Հռովմի հիմնադրի) Հռոմուլոսի հայրն էր համարւում. Այսպէս անուանեց Հռոմուլոսը, տարին բաժանելով ամիսների։ Որովհետև Իտալիայում այս ամսումն է սկսւում գարունը, սորա համար հին ժամանակները գարունը ընդունելու համար տօն էին կատարում։ Այդ հանդէսը պատկի և ամուսնութեան տօն էր։ Ամուսնացած կանայք ծաղիկներ էին զոհաբերում հպարտութեան չաստուած Ցունոնայի ուխտատեղոյն, իսկ տղամարդիկ իրենց

| Օ | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|

կողմից զոհաբերում էին երկ-դեմեան չաստուած Յանոսին։ Այս ամիսը կանանց յաղթութեան հանդէս էր, մի ուրախութեամբ և ցնծութեամբ։ Որովհետև հին ժամանակները շատ ազգերի տարին սկսւում էր այս ամսից, որ համարւում էր տարւայ տարեշրջանի սկիզբն, երևի հենց այս պատճառաւ մեր նախնիքն էլ այս ամսին անուանել են Արեգ։

1 Դշ. աձ. 17. օր մեծի պահոց։ 21
2 Եշ. ակ. 18. օր մեծի պահոց։ 22
3 Ուր. բձ. 19. օր մեծի պահոց։ 23
☽ Վր. քռ. լս. Խոնաւ եղ.
4 Շբ. բկ. 20. օր մեծի պահոց։ Ս. Յովհաննու Երուսաղէմայ հայրապետին և Ս. հայրապետացն մերոց Յովհաննու Օձնեցւոյն, Յովհաննու Որոտնեցւոյն և Գրիգորի Տաթևացւոյն։ 24
5 ✠ Կիր. գձ. Դ. Կիր. Քառասնորդական պահոց — (Տնտեսին)։ 25

| Օ | ՄԱՐՏ | Լ |
|---|---|---|

6 Բշ. գկ. 22. օր մեծի պահոց։ 26
7 Գշ. դձ. 23. օր մեծի պահոց։ 27
8 Դշ. դկ. 24. օր մեծի պահոց։ (Միջինք)։ 28
☉ Արեգակն 'ի Խոյն։ 1 ժ. 4 րոպ. գիշ. Գարնանամուտ և հաւասարակած — Տիւ և գիշեր հաւասար։
9 Եշ. աձ. 25. օր մեծի պահոց։ 29
10 Ուր. ակ. 26. օր մեծի պահոց։ 30
◐ Ծնունդն լուս. Անձրևոտ եղ.
11 Շբ. բձ. 27. օր մեծի պահոց։ 1
Ս Մանկանցն Քառասնից, որք է' Սեբաստիա կատարեցան։
12 ✠ Կիր. բկ. 28. օր մեծի պահոց։ 2
Ե. Կիր. Քառասնորդական պահոց (Դատաւորին)։
Լատ. Աւետումն։
13 Բշ. գձ. 29. օր մեծի պահոց։ 3
14 Գշ. գկ. 30. օր մեծի պահոց։ 4
15 Դշ. դձ. 31. օր մեծի պահոց։ 5
16 Եշ. դկ. 32. օր մեծի պահոց։ 6
17 Ուր. աձ. 33. օր մեծի պահոց։ 7
Ցերեկոյին նախատօնակ։

Օ | ՄԱՐՏ | Ն

18 ✠ Շբ. ժլ. 34. օր Մեծի պահոց: 8
Ս. ԳՐԻԳՈՐԻ Մերոյ ԼՈՒՍԱՒՈՐ-
ՉԻՆ, ատակալն չարչարանացն և
մտին 'ի Վիրապն.
☽ Առ. քռ. լս. Ձմեռն հողմամբ:
19 ✠ Կիր. Բյ. 35. օր Մեծի պահոց: 9
Ե. Կիր. Քառասնորդական պա-
հոց.—(Գալստեան).
20 Բշ. Բլ. 36. օր Մեծի պահոց: 10
21 Գշ. Թյ. 37. օր Մեծի պահոց: 11
22 Դշ. Թլ. 38. օր Մեծի պահոց: 12
23 Եշ. Փյ. 39. օր Մեծի պահոց: 13
24 Ուր. Փլ. 40. օր Մեծի պահոց: 14
25 Շբ. Ժյ. 41. օր Մեծի պահոց: 15
Յիշատակ Ղազարու Յարութեան.
Յունաց և Ռուսաց Աւետումն.
● Նր. լս. Անձրև:
26 ✠ Կիր. ժլ. Պահք: Է. Կիր. ԾԱՂԿԱ- 16
ԶԱՐԴ. Ցերեկ. Դռնբացէք.
Յունաց. և Ռուսաց՝ Ծաղկազարդ.
27 Աւագ-Երկուշաբթի Բյ. Պահք. 17
28 Աւագ-Երեքշաբթի Բլ. Պահք: 18
Յիշատակ տասն կուսանաց.

Օ | ՄԱՐՏ | Ն

29 Աւագ-Չորեքշաբթի Թյ. Պահք: 19
30 ✠ Աւագ-Հինգշաբթի Թլ. Պահք. 20
ՅԻՇԱՏԱԿ ՈՏՆԼՈՒԱՑԻ.
31 Աւագ-Ուրբաթ Փյ. Պահք: Յիշ. 21
Չարչարանաց և Խաչելութեան.
Տեառն մերոյ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրը աւելացել է 2 ժ. 10 րոպէ.

---

ՄԱՐՏ.— Խոյն. Այս համաստեղութեան տակ ծնուած տղան եռանդոտ, արդարադատ, քաղցրախօս, հետաքրքիր և կրքոտ բնաւորութեան տէր է լինում. ոչ տուած խօսքն է պահում և ոչ խոստումն կատարում.

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը գեղեցիկ է, արդարասէր, քաղցրեղէն սիրով, շատակեր և իր նկատած բաների մասին երկար ու բարակ դա-

տօղութիւններ տուող, այդ պատ-ճառով էլ՝ ստախօս, անխնայ զրպարտող ու շուտ զայրացող է լինում։

Այս ամսին ծնուածներն առհասարակ առևտրի մէջ յաջողութիւն են ունենում, թէև ծլատ են լինում, միայն հոկտեմբեր ամսից զգուշանալու են։

---

# ԱՊՐԻԼ

## 30 Օր

Ապրիլ ամիսը Հռոմուլոսի տարւայ երկրորդ ամիսն էր։ Որովհետև այս ամիսը գարնան երկրորդ ամիսն էր և օրերը քանի գնում էին տաքանում էին, բնութեան այս ազդեցութեան պատճառաւ անուանել են Ապրիլ—Aprilis, որ լատիներէն նշանակում է արևային կամ տաքացնող, իսկ Apevire խօսքը լատիներէն նշանակում է բանալ, և որովհետև այս ամսում երկրից ծլում և բացվում են ցանքերը, սերմերն ու տունկերը, այդ պատճառով Հռոմում այս ամսուայ մէջ կատարւում էր ի պատիւ պտղաբերութեան չաստուած Ցերերի փառաւոր տօն։ Մեծ հանդիսով տանում էին չաստուածների արձանները երեխայքը նժոյգների վերայ հեծած և ժողովուրդը ցնծութեան

0 **Ա Պ Ր Ի Լ** Լ

և ուրախութեան աղաղակներով, իսկ քրմերը ի պատիւ չաստուծոյ սպիտակ հանդերձներ հագած զոհաբերում էին ամուլ կովեր: Մեր նախնիք այս ամսին անուանել են Ահեկի:

1 Աստղ-Շաբաթ փյ. Ծրագալոյց Ս. Յարութեան: Նաւակատիք: Ցերեկոյեան զկնի պատարագի Նախատօնակ: 22

Ֆ Վր. քռ. լս. Փոփոխական եղ.

2 * Կիր. ոյ. ԶԱՏԻԿ: (Ս. Յարութիւն Քրիստոսի): Ուտիք է մեզ անմիջօց չհամբարձումն: 23

Ըստ Յունաց և Ռուսաց Զատիկ, որոց ուտիք է ցնոր Կիրակէ.

3 * Բշ. ոփ. 2. օր Զատկի: Յիշատակ Մեռելոց: 24

4 * Գշ. բյ. 3. օր Զատկի: 25

5 Դշ. բի. 4. օր Զատկի: 26

6 Եշ. գյ. 5. օր Զատկի: 27

Ցերեկ. Նախատօնակ:

7 * Ուր. գի. 6. օր Զատկի: 28

ԱՒԵՏՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

---

0 **Ա Պ Ր Ի Լ** Լ

Ⓐ Արեգ. ՚ի Ցուլն մտանէ.

8 Շբ. փյ. 7. օր Զատկի: Յիշատակ Գլխատման Ս. Յովհաննու Մկրտչի: 29

9 * Կիր. փի. 8. օր Զատկի: Բ. Կիր. Նոր-Կիւրակէ. — (Կրկնազատիկ): 1

== Լն. քռ. լս. Բարեխառն եղ. Առաջին պահ:

10 Բշ. ոյ. 9. օր Յինանց: 2

11 Գշ. ոի. 10. օր Յինանց: 3

12 Դշ. բյ. 11 օր Յինանց: 4

13 Եշ. բի. 12. օր Յինանց: 5

14 Ուր. գյ. 13 օր Յինանց: 6

15 Շբ. գի. 14. օր Յինանց: 7

16 * Կիր. փյ. 15 օր Յինանց: Աշխարհամատրան Կիւրակէ — (Կանաչ Կիւրակէ): 8

17 Ֆ Առ. քռ. լս. Գարնանային եղ. 9

Բշ. փի. 16 օր Յինանց:

18 Գշ. ոյ. 17. օր Յինանց: 10

19 Դշ. ոի. 18. օր Յինանց: 11

20 Եշ. բյ. 19. օր Յինանց: 12

21 Ուր. բի. 20. օր Յինանց: 13

22 Շբ. գյ. 21. օր Յինանց: 14

Օ ԱՊՐԻԼ Լ

23 * Կիր. Թ. 22 օր Ցինանց։ 15
Դ. Կիր (Կարմիր-Կիրակէ)։
24 Բշ. փյ. 23. օր Ցինանց։ 16
● Նր. լուսնի։ Զատկընթացոյցին Խղ.
25 Գշ. պ. 24. օր Ցինանց։ 17
26 Դշ. ոյ. 25. օր Ցինանց։ 18
27 Եշ. ոյ. 26. օր Ցինանց։ 19
28 Ուր. բյ. 27 օր Ցինանց։ 20
29 Շբ. Թ. 28. օր Ցինանց։ 21
30 * Կիր. թյ. Ե. Կիր. 29 օր Ցինանց։ 22
Տօն Երեւման Ս. Խաչի։

—

Այս ամսուայ մէկից մինչև 30-ը օրն աւելացել է 1 ժ. 4 րոպէ։

---

ԱՊՐԻԼ.—Ցուլն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան անհրկիւղ է, կորուկ, զայրացկոտ, խստասիրտ և իւր թշնամիներին հալածող։ Թէև ունենք բայց ժլատ. բաղդաւորութեամբ կըփայլի և դրան նպաստող դէպքերը իւր ցանկութիւնները կըկատարեն։ Շատ էլ կըճանապարհորդի։

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկը բնաւորութեամբ ուժեղ, եռանդոտ, ոգխոյժով և թէև բնութեամբ անժուժկալ, միայն իբրև ամուսին խոնարհ և հաւատարիմ կըլինի, եթէ իւր և իւր ամուսնու բնաւորութիւններն իրար համապատասխանեն։

Ապրիլ ամսին ծնուածներն առհասարակ ոտքերի ցաւոյցքից զգուշանալու են։ Իրենց կեանքը երկու մասի կըբաժանուի. առաջին մասը շատ վտանգալից կանցնի և կըտևի մինչև 33 տարեկան հասակը.

—

# ՄԱՅԻՍ

31 ՕՐ

Մայիս ամիսը, ի հնումն նուի-
րուած էր, ի պատիւ Արամազդ
չաստուածոյ համանիշ Մայեա դի-
ցուհուն և ինչպէս կարծում են,
ստացել է իր անունը լատի-
նական majores բառից, որ նշա-
նակում է «նախնիք»։ Որով-
հետև այս ամիսը գարնան
վերջին ամիսն էր, սորա համար
ընծայուած էր ծերոց և նախ-
նեացը, և այդ պատճառով ար-
գելուած էր այս ամսին ա-
մուսնանալը։ Մայիսը գարնա-
նային ամիս լինելով և ամենու-
րէք այգի ու պարտէզ, դաշտ ու
հանդ, ծաղկով, վարդով փթթած
լինելու պատճառով զանազան
ազգերի մէջ տօնվում էր գար-
նանային հանդէսներով, որի մէջ
մեծ դեր էին խաղում պատանիք
և աղջկունք, ծաղկունք ու կանաչ

Օ ՄԱՅԻՍ Լ

Ճիւղեր։ Մեր նախնիք անուանել
են այս ամիսը Մարերի։
1 Բշ. ֆի. 30. օր Յինանց։ 23
☾ Գր. քռ. լս. Ջատըբերը եդ.
2 Գշ. փծ. 31. օր Յինանց։ 24
3 Դշ. փի. 32. օր Յինանց։ 25
4 Եշ. ած. 33. օր Յինանց։ 26
5 Ուր. աի. 34. օր Յինանց։ 27
6 Շբ. բծ. 35. օր Յինանց. 28
7 ✠ Կիր. բի. 36. օր Յինանց։ 29
Զ. Կիւրակէ։
8 Բշ. ճծ. 37. օր Յինանց։ 30
☼ Արեգ. ՚ի Եկաւորն մտանէ։
9 Գշ. ճի. 38. օր Յինանց։ 1
Ռ. Յօն Փոխադրութեան նշխա-
րաց Ս. Նիկողայոսի Սքանչելագ.
☽ Ծն. լուսնի. Վճիռ եւ.
10 Դշ. փծ. 39. օր Յինանց. 2
11 ✠ Եշ. փի. 40. օր Յինանց։ 3
ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՔՐԻՍՏՈՍԻ. (վի-
ճակ)։ Եւս Լատ. Ց. և Ռուսաց։
12 Ուր. ած. 41. օր Յինանց։ Պահք։ 4
13 Շբ. աի. 42. օր Յինանց։ 5

| Օ | ՄԱՅԻՍ | Լ |
|---|---|---|
| 14 | ✠ Կիր. բյ. 43 օր. Յինանց: | 6 |
| 15 | Բշ. բի. 44. օր Յինանց։ | 7 |
| 16 | Գշ. գյ. 45. օր Յինանց։ | 8 |
| | ☽ Առ. քառ. լու. Հողմախառն եղ. | |
| 17 | Դշ. գի. 46. օր Յինանց։ Պահք։ | 9 |
| 18 | Եշ. դյ. 47. օր Յինանց։ | 10 |
| 19 | Ուր. դի. 48. օր Յինանց։ Պահք։ | 11 |
| 20 | Շբ. այ. 49. օր Յինանց։ | 12 |
| 21 | ✠ Կիր. աի. Յինանցորդ օր 'ի Զատկէն։ ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ (Պենտեկոստէ)։ Բարեկենդան Եղիական պահոց։ Ռուսաց և Յունաց Նոր Պենտեկոստէ։ | 13 |
| 22 | Բշ. բյ. 2. օր Հոգեգալ. Պահք։ Ռուսաց՝ երկրորդ օր Հոգեգալս. | 14 |
| 23 | Գշ. բի. 3. օր Հոգեգ. Պահք։ | 15 |
| | ◉ Լր. լուսնի. Անձրև։ | |
| 24 | Դշ. գյ. 4. օր Հոգեգ. Պահք։ | 16 |
| 25 | Եշ. գի. 5. օր Հոգեգ. Պահք։ | 17 |
| 26 | Ուր. դյ. 6. օր Հոգեգ. Պահք։ | 18 |
| 27 | Շբ. դի. 7. օր Հոգեգալստեան։ | 19 |
| 28 | ✠ Կիր. այ. Ա. Կիր. Յարութեան։ Յիշատակ Եղիայի Մարգարէին. Տեր. Նախատօնակ։ | 20 |

| Օ | ՄԱՅԻՍ | Լ |
|---|---|---|
| 29 | Բշ. աի. Ս. կուսանացն Հռիփսիմեանց։ Տերեկ. Նախատօնակ։ | 21 |
| 30 | Գշ բյ. Ս. կուսանացն Գայանեանց։ | 22 |
| 31 | Դշ. բի. Պահք։ Տերեկոյեան նախատօնակ։ | 23 |
| | ☾ Վր. քռ. լուս. Անձրևոտ եղ | |

—

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը օրն աւելացել է 1 ժ. 17 րոպէ։

ՄԱՅԻՍ.—Եկաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան ինչպէս արտաքուստ գեղեցիկ է, այնպէս էլ ի ներքուստ հոգով բարի, խելօք, շրջանկատ, մեծահոգի և մասամբ կասկածոտ, ճարպիկ, խորամանկ և ազատ արհեստների սիրահար։ Այդպիսիների սիրտը կարծես սիրոյ և բարեկամութեան համար է ստեղծուած։ Եւ բաղդաւոր են լինում,

եթէ իրենց կեանքը կապում են այնպիսի կնոջ կամ բարեկամի հետ, որոնք նոյնպէս սոյն համաստեղութեան տակ են ծնուած։

Իսկ ծնուած աղջիկը լինում է գեղեցիկ, բարի, պարզ և հեզ։ Իրենից տարիքով փոքր մարդու հետ բախտաւորութիւն չի գտնիլ, բացի իր նման բնաւորութիւն ունեցող պատուական ամուսնուց։

Մայիսին ծնուածներն առհասարակ, մարդ թէ կին, գիտութեանց սիրահար են լինում, գործերի մէջ հմուտ, բնաւորութեամբ դիւրաթեք և փափկամարմին։ Իսկ 31 տարեկան հասակում զգոյշ պէտք է լինեն հիւանդանալուց։

---

# ՅՈՒՆԻՍ

## 30 ՕՐ

Յունիս (լատին. Iunius) ամիսը Հռովմայեցւոց մէջ ի պատիւ պատանեաց նուիրուած էր հպարտութեան չաստուածուհւոյն — Սատուռնոսի դուստր Յունոնային (Հերա), որից և ստացել է իր անունը։ Բացի դրանից juniores բառը լատիներէն նշանակում է երիտասարդութիւն։ Երեւի իբր տարւայ բնութեան երիտասարդ եղանակի յիշատակ. ամառուայ առաջին և Հռոմուլոսի կարգած չորրորդ ամիսն էր։ Այս ամսին մեր նախնիքն անուանում էին Մարգաց։ Երեւի մարգագետիններ հնձելու ամիս, ինչպէս հայոց-դրացի վրացիք այժմ էլ անուանում են այս ամսին Թիբաթվէ, որ կը նշանակէ խոտ հնձելու ամիս։

| Օ | ՅՈՒՆԻՍ | Հ |
|---|---|---|
| 1 | Եշ. գյ. Ս. Յովհաննու Կարապետին և Աթանագինէ եպիսկոպ. | 24 |
| 2 | Ուր. գլ. Պահք: Ցերեկոյեան Նախատօնակ: | 25 |
| 3 | ✠ Շբ. դյ. Ս. ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ մերոյ—Ելն ՚ի Վիրապէն: | 26 |
| 4 | ✠ Կիր. դլ. Բ. Կիր. զկնի Հոգեգ. ՏՕՆ ԿԱԹՈՒՂԻԿԷ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ: (Կատարի Հանդէս յամենայն եկեղեցիս Հայաստանեայց): | 27 |
| 5 | Բշ. ոյ. Ս. մկն. Բեթղեհեմի, Ակակիոսի վկային, Մովկեմայ քահանային և Կոնդրատոսի զինուորին: | 28 |
| 6 | Գշ. ոլ. Ս. կուսանացն Նունեայ և Մանեայ: | 29 |
| 7 | Դշ. բյ. Պահք: | 1 |
| | ● Ծնունդ լս. Տ+ռ եղ: | |
| 8 | Եշ. բլ. Ս. իշխանացն Սահակայ և Յովսէփայ և Ս. վկայիցն Սարգսի և Բագոսի: | 2 |
| 9 | Ուր. փյ. Պահք: | 3 |

| Օ | ՅՈՒՆԻՍ | Հ |
|---|---|---|
| | ☀ Արեգ ՚ի Խեցգետինն մտանէ 9 ժ. 24 ր. երեկ. Ամառնամուտ և արեգադարձ. ցերեկն սկսանի կարճանալ—գիշերն երկարիլ: | |
| 10 | Շբ. փլ. Ս. ՆԵՐՍԻՍԻ ՄԵԾԻ Հայրապետին մերոյ և Խադայ եպիսկոպոսին: | 4 |
| 11 | ✠ Կիր. րյ. Գ. Կիր. զկնի Հոգեգ. Բարեկենդան Ս. Լուսաւորչի պահոց: | 5 |
| 12 | Բշ. րլ. Պահք: Ս. Եպիփանու Կիպրացւոյն, Բաբելայ Հայրապ. և 3 աշակերտացն նորին: | 6 |
| 13 | Գշ. այ. Պահք: Ս. Կոստանդիանոսի Թագաւորին և մօրն նորա Հեղինէի: | 7 |
| 14 | Դշ. ալ. Պահք: | 8 |
| | ☽ Առ. քռ. լս. Տեղ տեղ կարկուտ: | |
| 15 | Եշ. բյ. Պահք: Ս. Թէոդոտոսի Գաղատացւոյն, Թալէլեայ բժշկին և 7 կուսանացն, որք ՚ի յԱնկիւրեայ կատարեցան: | 9 |
| 16 | Ուր. բլ. Պահք: Ցերեկոյեան Նախատօնակ: | 10 |

Օ ՅՈՒՆԻՍ Ն

17 ✱ Շբ. ֆյ. Գիւտ Նշխարաց Ս. ԳՐԻԳՈՐԻ Լուսաւորչին մերոյ: 11

18 ✣ Կիր. ֆե. Դ. Կիր. զկնի Հոգեգալստեան: 12

19 Բշ. տյ. Ծ. վկայից Անտոնինոսի, Թէոփիլոսի, Անիքտոսի և Փոտինոսի: 13

20 Գշ. տե. Ս. Դանիէլի մարգարէին և երից մանկանցն-Սեդրակայ, Միսակայ և Աբեդնագովի: 14

21 Դշ. այ. Պահք: Յերեկոյեան Նաւատօնակ: 15

22 ✱ Եշ. ալ. Սրբոց Թարգմանչացն մերոց ՍԱՀԱԿԱՅ և ՄԵՍՐՈՊԱՅ: 16

☉ Լրումն լուսնի. Տաքեր:

23 Ուր. բյ. Պահք: 17

24 Շբ. բլ. Ս. Տրդատայ թագաւորին մերոյ և Աշխէն տիկնոջն և Խոսրովադխտոյն: Ցեր. նախատ. 18

25 ✱ Կիր. գյ. Ե. Կիր. զկնի Հոգ. Գիւտ Տփոյ Ս. Աստուածածնի: 19

26 Բշ. գլ. Ս. Կալիստրատոսի և 49 վկայիցն և Ղուկիանոսի քահն. 20

Օ ՅՈՒՆԻՍ Ն

27 Գշ. դյ. Ս. Զաքարիայի մարգարէին: 21

28 Դշ. դե. Պահք: 22

29 Եշ. եյ. Ս. Եղիսէի Մարգարէին. Ց. և Ռուսաց Ս. Առաքելոյն Պետրոսի և Պօղոսի: 23

☾ Վր. քռ. լս. Տեղ տեղ ամպեր:

30 Ուր. զյ. Պահք: 24

—

Այս ամսուս 1-ից մինչև 30ը-օրը պակասել է 1 ժ. 24 րոպէ:

ՅՈՒՆԻՍ.—Խեցգետինն: Այս համաստեղութեան տակ ծնուածը լինում է վիճասէր, կամակոր, խորամանկ, մոլի և ամեն դէպքում աւելի իր ինքնահաճոյքին և ցնորքներին հետևող՝ քան առողջ դատողութեանը լսող:

Իսկ այս համաստեղութեան տակ ծնուած աղջիկն ինքնասէր

է գործունեայ, աշխատասէր, զգոյշ, արթուն, ամօթխած, հետաքրքիր, ինքնահաւան և մի քիչ ստախօս։

Յունիսին ծնուածները առհասարակ աչքի են ընկնում իրենց ուշիմ և սրամիտ բնաւորութեամբ։ Ուրիշի սեպհականութիւնից հարստացող են և նշանաւոր մարդկանցից պաշտպանութիւն գտնող։ Գինուց միայն զգուշանալու են.

---

# ՅՈՒԼԻՍ

## 31 ՕՐ

Յուլիսը Հռոմուլոսի կարգադրած տարուայ ամսատուայ երկրորդ ամիսն էր և համարվում էր — Հռոմուլոսեան— տարեշրջանի հինգերրորդ ամիսը։ Թէև այս ամիսը—Հռովմայ Գրիգոր VII պապի ժամանակ կազմեցին Գրիգորեան համարուած տոմարով, բայց այս Յուլիս—այսինքն լատ. Iulius ամիսը—իր անունը ստացել է Հռովմայեցւոց նշանաւոր կայսր Յուլիանոս Կեսարից, որը ծնուել է սոյն ամսուայ 4-ին։ Մարկոս Անտոնիոս եռապետը այդ ժամանակ ի պատիւ Նրա այս ամիսը, Յուլիս անուանեց և Նրա հրամանով էլ ուղղելով օրացոյցը—Յուլիան տարէշրջան անուանեցին։ Մեր նախնիք այս ամսին անուանել են Հրոտից (երևի հուր արձակող

Օ ՅՈՒԼԻՍ Լ

կամ հրային, որովհետև տա-
րուայ ամենաշոգ ամիսն է)։
Իսկ վրացիք անուանում են
Մկաթաթվէ, որ նշանակում է
հնձելու ամիս.
1 Շբ. բյ. Ս. երկոտասանից Առա- 25
քելոցն Քրիստոսի և Ս. Պօղոսի
երեքտասան Առաքելոյն։
2 * Կիր. բէ. Զ. Կիր. զկնի Հոգեգ. 26
Թարեկենդ. Վարդավառի պահոց։
3 Բշ. փյ. 1. օր Վարդավ. պահոց։ 27
4 Գշ. քէ. 2. օր Վարդավ. պահոց։ 28
5 Դշ. տյ. 3. օր Վարդավ. պահոց։ 29
6 Եշ. փէ. 4. օր Վարդավ. պահոց։ 30
☽ Մն. լս. Փոփոխական։
7 Ուր. տյ. 5. օր Վարդավ. պահոց։ 1
8 Շբ. զյ. ՅԻՇԱՏԱԿ ՏԱՊԱՆԱԿԻՆ 2
ՀՆՈՅ և ՏՕՆ ՆՈՐՈՅՍ Ս. ԵԿԵՂԵՑ-
ԻՈՅ։ Նաւակատիք։
9 * Կիր. բյ. ՎԱՐԴԱՎԱՌ։ Մե- 3
ծահանդէս օր ուխտի Մշոյ Ս.
Կարապետ վանքի և Տփխիսայ Ս.
Կարապետ եկեղեցւոյն։ Մէջոց
ուտիք երեք շաբաթ։

Օ ՅՈՒԼԻՍ Լ

10 * Բշ. բէ. Բ օր Վարդավառի։ 4
Յիշատակ մեռելոց։ Մեծահան-
դէս օր ուխտի Ծիրանաւորի Ս.
Աստուածածին եկեղեցւոյն Տփ-
խիսայ (Կրծանիսի)։
☼ Արեգակն 'ի Առիւծն մտանէ։
11 Գշ. փյ. 3. օր Վարդավառի։ 5
12 Դշ. փէ. Պահք։ 6
13 Եշ. գյ. Ս. Եսայեայ մարգարէին։ 7
Ծ Առ. քռ. լս։ Կայծկլտոց։
14 Ուր. դէ. Պահք։ Ցերեկ. նախատ. 8
15 ✠ Շբ. այ. Ս. ԹԱԴԷՈՍԻ Առա- 9
քելոյն և Ս. Սանդխտոյ կուսին։
16 ✠ Կիր. աէ. Բ. Կիր. զկնի Վար- 10
դավառի։
17 Բշ. բյ. Ս. Կիպրիանոսի եպիսկո- 11
պոսին և 45 վկայիցն և Ս. կու-
սանացն Յուստինեայ, Եփիմեայ
և Քրիստինեայ։
18 Գշ. բէ. Ս. Աթանագինեայ եպիս- 12
կոպոսին և տասն աշակերտացն
և հինգ վկայիցն։
19 Դշ. բյ. Պահք։ 13

Օ | ՅՈՒԼԻՍ | Լ

20 Եշ. գյ. Ս. Նախահարցն Աղամայ, Աբէլի, Սեթայ, Ենովքայ, Ենովսայ, Նոյի՝ Մելքիսեդեկի, Աբրահամու, Իսահակայ, Յովսէփայ, Յակովբայ, Մովսէսի, Ահարոնի, Եղիազարու, Յեսուայ, Սամուէլի՝ Սամփսոնի, Յեփթայեայ, Բարակայ, Գեդէոնի և այլոց սրբոց նախահարցն։ 14

21 Ուր. փյ. Պահք։ 15

⊕ Լր. լուսնի. Յօթալից եգ.

22 Շբ. փյ. Ս. որդւոց և թոռանց Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ, Արիստակէսի, Վրթանէսի, Յուսկանն, Գրիգորիսի և Դանիէլի։ 16

Ուսաւոց՝ Ս. Մարիամու Մագդաղենացւոյն։

23 ✠ Կիր. տյ. Գ. կիր. զկնի Վարդ. 17

24 Բշ. տյ. Ս. Մակաբայեցւոցն, Եղիազարու քահանային, Շամունեայ և եօթն որդւոց նորին։ 18

25 Գշ. թյ. Ս. երկոտասանից մարգարէից, Ովսեայ, Ամովսայ, Մի- 19

Օ | ՅՈՒԼԻՍ | Լ

քիայ, Յովելեայ, Աբդիու, Նաւումայ, Ամբակումայ, Յովնանու, Սոփոնիայ, Անգեայ, Զաքարիայ և Մաղաքիայ։

26 Դշ. թյ. Պահք։ 20

27 Եշ. գյ. Ս. Սոփիա և երից դստերացն, Պիստոսի, Ելպիսի և Ագապի։ 21

28 Ուր. գյ. Պահք։ 22

29 Շբ. փյ. Ս. Գրիգորի Աստուածաբանին։ 23

Վր. քռ. լս. Յօթ եգ.

30 ✠ Կիր. տյ. Դ. Կիր. զկնի Վարդ. 24

31 Բշ. տյ. Ս. Կիրակոսի և մօրն նորա Յուղիտայի և Ս. վկայիցն Գորդիոսի, Պոլիկտոսի և Գրիգորեսի։ 25

—

Այս ամսուայ 1-էն մինչև 31-ը օրը պակասել է 1 ժ. 26 րոպէ։

ՅՈՒԼԻՍ.—Առիւծն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան

լինում է պարզամիտ, համարձակ, քաջ, առատաձեռն, ազատամիտ, մեծահոգի և շատ անգամ հպարտ. Իր ազնիւ հոգովը (բնաւորութեամբ) հակուած է դէպի բարեպաշտութիւն և ցաւակցութիւն։ Միևնոյն ժամանակ ծաղրասէր է, ուրիշներին զայրացնող ու կրքոտ։ Արտաքին գեղեցկութեան շնորհիւ, փափուկ սեռին հաճոյանալու կերպը գիտէ և երկար փաղաքշանքներ շռայլելուց յետոյ հասնում է իր նպատակին։

Իսկ ծնուած աղջիկը զուարթ է, շնորհալի, բարկացող, համարձակ, չարամիտ, վրիժառու, բայց սիրելի և իր սիրելիին անչափ մեծարող։

Յուլիսին ծնուածների ամենաբախտաւոր ժամանակն իրենց հասակի միջին տարիքն է և ամենայաջող ամիսն՝ օգոստոսը։ Ամենից վտանգաւոր տարին իրենց հասակի՝ 42-րդ տարին է, որ այդ ժամանակ պէտք է զգուշանալ։

# ՕԳՈՍՏՈՍ

## 31 ՕՐ

Օգոստոս ամիսը Հռոմայեցիք սկզբում անուանել էին Սեկստիլէ, որ լատ. նշանակում է վեցերորդ։ Քրիստոսից 33 տարի առաջ, ի պատիւ Հռովմայեցոց Օգոստոս կայսեր այս ամսուան մէջ տարած նշանաւոր յաղթութիւններու պատճառով անուանեցին Օգոստոս, և էր ամառուայ վերջին ամիսը։ Մեր նախնիք այդ ամսին անուանում էին Նաւասարդ, որովհետև նոր տարուայ առաջին ամիսն էր և տարեթիւր այս ամսուայ 11-ից էին սկսում ի յիշատակ ջրհեղեղի վերջանալուն։ Նաւասարդ, նշանակում է Նաւը-աստ-է-արդ, կամ Նաւը հաստատ արդ։ Սանսկրիտերէն Նովսարդ նոր տարի է նշանակում։

1 Գշ. ղն. Ս. Ղահանայ Գողթ-նացւոյն, Նիգեննեայ կուսին և հօրն նորա Փիլիպպոսի և մօրն Կղօղեայ և երկու եղբարցն Սեր-գիա և Ապիոոնի և երկուց ներ-քինեացն: 26

2 Դշ. թն. Պահք: 27

3 Եշ. թն. Ս. վկայիցն Նիգենիոսի, Մակարիոսի, Վաղերիոսի, Կան-դիտոսի և Ակիւղասայ: 28

4 Ուր. փն. Պահք: 29

5 Շբ. փն. Եփեսոսի Ս. Ժողովոյն Երկու հարիւր հայրապետացն:

☽ Մն. լս. Առաջ. քառ. եղ. 30

6 * Կիր. փն. Ե. Կիր. զկնի Վարդ. Բարեկեն. Ս. Աստուած. պահոց: Ե. և Ռուսաց Վարդավառ: 1

7 Բշ. փն. 1. օր Ս. Ածած. պահոց: 2

8 Գշ ղն. 2. օր Ս. Ածած. պահոց: 3

9 Դշ. ղն. 3. օր Ս. Ածած. պահոց: 4

10 Եշ. թն. 4. օր Ս. Ածած. պահոց: 5

☼ Արեգակն 'ի կոյսն մտանէ:

11 Ուր. թն. 5. օր Ս. Ածած. պահոց: 6



Ըստ տոմարի մերում նաւասարդ և տարեմուտ ՌՅԾԴ եկեղ. և 4405 թ. Բուն Տոմարի:

12 Շբ. փն. Տօն Շողակաթի Ս. ԷՋՄԻԱԾՆԻ, ըստ տեսլեան Ս. Գրի-գորի Լուսաւորչին մերոյ: Նաւա-կատիք: Յերեկոյին նախատօնակ: 7

● Ան. քն. լս. Բոլորակն եղ.

13 * Կիր. փն. ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆ Ս. Աստուածածնի. Զկնի պատարագի կատարի օրհնութիւն խաղողոյ: Ինն օր նախատօնակ: Միջոց ու-տիք չորս շաբաթ: 8

14 * Բշ. փն. 2. օր Վերափոխման: Յիշատակ Մեռելոց: 9

15 Գշ. փն. 3. օր Վերափոխման: 10
Ե. և Ռուսաց Վերափոխումն Ս. Աստուածածնի:

16 Դշ ղն. 4. օր Վերափ. Պահք: 11

17 Եշ. ղն. 5. օր Վերափոխման: 12

18 Ուր. թն 6. օր Վերափ. Պահք: 13

19 Շբ. թն. 7. օր Վերափոխման: 14

20 * Կիր փն. 8. օր Վերափոխման 15

● Լրումն լս. Տեղ տեղ անձրեւ։
21 Բշ. փյ. 9. օր Վերափոխման։ 16
22 Գշ. փծ. Ս. Յովակիմայ և Աննայի ծնողաց Ս. Աստուածածնի և կանանցն Իւղաբերից։ 17
23 Դշ. փկ. Պահք։ 18
24 Եշ. ոյ. Ս. Երեմեայ մարգարէին 19
25 Ուր. ոկ. Պահք։ 20
26 Շբ. բյ. Ս. Առաքելոյն Թովմայի։ 21
Յերեկոյին նախատօնակ։
Լատ. Ծնունդ Ս. Աստուածածնի։
27 ✱ Կիր. բկ. Գ. Կիր. զկնի Վերափ. Գիւտ Գօտւոյ Ս. Աստուածածնի։ 22
◐ Վր. քառ. լս. Փոփոխական եղ.
28 Բշ. փյ. Ս. Ստեփաննոսի Ուլնեցւոյն և Ս. վկայիցն Գոհարինեայ, Տամրղէսի, Տուքիկոսի և Թարիկոսի։ 23
29 Գշ. փկ. Ս. մարգարէիցն Եզեկիելի, Եզրի և Զաքարիայի հօրն Ս. Յովհաննու Մկրտչի։ 24



Ե. և Ռուս. Գլխատումն Ս. Յովհաննու Կարապետին.
30 Դշ. փծ. Պահք։ 25
Ռուսաց՝ Փոխադրութիւն նշխարաց Ս. Ալէքսանդր Նեւսկացւոյ։
31 Եշ. փկ. Ս. Յովհաննու Կարապետին և Յոբայ արդարոյն։ 26

—

Այս ամսուայ 1-էց մինչև 30-ը օրը պակասել է 1 ժ. 24 րոպէ։

---

ՕԳՈՍՏՈՍ.—Կոյսն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան բարեկազմ է, անկեղծ, մեծահոգի, խելօք, ողջախոհ, համեստ և բարեգործ։ Կեանքի մէջ վարուելու կերպը չիմանալով ու ամէն տեսակ հնարքներից զուրկ լինելով շուտ-շուտ խաբւում է և յափշտակւում։

Իսկ ծնուած աղջիկը ամօթխած

է, ժաւժկալ, աչքերը գեղեցիկ և երեսի գծագրութիւնը որոշ։ Նուազ կ'ամուսնանայ, իր ընտանիքում սիրելի, բարեպաշտ, հաւատարիմ և աննման մայր կըլլինի, եօկ իւր որդիքը, որոնք աւելի իգական սեռին կը պատկանին, նոյնպէս մինը միւսից աւելի գգուելի ու գեղեցիկ կը լինին։

---



# ՍԵՊՏԵՄԲԵՐ

## 30 ՕՐ

Սեպտեմբեր ամսույ անունը ծագում է Լատինական (septembre) բառից։ Այսպէս անուանեց Հռոմուլոսը տարուայ եօթներորդ ամիսը, որ աշունքուայ առաջին ամիսն էր։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Հոռի։

1 Ուր. ոՁ. Պահք։ 27

2 Շբ. ոԺ. Ս. Առաքելոցն Յակոբայ և Շմաւոնի։ 28

3 ✣ Կիր. ԲՅ. Դ. Կիր. զկնի Վերափոխման։ 29

⊕ Ծն. լս. Անդրեյ։

4 Բշ. ԲԼ. Ս. Անդրէի զօրավարին և բանակի նորին, Կալինիկոսի և Դոմետեայ վկայիցն։ 1

5 Գշ. ՓՅ. Ս. Անդրիանոսի և կնոջն նորա Անատոլայ, Թէոդորոսի և Եւթիքոսի վկայիցն։ 2

6 Դշ. ՓԼ. Պահք։ 3

Օ **ՍԵՊՏԵՄԲԵՐ** Լ

7 Եշ. դդ. Ս. Աբրահամու և Խորենայ անարծաթ բժշկացն. Կոզմայի և Դամիանոսի։ Ցերեկոյեան նախատ. 4

8 * Ուր. դվ. Պահք։ Տօն Ծննդեան Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻՆ 'ի յԱննայէ. —Եւռ3. և Ռուսաց։ 5

9 Շբ. ադ. Տօն Նիկիոյ Սուրբ ժողովոյ 318 հայրապետացն։ 6

10 ✠ Կիր. ավ. Ժ. Կիր. զկնի Վերափոխման։ Բարեկենդան Ս. Խաչի։ 7

☀ Արեգ. 'ի Կշեռն մտանէ։ 12 ժ. 25 րոպ. առաւ. Աշնանամուտ և հաւասարակաց—Տիւ և գիշեր հաւասար։

◐ Առ. քռ. լռ. Անհաստատ եղ.

11 Բշ. բդ. 1. օր Ս. Խաչի պահոց։ 8

12 Գշ. բվ. 2. օր Ս. Խաչի պահոց։ 9

13 Դշ. գդ. 3. օր Ս. Խաչի պահոց։ 10

14 Եշ. գվ. 4. օր Ս. Խաչի պահոց։ Ռուսաց՝ Խաչվերաց։ 11

15 Ուր. դդ. 5. օր Ս. Խաչի պահոց։ 12

16 Շբ. դվ. Տօն Ս. Եկեղեցւոյս ի Նա- 13

Օ **ՍԵՊՏԵՄԲԵՐ** Լ

ւակատիս Ս. Խաչին։ Նաւակատիկ։

17 * Կիր. ադ. ԽԱՉՎԵՐԱՑ։ 14
Լատինաց՝ Տօն Ս. Գրիգորի Լուսաւորչին մերոյ ի սահմանս Հռոմայ և Նէապոլսոյ։

18 * Բշ. ավ. 2. օր Տօն Ս. Խաչի։ 15
Յիշատակ մեռելոց։

● Լրումն լուսնի. Զով եղ.

19 Գշ. բդ. 3. օր Տօն Ս. Եկեղեցւոյ։ 16

20 Դշ. բվ. 4. օր. Տօն Ս. Եկ. Պահք։ 17

21 Եշ. գդ. 5. օր Տօն Ս. Եկեղեցւոյ։ 18

22 Ուր. գվ. 6. օր Տօն Ս. Խաչի։ Պահք 19

23 Շբ. դդ. 7. օր Տօն Ս. Խաչի։ 20

24 ✠ Կիր. դվ. Բ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Բարեկենդան Վարագայ Ս. Խաչի։ 21

25 Բշ. ադ. Պահք։ Ս. Մամասայ, Փիլիկտիոնի և Սիմէոնի Սիւնակեցւոյն։ 22

26 Գշ. ավ. Պահք։ Ս. կուսանացն Փեփրոնեայ, Մարիանեայ և Շուշանայ դստեր մեծին Վարդանայ։ Ռուսաց՝ Ննջումն Ս. Յովհաննու Աւետարանչին։ 23

Օ **ՍԵՊՏԵՄԲԵՐ** Լ

● Լր. լս. Չորեքշաբթի՝ Ժը.
27 Դշ. ԲՅ. Պահք։
28 Եշ. Բկ. Պահք։ Ս. Հայրապե-
տացն Բարսղամու, Անթիմոսի և
Երանոսի։
29 Ուր. ՓՅ. Պահք։
30 Շբ. Փկ. Ս. Գէորգայ զօրավա-
րին, Արգոկտոսի և Իւմանոսի Նե-
գեցողին։ Հանդիսաւոր օր ուխտի
Տփխիսայ մերձակայ Տաննարագ
(Ս. Գէորգ եկեղ.) ուխտատեղոյն։
Անուանակոչութիւն Վեհափառ
Տ.Տ. Գէորգ Ե. Ամ. Հ. Կաթողիկոսի։
Ռուսաց՝ Ս. Գրիգորի Լուսաւոր-
չին Մրոյ և Ս. Կուսանացն Հռիփ-
սիմեանց և Գայիանեանց։

—

Այս ամսոյս մէկից մինչև 30-ը
օրը պակասել է 2 ժ. 14 րոպէ։

---

ՍԵՊՏԵՄԲԵՐ.—Կշիռն։ Այս հա-
մաստեղութեան տակ ծնուած
տղան վիճասէր է, կամակոր,
ծաղրաբան և սաստիկ իւր բա-
ւականութեանց ետևից ընկնող.
ունի և լաւ ձեռք, ճաշախօսու-
թեան ձիրք, բարեհամբոյր է,
միայն երբ իւր շահերը պահան-
ջում են՝ իւր տուած խոստումը
շատ հեշտ է դրժում և իւր ու-
նեցած զգաստութեան շնորհիւ,
շատ վտանգներից հեշտութեամբ
զերծ մնում։
Իսկ ծնուած աղջիկը օրինակ է,
ուրախ, հրապուրիչ ձևերով օժ-
տուած, բախտաւոր և բազմա-
թիւ երկրպագուներ ունեցող.
միայն զգաստ պէտք է լինի, ո-
րովհետև վերջն անպատճառ
զղջալու է։
Սեպտեմբերին ծնուածներն առ-
հասարակ ինչպէս 33 տարեկան
հասակում, այնպէս էլ ջրից միշտ
զգուշանալու են։

—

Օ Ն

# ՀՈԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

Հին ժամանակները Հռոմում, այս ամսի 15-ին ի պատիւ պատերազմի չաստուած Մարսի, զոհաբերում էին նժոյգներ և Հռոմուլոսի կարգաւորած տարուայ ութերորդ ամիսն լինելով, այս պատճառաւ անուանուեցաւ octobre, որ լատիներէն նշանակում է ութերորդ։ Այս ամիսը աշունքուայ միջի ամիսը լինելով, հին ազգերի մէջ այս ամսում կատարվում էին ժողովրդական տօներ—հանդէսներ, դաշտային աշխատանքի աւարտման և այգեկոյթի պատճառաւ։ Իսկ այս ժամանակ որովհետև Կովկասում այգեկոյթ է լինում, ինչպէս ժողովուրդը ասում է (թաղաքաղ) և գինի են քամում, դորա համար էլ մեր գրացի վրացիք այս ամսին ուղղակի անուանում են Ղվինօբիսթվէ, գինիներու-ամիս։ Մեր նախնիք այս ամսին անուանում էին Սահմի։

Օ ՀՈԿՏԵՄԲԵՐ Ն

| Օ | | Ն |
|---|---|---|
| 1 | * Կիր. փջ. Գ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Տօն Վարագայ Ս. Խաչին։ Ց. և Ռուսաց՝ Պաշտպանութիւն Ս. Աստուածածնի։ | 28 |
| 2 | Բշ. փէ. Ս. Դաւթի Դվնեցւոյն և Ս. վկայիցն Ղամբէոսի և Ղամբէուհեւոյն։ | 29 |
| 3 | Գշ. ոյ. Ս. Եւստաթէոսի և կնոջ նորա Թէոփիստոսի և երկուց որդւոցն և կուսանացն Երմոնեայ և Նեքտառինեայ։ | 30 |
| | ☽ Ծն. լս. Մեծ եղ. | |
| 4 | Դշ. ոէ. Պահք։ | 1 |
| 5 | Եշ. բջ. Ս. Իշխանացն Սահակայ և Համազասպայ։ | 2 |
| 6 | Ուր. բէ. Պահք. | 3 |
| 7 | Շբ. գջ. Ս. Եօթանասուն և երկու աշակերտացն Քրիստոսի։ | 4 |
| 8 | * Կիր. գէ. Դ. Կիր. զկնի Ս. Խաչի։ | 5 |

Օ **ՀՈԿՏԵՄԲԵՐ** Ն

9 Բշ. գջ. Ս. Փոկասու հայրապետ-ին և Երանոսի հեռաւորին Առա-քելոյն։ 6
10 Գշ. գէ. Ս. կուսանացն Թեկղի, Վարվառեայ և Պեղագեայ։ 7
☉ Արեգակն 'ի Կարիճն։
☽ Առ. քառ. լս. Թխպոտ եղ.
11 Դշ. աջ. Պահք։ 8
12 Եշ. աէ. Ս. Պանտալէոնի բժշկին, Երմողեայ քահանային և Եւպրակ-սեայ կուսին։ 9
13 Ուր. բջ. Պահք։ Ցեր Նախ. 10
14 * Շբ. բէ. Ս. Թարգմանչաց վար-դապետացն մերոց Մեսրոպայ, Եղիշէի, Մովսէսի քերթողին, Դաւթի անյաղթ—փիլիսոփային, Գրիգորի Նարեկացւոյն և Ներ-սէսի Կլայեցւոյն։ 11
15 * Կիր. գջ. Ե. Կիր. զկնի Ս. Խաչի։ 12
16 Բշ. գէ. Գիւտ նշխարաց Ս. Գրիգո-րիսի Աղուանից կաթողիկոսի և Ս. Հարցն Թովմայ, Վարոսի և Թումասու, Անտոնի Կրօնաւորեալց և

Օ **ՀՈԿՏԵՄԲԵՐ** Ն

եօթն խոստովանողացն՝ որք Ց'ենեակինն այվանոն կատարեցան։
17 Գշ. գջ. Ս. Առաքելոցն Անանիայի Մատթէի, Բառնաբայ, Փիլիպպո-սի, Յովհաննու, Շիղայի և Սիւղիա-նոսի։ 14
18 Դշ. գէ. Պահք։ 15
☉ Նր. լս. Անձրեւոտ եղ.
19 Եշ. աջ. Ս. Դիոնեսիոսի Արիսպա-գացւոյն, և Ս. Առաքելոցն Տիմո-թէոսի և Տիտոսի։ 16
20 Ուր. աէ. Պահք։ 17
21 Շբ. բջ. Ս. Աւետարանչացն Մատթէոսի, Մարկոսի, Ղուկա-սու և Յովհաննու։ 18
22 * Կիր. բէ. Զ. Կիր. զկնի Ս. Խաչի։ Ռուսաց՝ Տօն Ղազանու Ս. Աստուա-ծածնայ պատկերին։ 19
23 Բշ. գջ. Ս. Ղուկիանոսի հարիւ-րապետին որ հաւատաց 'ի Խաչե-լութիւնն Քրիստոսի և Յովսէփայ Աստուածահօրն. Յովսէփայ Արի-մաթեացւոյն, բարեկամին Քրիս- 20

տոսի Ղազարու և քերցն նորա Մարթայի և Մարիամու։

24 Գշ. գլ. Ս. Թէոդիտոնի քահանային, Զենոնի զինուորին, Մակարայ Եւդոքսեայ և Ռոմիլայ։ 21

25 Դշ. փձ. Պահք։ 22

26 Եշ. փլ. Ս. Խարիթեանց և Ս. վկայեցն Արտեմեայ և Քրիստափորի և երկուց կանանցն Կալինիկեայ և Ակուլինեայ։ 23

☽ Վր. քռ. լռ. Խոնաւ եղ.

27 Ուր. փջ. Պահք։ 24

28 Շբ. փկ. Ս. Երկոտասանից վարդապետացն Հիերոթէոսի, Դիոնեսիոսի, Սեղբեստրոսի, Աթանասի, Կիւրղի Երուսաղէմացւոյն, Եփրեմի Խորին Ասորւոյ, Բարսեղի Կեսարացւոյն, Գրիգորի Նիւսացւոյն, Գրիգորի Աստուածաբանին, Եպիփանու Կիպրացւոյն, Յովհաննու Ոսկեբերանին և Կիւրղի Աղէքսանդրացւոյն։ 25

29 ✱ Կիր. փձ. Է. Կիր. զկնի Ս. Խաչի։ 26
Գիւտ—Խաչ։



30 Բշ. բլ. Ս. Անաստասայ քահ. Վարոսի և Թէոդորիտեայ և որդւոց նորա և որք ընդ նմա կատարեցան։ 27

31 Գշ. գձ. Ս. Հիպիրիքեանցն, որք ի Սամոսատ կատարեցան և որքն Սեբաստիանոսի Սեբաստացւոյն, Բարեկեայ ծերոյն և 84 աշակերտացն նորին։ 28

—

Այս ամսոյս 1-ից մինչև 30-ն օրն պակասել է 2 ժ. 10 րոպէ։

---

ՀՈԿՏԵՄԲԵՐ.—Կարիճ։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան համարձակ է և խորամանկ, բայց իւր պակասութիւնները ծածկելով՝ իւր արտաքին գեղեցկութեամբ խաբում է և շատերի աչքը շլացնում։ Օրիորդներ, այսպիսի կեղծաւորներին երբէք չհաւատաք դրանք միայն երեսանց են ուրախ երևում, այդ-

պտուղների ծիծաղը փառաւոր է, այգեստաներ և առանձնութեան ժամանակ դրանք մելամաղձութեամբ են տանջւում։

Իսկ ծնուած աղջիկը՝ աշխոյժով լի, առոյգ, ծածկամիտ, կեղծաւոր, դաւաճան, փոփոխամիտ և արագ, սիրում է ծաղրել և ուրիշների մասին վատ կարծիք յայտնել։ Եւ չնայելով իր քաղցրանկատութեան ու բարեհաճոյ ձևերին՝ սիրոյ բարութեամբ չէ համակուած։

Հոկտեմբերին ծնուածները տաղանդաւոր իրենց գործերում յաջողութիւն են գտնում և հարըստութիւն են ձեռք բերում։ Ա[illegible] կան հատկութիւնն է, որ թէ իրենց բնաւորութիւնն է փոփոխւում դէպի լաւը և թէ իրենց գործերի մէջ փոփոխութիւն է լինում։ Միայն 25 տարեկան հասակում [illegible] զգուշանալու են։

---

## ՆՈՅԵՄԲԵՐ

### 30 ՕՐ

Նոյեմբեր ամս. անունը ծագում է լատին. Novembre բառից, որ նշանակում է իններորդ։ Հռովմայեցիք այս ամիսը անուանել են իններորդ նրա համար, որ շատ առաջ նրանք նոր տարին ոչ թէ Յունուարից էին հաշվում ինչպէս յիմայ, այլ Մարտ ամսից։ Մեր նախնիք այս ամիսը անուանել են Տրէ։ Իսկ Վրաստանում, որովհետև այս ամսուայ 10-ին տօնվում է Ս. Գէորգայ տօնը, սորա համար էլ, այս ամիսը անուանել են Գիօրգօբայ, կամ Գէօրգոբիս-թվէ, որ նշանակում է Գէորգայ-տօնի ամիս։

1 Իշ. փէ. Պահք. 29

Ⓓ Մոռանգ. եղա. Աշխանոյին եղ.

2 Ուր. դէ. Ս. Յովհաննու Ոսկեբերան Հայրապետին։ 1

Օ ՆՈՅԵՄԲԵՐ Ն

3 Ուր. փէ. Պահք:
4 Շբ. ոյ. Տօն ամենայն սրբոց— 2
հնոց և նորոց, յայտնից և ան- 3
յայտից:
5 ✠ Կիր. ոյ. Ը. Կիր. զկնի Ս. Խաչի:
6 Բշ. բյ. Ս. Ստեփաննոսի Հռոմայ 4
հայրապետին և քահանայից, 5
սարկաւագաց և ժողովրդոց:
7 Գշ. բէ. Ս. Ակիփսիմեայ եպիսկ. 6
Յովսէփայ քահ. Այթալայ սար-
կաւագին և Պղատոնի վկային:
8 Դշ. փյ. Պահք:
Լուս. Ընծայումն Ս. Աստուածած. 7
9 Եշ. փէ. Ս. Հայրապետացն Մետ- 8
րոփանոսի, Աղէքսանդրոսի, Պօ-
ղոսի խոստովանողին և Ս. Նոտա-
րացն Մարկիանոսի և Մարտիրոսի:
⊕ Արեգ. 'ի Աղեղնաւորն մտանէ:
☽ Առ. քա. լս. Խոնաւ եղ.
10 Ուր. փյ. Պահք: Ցերեկ. Նախատ. 9
11 Շբ. փէ. Ս. Հրեշտակապետացն 10
Գաբրիէլի և Միքայէլի և ամե-
նայն երկնային զօրացն:

Օ ՆՈՅԵՄԲԵՐ Ն

12 ✱ Կիր. ոյ. Թ. Կիր. զկնի Ս. Խաչի: 11
13 Բշ. ոէ. Ս. Մելիտոսի Անտիոքայ 12
հայրապետին և Մենասայ Եգեպ-
տացւոյն և միւս Մելիտոսի եպ.
Բուրայ քահանային և Տենու
սարկաւագին:
14 Գշ. բյ. Ս. Դիմիտրեայ վկային 13
և Բասիլէկոսի քահանային:
15 Դշ. բէ. Պահք: 14
16 Եշ. գյ. Ս. Գուրիասայ, Սամո- 15
նասայ, Աբիբայ սարկաւագին,
Ռոմանոսի միայնակեցւոյն, Ման-
կանն խոստովանողի և Հիւսիքո-
սի գինուորին:
17 Ուր. գէ. Պահք: 16
⊕ Նր լս. Ջնօբեր հողմամբ:
18 Շբ. փյ. Ս. Առաքելոցն Անդրէի 17
և Փիլիպպոսի:
19 ✱ Կիր. փէ. Ժ. Կիր. զկնի Ս. 18
Խաչի: Բարեկենդան Յիսնակի
պահոց:
20 Բշ. ոյ. 1. օր Յիսնակի պահոց: 19
Ցերեկոյեան Նախատօնակ:

| 0 | ՆՈՅԵՄԲԵՐ | Հ |
|---|---|---|
| 21 | ✠ Կր. ակ. Ձ. օր Յիսնակի պահոց. ԸՆԾԱՅՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ի Տաճարն. — Եւս Յ. և Թուսաց։ | 20 |
| 22 | Դշ. բէ. 3. օր Յիսնակի պահոց։ | |
| 23 | Եշ. բէ. 3. օր Յիսնակի պահոց. | 21 |
| 24 | Ուր. գէ. 5. օր Յիսնակի պահոց. Ծ Լր. փռ. յս. Թամնակ ծչ. | 22<br>23 |
| 25 | Շբ. գէ. Ս. Գրիգորի Սքանչելագործին. Նիկողայոսի Հայրապետին և Միւռոնայ եպիսկոպոսին. | 24 |
| 26 | ✠ Կիր դէ. Ա. Կիր. Յիսնակի. | |
| 27 | Բշ. դէ. Ս. կուսանացն Ռափա-նեայ և Կամայինեայ. | 25<br>26 |
| 28 | Գշ. ղէ. Ս. Դուկիանոսի քահանային և Տարաքոսի, Պրոբոսի, Անդրոնիկոսի, Անտոնինայ և այլոց տասներեքացն Պաղասի. | 27 |
| 29 | Դշ. ոէ. Պահք։ | |
| 31 | Եշ. թէ. Ս. Աբեմայ Հայրապետին և Բարսաումայ Տաւրոնեայ եպիսկոպոսին. | 28<br>29 |

—

Այս ամսուայ 1-էց մինչև 31-ն օրը պակասել է 1 ժ. 19 րոպէ։

ՆՈՅԵՄԲԵՐ.— Աշխղնաւորն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան քաջ է և արի, խելօք, բարեկամներ շատ գտնող, առողջակազմ, ճշմարտասէր, հաստատամիտ, փարթամ, աշխատասէր, ի բնէ բարեպաշտ, սրտով ուրախ, բարի և իւր ունեցած լաւ յատկութիւններին համեմատ՝ անչափ ինքնասէր։

Իսկ ծնուած աղջիկը՝ գործունեայ և աչալուրջ, աշխատասէր, բարեպաշտ, բարի և սրտով ուրախ։ Գիտար պակասութիւնը իւր կատարեալ յիմարութիւնն է։

Նոյեմբերին ծնուածները առհասարակ առողջական թեան մէջ խախտար են լինում և միջին տարիքում կարգութեան ․․․ 33 տարեկան համաձայն հրամաղիանայ ․․․ ընդունած են և եթէ չափաւոր ու ժուժկալ կեանք վարեն մինչև խորին ծերութեան կը հասնեն։

Օ Հ

# ԴԵԿՏԵՄԲԵՐ

## 31 ՕՐ

Դեկտեմբեր ամիսը վերցրած է լատինական dectembre բառից, որ նշանակում է տասներորդ: Այսպէս անուանեց ամիսների հիմնադիր Հռոմուլոսը տարուայ տասներորդ ամիսը: Մեր նախնիք այս ամիսը անուանել են Քաղոց: Որովհետև Վրաստանում այս ամսի 25-ին կատարվում է Քրիստոսի Ծննդտօնը, այս պատճառաւ այս ամիսը վրացիք անուանել են Քրիստիշոբայ, կամ Քրիստիշոբիսթվէ, որ նշանակում է Քրիստոսի Ծննդեան ամիս:

1 Ուր. բյ. Պահք: Ցերեկ. Նախատ. 30

2 ✠ Շբ. գյ. Ս. Առաքելոց և առաջին Լուսաւորչացն մերոց ԹԱԴԷՈՍԻ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍԻ: 1

☽ Ծն. լս. [illegible]

3 ✠ Կիր. գյ. Բ. Կիր. զկնի Յիսնակի: 2

Օ Հ

## ԴԵԿՏԵՄԲԵՐ

4 Բշ. դյ. Ս. Գենարիոսի եպիսկոպոսին և Մերկերիոսի զինուորին. 3

5 Գշ. դյ. Ս. ԱԲԳԱՐՈՒ Նախավկայ և անդրանիկ Թագաւորին մերոյ: 4

6 Դշ. ոյ. Պահք: 5

7 Եշ. ոյ. Ս. Հարցն Եգիպտացւոցն, Պօղոսի, Պօղայ, Մակարայ, Եւագրի, Յովհաննու Գռնեցւոյն, Յովհաննու կարճահասակին, Նեղոսի, Արսէնի, Սիսիանու, Դանիէլի, Սրապիոնի, Մակարիոսի, Պիմէնի և այլոց Ս. Հարցն: 6

8 Ուր. բյ. Պահք: Ցերեկոյին Նախատօնակ: 7

☽ Առ. քռ. լս. [illegible]

9 ✠ Շբ. բյ. ՏԵԱՌՆ ՅՂՈՒԹԻՒՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ Ի ՅԱՆՆԱՅԷ: 8

☼ Արեգակն'ի յԱյծեղջիւրն մտանէ 12 ժ. 59 ր. երեկ. Ձմեռնամուտ և արեւադարձ. ցերեկն սկսանի երկարել և գիշերն կարճանալ:

10 ✠ Կիր. գյ. Գ. Կիր. զկնի Յիսնակի: 9

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| | Բարեկենդան Ս.Յակոբայ պահոց | |
| 11 | Բշ. ֆէ. Պահք։ Ս. Մինասայ, Երմոգինեայ և Գրափոսի և կամաւոր աղքատացն Յովհաննու և Աղէքսիանոսի։ | 10 |
| 12 | Գշ. ֆէ. Պահք։ Ս. Կոռնելիոսի հարիւրապետին և Շմաւոնի ազգականին Քրիստոսի, որ խաչեցաւ յԵրուսաղէմ, Պօղիկարպոսի հայրապետին Զմիւռնիոյ և Ս. վկայիցն, որք յ'Սրեմլու կատար. Լատ. Ծնունդ Տեառն։ | 11 |
| 13 | Դշ. ֆէ. Պահք։ | 12 |
| 14 | Եշ. ֆէ. Պահք։ Ս. Եւստրատիոսի, Օգսենտիոսի, Եւգենիոսի, Որես-տէսի և Մարդարիոսի։ | 13 |
| 15 | Ուր. ֆէ. Պահք։ Յերեկոյին Նախատօնակ։ | 14 |
| 16 | Շբ. ֆէ. Ս. Յակոբայ Մծբնայ հայրապետին, Մարուգէի Ճգնաւորին և Մելիտոսի եպիսկոպոսին։ ⊕ Լր. լս. Մրբնոլոյց եգ. | 15 |
| 17 | ✠ Կիր. ֆէ. Դ. Կիր. զկնի Յիսնակի։ | 16 |

| Օ | ԴԵԿՏԵՄԲԵՐ | Լ |
|---|---|---|
| 18 | Բշ. ֆէ. Ս. Հայրապետացն Իգնատիոսի, Ագդէի և Մարութայ եպիսկոպոսին։ | 17 |
| 19 | Գշ. ֆէ. Սրբոց Թէոպոմպայ եպիսկոպոսին, Թէոնեայ վկ. և չորից զինուորացն Բասոսի, Եւսեբի, Եւտիգի և Բասիլիկեայ։ Ըստ Նոր տոմարի Տարեմուտ և յունուարի 1-ն 191× թ. Լատ. տօն Տնօրէնութեան Տեառն։ | 18 |
| 20 | Դշ. ֆէ. Պահք։ | 19 |
| 21 | Եշ. ֆէ. Ս. Ինդոսի, Դոմնի և Գղերիկոսի, քահանային և երկուց Բիւրոցն, որք այրեցան եկեղ. Նիկոմիդացւոց։ | 20 |
| 22 | Ուր ֆէ. Պահք։ Երեկ. Նախատ. | 21 |
| 23 | Շբ. ֆէ. Ս. Դաւթի մարգարէին և Յակոբայ առաքելոյն։ ☽ Վր. քռ. լս. Բժալէց եգ. | 22 |
| 24 | ✠ Կիր. ֆէ. Ե. Կիր. զկնի Յիսնակի։ Երեկ. Նախատօնակ։ Ռուս. Ճրագալոյց Ծննդեան։ Լատ. Յայտնութիւն տեառն։ | 23 |
| 25 | Բշ. ֆէ. Ս. Ստեփաննոսի Նախա- | 24 |

վկային և առաջին մարտիրոսին։
Հանդիսաւոր օր ուխտի Ս. Ստե-
փաննոս եկեղ. Տփխիսայ՝ որ ՚ի
յանապատին կուսանաց, ուր է
ամփոփել մաս նշխարաց—աջ Ս.
Ստեփաննոսի Նախավկային։
Ցերեկ. Նախատօնակ։
Ռուսաց՝ Ծնունդ Տեառն։

26 Գ.. փյ. Ս. Առաքելոցն Պետրոսի 25
և Պօղոսի: Յ. և Ռ. 2 օր Ծննդեան։

27 Դշ. փէ. Պահք: Ցերեկ. Նախատօն. 26
Ց. և Ռ. 3 օր Ծննդեան։

28 Եշ. փյ. Ս. որդւոցն Որոտման 27
Յակովբայ առաքելոյն և Յովհան-
նու Աւետարանչին։
Բարեկենդան՝ Ծննդեան պահոց։

29 Ուր. փէ. Պահք։ 28

30 Շբ. ավ. 1 օր Ծնդ. պահոց։ 29
Ս. Բարսեղի հայրապետին և եղ-
բօր Նորին Գրիգորի Նիւսացւոյն
Սեղբեստրոսի Հռովմայ հայրա-
պետին և Աբբա Եփրեմի Խո-
րին Ասորւոյ։
Յ Ծնունդ լռ. Դոռնոյեանց եղ.



31 * Կիր. ավ. 2. օր Ծննդ. պահոց։ 30
Զ. Կիր. զկնի Յիսնակի։

Այս ամսուայ 1-ից մինչև 31-ը
օրը պակասել է 0 ժ. 37 ր.

ԴԵԿՏԵՄԲԵՐ.—Այծեղջիւրն։ Այս համաստեղութեան տակ ծնուած տղան թէև այնքան բախտաւոր չի լինիլ և ձախորդութիւններ շատ կ'քաշէ, բայց ճշմարտասէր, թեթևամիտ, եռանդոտ, չար, ագահ և անբարիշտ կլինի։ Իր մասին մեծ համարում ունի. թէև համեստ է երևում, սակայն դա միայն արտաքին կողմից է և կեղծ, որովհետև իր ամեն բա-ւականութեանց սիրահար է։

Իսկ ծնուած աղջիկը՝ արթուն, թեթևամիտ, ջահել ժամանակը վերին աստիճանի ամօթխած, սակայն վերջը համարձակ և շատ խառնակիչ, պաակուած ժամա. Նաև ես խանդոտ՝ թէև այս պա-կասութիւնները միշտ աշխատում

է ծանկել: Եթէ չափաւոր և զգոյշ լինի մինչև խորին ծերութեանը կըհասնի:

Դեկտեմբերին ծնուածները, առհասարակ իրենց գործերում խելօք են և խորհուրդների մէջ զգոյշ. սիրում են գիտութիւններ և միշտ հակուած են դէպի ճանապարհորդութիւն: Առևտրից օգտուող, իսկ շինութիւններից վնասուող: Պէտք է միայն 25 տարեկան հասակում հիւանդանալուց զգուշանան:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Եթէ երբեմն եղանակի գուշակութիւնները ճիշտ չեն կատարւում, այդ պատահում է երկրի աշխարհագրական դիրքից և օդերևութաբանական զանազան պատճառներից, նամանաւանդ, պարբերաբար ուղղութեամբ փչող հողմերի կամ ցիկլոնների ժամանակ և մթնոլորտի յեղաշրջման (пертурбаціи) դէպքերում:

Ծ. Աշխ.

# ՅԱՒԵԼՈՒԱԾ

## «ՏՈՑԻ-ՕՐԱՑՈՅՑԻ»

## I. ԱՍՏՂԱԳԻՏԱԿԱՆ.

### 1917 Թ. ԱՐԵՒԻ ԵՒ ԼՈՒՍՆԻ ԽԱՒԱՐՈՒՄՆԵՐԸ

1) Արևի մասնաւոր խաւարումն յունվ. 10-ին, սկիզբը 8 ժ. 43 ր. առ. վերջը 12 ժ. 9 ր.

2) Արևի մասն. խաւար. յունիսի 6-ին, սկիզբը 1 ժ. 35 ր., երեկ. վերջը 5 ժ. 47 ր. երեկոյեան:

3) Արևի մասն. խաւար. սկիզբը յուլ. 6-ին 1 ժ. 56 ր. առ. վերջը 6 ժ. 28 ր. առ.

4) Արևի մանեկաւոր խաւարումն դեկ. 1-ին, սկիզբը 11 ժ. 41 ր. առ. վերջը 1 ժ. 12 ր. ցերեկուայ:

5) Ամբողջովին լուսնի խաւարումն 21-ից 22 ն յունիսի, սկիզբը 9 ժ. 35 ր. երեկ. վերջը 3 ժ. 21 ր. առ.

6) Լուսնի լիակատար խաւարումն 15 դեկտ. սկիզբը 9 ժ. 53 ր. առ., վերջը 3 ժ. 28 ր. երեկ.:

Այս բոլոր խաւարումներից Կովկասում կնկատուի միմիայն լուսնի խաւարումն յունիսին, այն էլ մասնաւոր:

# II. ՕԴԵՐԵՒՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ

## ԷՖԷՄԷՐԴՈՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ 1917 Թ. ՄԱՍԻՆ

Առաջիկայ տարուայ ընթացքում եղանակը կը լինի—Գարունն՝ թէև անձրևային, սակայն ախորժելի։ Ամառն՝ հով, անձրևներ, վերջը երաշտ։ Աշնանը տարուայ եղանակի հողմերը կը փչեն։ Իսկ ձմեռը սկզբումը բարեխառն, գետերի վարարում, վերջը քամոտ է խիստ ցուրտ, որից շատ գաղաններ կը սատկեն։

Պտղաբերութեան կողմից.—Գինու առատութիւն. տունկ կամ ծառ տնկելը խիստ յաջողակ, դաշտերը լի ամեն տեսակ արմատեղէն բոյսերով, ծառերը պտղաբեր, պտուղները քաղցրահամ ու շուտ հասնող. սակայն շտապելու է, պտուղները շուտ քաղել ու հաւաքել, որ անձրևներից չփչանան։

Առողջապահութեան կողմից.



—Երեխաների մէջ տկարութիւն. Խոշոր տեսակի անասունների կոտորած և շատ շների սատկել։

Կենցաղավարութեան կողմից.—Շատերը իրանց հայրենիքից տարագիր լինելով, հեռու երկիրներ կը չուեն ու կը դաղթեն. ճանապարհները ու նաւերը փախստականներով լի կը լինեն։ Շատ վէճեր ու վաճառականութեանը վնաս հասցնող դէպքեր տեղի կունենան։

Իսկ քաղաքականութեան կողմից.—Շատ տեղ խռովութիւններ, տարաձայնութիւններ, սպանութիւններ ու զանազան տեսակ վնասներ առաջ կը գան։ Ասորիքում տրտմութիւն. Բաբելոն ժողովրդի մէջ շարժում։ Իսկ ինչպէս Յունաստանից, այնպէս էլ ուրիշ շատ տեղերից զօրքը ելնելով, շատ նահանգներ ու քաղաքներ ոտի տակ կը տայ ու կը աւերի։ Տեղի կունենան թագաւորների կեանքին սպառնացող դէպքեր ու արիւնահեղ պատերազմներ։

# III. ԻՄԱՍՏՆԵՐ

—Նա է յետ մնում, ով չի յառաջադիմում.

—Մարդու ամենամեծ քամբաղդութիւնը, տգիտութիւնից զրկուելն է:

—Կեանքի մէջ ազնիւ մարդիկ, փափուկ բարձեր են, խորամանկ ու չարահոգի մարդկանց համար.

—Միայն այն խօսիր, ինչոր քեզ համար պարզ է, ապա թէ ոչ լռիր:

—Կեանքը—հիւանդութիւն է, որից մեզ թեթեւացնում է քունը, իսկ իսկական դեղը—մահը.

—Ամենահարուստ մարդը—խնայողն է, ամենաաղքատը—ժլատը:

—Աշխարհը վերջ ունի, միայն ոխերիմ թշնամին է, որ վերջ չունի.

—Կինը՝ ինչպէս իր համոզմունքները է հեշտ կազմում, ճիշդ այնպէս էլ հեշտութեամբ փոխում.

—Կանանց համար ամենադժուարը



իրանց սխալանքների խոստովանութիւնն է:

—Կինը երկու բանից սաստիկ խուսափում է, աղքատութիւնից և ծեր մարդկանց շրջանից.

—Մեծ մասամբ կանանցից անօգուտ է երեք բան պահանջել, արդարութիւն, զսպողութիւն և խելամտութիւն.

—Ոչ ոք չի կարող իմանալ, թէ չար կինը, դեռ ինչքան կարող է նա ընդունակ լինել:

—Կանանց մօտ երբեք ձեր կեանքից դէպքեր չպատմէք գեղեցկուհիների մասին, համոզուած եղէք, որ տանուլ կտաք.

—Կինը հօ նրա համար չի վիճում, որ մի բանում ցանկանում է համոզել, այլ որ ցոյց տայ գիտէ վիճել:

—Նշանաւոր իմաստուններից մինն ասել է որ մարդիկ ամենաշատ զոհը տուել են և շարունակում են տալ, փոփոխամիտ ու յաճախ իրենց դաւաճանող կանանցը.

# IV. ԱՌԱԾՆԵՐ

(Արեւելեան իմաստասէրներից)

—Մի թշնամիդ աւելի շատ է, քան հազար հոգի բարեկամներդ։

—Բարութիւնը, բարութիւնով նեղ տեղով էլ է անցնում, միայն չարութիւնն է շուրջն ամեն տեղ ապականում։

—Թշնամուցդ բաւական է միանգամ զգուշանաս, իսկ բարեկամներիդ հետ միշտ կապուած լինելով, պէտք է հազար անգամ զգուշանաս։

—Հին բարեկամդ հազիւ թէ կարողանայ քեզ թշնամի դառնալ, իսկ եթէ թշնամանայ էլ, այդ նրան չի սազիլ։

—Թէկուզ թարս նստիր, միայն մի ստախօսիր։

—Քան թէ անցնես անպիտան մար-



դու կամրջից, աւելի լաւ է ջուրը տանի քեզ միանգամից։

—Առանց պատճառի, մարդու քեզ հետ մի թշնամացնիր։

—Այսօրուայ ձուն, էգուցուայ հաւից լաւ համարիր։

—Լաւ է խելօք թշնամի, քան յիմար բարեկամ։

—Արիւնը արիւնով չեն լուանայ։

—Շունը շան միս չի ուտիլ։

—Թող կերածս ըլի դարի, թաք գլուխս ըլի հանգիստ ու բարի։

# V. ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ

## Եղունգների լեզուն։

Հասարակութեանը յայտնի չէ, որ եղունգները, մարդու առողջութեան, ամենաճիշտ որոշողն են հանդիսանում, մանաւանդ թոքերի, սրտի, ջղերի և ողնաշարա-ուղեղային մասնաւորապէս ժառանգական հիւանդութեանց դէպքերում։ Երկար եղունգներ ունեցող մարդիկ սովորաբար ուրիշներից յաճախ են ենթարկվում թոքային—շնչառութեան գործարանների հիւանդութեանց, այնպէս որ, շատ երկար եղունգներ ունեցող մարդու առողջութիւնը մեծ մասամբ միշտ թոյլ է լինում։ Այն մարդու, որի երկար եղունգների վրայ սկզբից մինչև ծայրը նկատվում է գծեր (ребришки), նա, հարբուխի և հազի ժամանակ շատ զգոյշ



պէտք է լինի։ Շատ երկար եղունգների կապտագոյն լինելը, նշան է թոյլ կազմուածքի և անկանոն արիւնապարձութեան։ Շատ կարճ եղունգները հաստատում են սրտի թոյլ գործունէութիւնը, մանաւանդ, այս այն ժամանակ աւելի է ճշտվում, երբ սպիտակ եղունգի կիսակամարը հիմքից շատ փոքր է լինում, կամ երբ հազիւ նկատվում։ Եղունգների մէջ ընդ մէջ եղած խորը ակօսները—նշան է մօտիկ անցեալում այդ մարդուն հասած ջղային գրութեան սաստիկ խանգարման։

Շատ նեղ եղունգները ցոյց են տալիս ողնաշարի թուլութիւն։

Խիստ ծուռը և բարակ եղունգները, հետևանք են ողնաշարի ծռուած-կեռացած լինելուն և մարմնի շատ թոյլ կազմութեան։

Այն մարդուն, որի եղունգները շատ տափակ են, և կարծես քանի մօտենում են ծայրին, ափերից հեռանում են— կարող է ստանալ անդամալուծութիւն։

# VI. ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

## Հացը տաք-տաք գործածելու վնասակարութիւնը։

Նոր թխած հացը, ինչ ալիւրից էլ որ պատրաստուած լինի, դա միևնոյն է, սակայն տաք-տաք ուտելու դէպքում, ստամոքսը փչացնում է ու փափկացնում։ Սրան ապացոյց է, թէ ինչպէս հացի մէջ եփուած կամ թխուած ոսկորը փափկանում և դառնում ցեղճ (ղրղրճան, хрящъ).

Առողջութիւնը չվտանգելու համար, պէտք է, մէկ օր առաջ թխուած հաց գործածել։

—

## ԾԻԾԱՂ ԵՒ ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ

—

Վաղ ժամանակից մարդուն զբաղեցրել է այն հարցը, թէ ինչպէս պահ-



պանի իր առողջութիւնը և երկարացնի իր կեանքը։

Այս մտքով, ինչպէս յայտնի է, շատ միջոցներ ու շատ կանոններ են առաջարկուած, մինչև վերջին Մեչնիկովի մածունը։

Ամերիկացի յայտնի ֆիզիկոս դր. Լուիս Գետչինսոնը մօտ ժամանակներս մարդկանց ուշադրութիւնը հրաւիրեց երկարակեցութեան մի նոր ֆակտորի վրայ,—այն է՝ լաւ տրամադրութեան վրայ։

Նա ասում է.

«Քիթդ կախ մի՛ շրջի, մի՛ մտածիր կեանքի անաջողութիւնների մասին, մի՛ թոյլ տար, որ զայրոյթը և խանդը թունաւորեն քո հոգին, այլ ծիծաղիր, ուրախացիր, որոնիր խնդուն զուարճութիւններ,—և երկար կապրես դու հողի վրայ։

Այս է նրա բեցէպտը կամ դեղատոմսը։

Իբրև գիտնական, դ.-ր Գետչինսոնը բնական-գիտական բացատրութիւն է տալիս ծիծաղի բարերար ներգործութեանը մարդկային օրգանիզմի վրա։

Երբ մենք ժպտում կամ ծիծաղում ենք, այդ ժամանակ ուժեղանում է մեր արեան շրջանառութիւնը և թեթևանում սննդի մարսողութիւնը։

«Ամբողջ սրտից» ծիծաղը հովահրում է թոքերի բոլոր խորշերը, ցնցում է ուսերը, շփում է լեարդը, հարթում է կնճիռները, արիւնը քշում է ամբողջովին դէպի կաշին, մաքրում է աչքերը և ուժեղացնում է պոլօճիկների գործողութիւնը։ Կարճ ասած՝ ծիծաղը երիտասարդացնող մի վաննայ է, որից յետոյ հասակաւոր մարդը իրան զգում է երեխայ, թարմ և ջահել արարած։



Իսկ վատ տրամադրութիւնը, ընդհակառակը, ինչպէս խլուրդ փորում է մեր առողջութեան լաւագոյն հիմքերը։

Դ.-ր Գետչինսոնի ասելով, մանրադիտակային հետազօտութեամբ կարելի է ապացուցել, որ վախը, չարութիւնը, վհատութիւնը և այլ նման բաները քայքայիչ ներգործութիւն են ունենում մարդու օրգանիզմի վրա։ Կարելի է ապացուցել, որ երիկամունքների (պլօճիկների) փոքրիկ գեղձերը վախի կամ զայրոյթի ժամանակ բաժանում են երեք տեսակ զանազան հեղուկներ։ Դրանցից մէկը ուժեղացնում է սրտի գործողութիւնը և ամբողջ մարմինը պատրաստում է պայքարի կամ վազքի։ Միւսը լայնացնում է արիւնատար երակները, լցնելով արիւնով—որով և բացատրվում է դէմքի կարմրելը յուզմունքի ժամանակ և այլն։

Օրգանիզմի նորմալ դրութիւնը խանգարող այս խախտումները կրկնվելով կարող են լուրջ կերպով կոտրել մարդու առողջութիւնը։

Դ.-ր Գետչինսոնը նախազգուշացնում է միայն մի տեսակ ծիծաղից—չարախինդ ծիծաղից։ Այդ ծիծաղը հենց պատճառ է լինում վերոյիշեալ թոյների բաժանման, ուստի և սաստիկ վնասակար է։

---



# VII. ԲԺՇԿԱԿԱՆ

Զկռտալու դեմ.—Մի փոքր մաս հասարակ կերակուրի աղ ցանել լեզուին և թուքի հետ կուլ տալ—կլանել, կամ թէ մի փոքր ժամանակ շնչառութիւնը պահել։

—

Սրտի այրեցու (կմշտելու, отжога) դէմ, որը ստամոքսում գտնուած թթուածնի աւելորդութիւնից է առաջանում, պէտք է ջրով ընդունել 20—30 կաթիլ օշինդր խոտից պատրաստած թրմոց (настой полины), կամ անանուխի կաթիլներ (мятныя капли)։

Կէս թէյ գդալ սոդան կամ մագնեզեան ևս լաւ է օգնում։

—

—Մեղուների կամ վնասակար թիթեռների խածնելու դէմ օգտակար է

Վնասուած տեղը բարկ-թունդ քացախով կամ մաղդանոսի թարմ հիւթով օծել։

Սխտորի կամ սոխի բարակ կտրած կտորը կպցնելուցն ետ ցաւը անցնում է։

—

Կատաղած շան նշանները. —Շունը իր տիրոջը չի ճանաչում, երբ կանչում են չի մօտենում, առանց պատճառի յարձակւում է պատի վրայ, կամ դիմացը դրուած առարկային։ Երևում է վրան անսովոր անհանգստութիւն, ճնշուած ու տխուր է տեսքը և հաջոցը դժուար ու խռպոտ։ Ապա սկսում է, ոչ ուտել, ոչ հաչել, որովհետև արդէն վրայ է հասնում կոկորդի անդամալուծութիւնը։ Սաստիկ ծարաւութիւն է զգում, որից ամբողջ ժամեր մինչև անգամ կաթնի ափսէն լակելով, միայն փրփուրն է բերանից թափում, չկարո-



ղանալով մի կաթիլ կլանել։

Կասկածելի շներին պէտք է անմիջապէս հեռացնել մարդկանցից կամ շղթայել, որովհետև աւելի լաւ է շանը մի քանի օր կապած պահելու, քան թէ սարսափելի տանջանքներով մարդը մեռնելու։

—

Ուշաթափութեան դէպքում, ամենից առաջ հիւանդին մաքուր օդ շնչելու համար, պէտք է այնպէս պառկացնել, որ ոտքերը գլխից բարձր դիրք ունենայ։ Իսկ շնչառութա չփինելու համար, զուցէ հագուստից կամ այլ պատճառից քիթը բռնուած է, և չլինի թէ բերանը փակուելով չկարողանայ շնչել, կամ լեզուն ճմռուել, անհրաժեշտ է բերանի-ատամների արանքում գդալ դնել—պահել և շատ շատ նշադրի սպիրտ կամ բարկ-քացախ հոտո-

տել տալ։ Միևնոյն ժամանակ պէտք է փորին զգուշութեամբ ձեռքով վրահարել և արհեստական շնչառութիւն առաջացնել։

—

**Կայծակը խփածին** անմիջապէս հանդերձը զգուշութեամբ հանելու է, որպէս զի այրուած տեղերը չպոկուեն։ Ապա հիւանդին մէջքի վրայ պառկացնելով, սառը ջուր սրսկելու է և ոտքի անդամները սառը ջրով թաց արած սաւանով հարելու։

Անհրաժեշտ է նաև շտապել արհեստական շնչառութիւն առաջացնել, և գրգռիչ դեղեր գործածել։

—

### Ստամոքսը մտած իրը դուրս հանելու միջոց։

Եթէ պատահմամբ մի որևէ պինդ իր, կամ մարմին կլանուի (կուլ տուայ), որը



կարող է աղիքներին վնաս հասցնել. այդ պատճառով անմիջապէս աշխատելու է, որքան կարելի է շուտ, մեծ քանակութեամբ եփուած կարտոֆիլ ուտել, որը իր մէջ փաթաթելով—առնելով վնասող իրը, անվնաս դուրս է հանում ստամոքսից։

—

**Ամենախիստ սառնամանիքներին չցրտահարուելու համար**, տանից դուրս ելնելիս, պէտք է երեսը և ձեռքերը հարել գլիցերինով կամ վազելինով։

———

## VIII. ՏԱՆՏԻԿԻՆ

Հաւկիթի թարմութիւնը իմանալու ամենահաստատ միջոց։ Պէտք է մի թէյի բաժակ ջրում 5 մսխալ (զոլոտնիկ) հասարակ աղ լուծել, որի մէջ ձգելով թարմ ձուն խորասուզւում է, իսկ փչացած ձուն, ինչպէս աւելի թեթև ջրի երեսին լողում։

—

Ժամանակից գունատուած (խունացած) ապակէ ամանները հեշտութեամբ մաքրւում են և իրանց սկզբնական գոյնն են ստանում, եթէ հասարակ նաւթով լաւ մաքրում են և մի քանի անգամ ջրով ողողում։

—



## XI. ԱՐՈՒԵՍՏ

Դիմացկուն շրէշ։

Ընտանեկան գործածութեան մէջ շատ յաճախ [illegible] կաւորվում է առհասարակ ալիւրի[illegible]շ կամ օսլայ։ Բայց երկուսն էլ շատ շուտ են փչանում։ Այսպիսի շրէշներին երկար ժամանակ պահելու համար, պէտք է մի փոքր անանուխի կամ սկիպիդարի բնահիւթ (էսէնցիայ) խառնել, որից թէև շրէշը պնդանում է, սակայն մի փոքր թրջելուց յետոյ անմիջապէս հալւում։ Եթէ մի փոքր քացախ էլ խառնուի, նոյնպէս առանց փչանալու երկար է պահւում։

—

Ծխից չխեղդուելու դէպքում պէտք է, բերանին ու քթին ջրով թըրջած մաքուր թաշկինակ, կամ մի որևէ լաթի կտոր կապել։

# X. ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

Նորածին կենդանիներին կաթը ճամբելու միջին ժամանակամիջոցը՝

Որպէս զի Նորածին կենդանիք լաւ կազդուրուեն, պէտք է թոյլատրել իրանց մօր ստինքից կաթը ծծելու հետեւեալ հաշւով·

| | | |
|---|---|---|
| Խոզերին . . . . . | 7 | շաբաթ |
| Այծերին . . . . . | 8 | » |
| Կովի հորթերին . . . | 10 | » |
| Ձիերու քուռակն. . . . | 15 | » |
| Իշու . . . . . . . | 16 | » |
| Գառներին . . . . . | 17 | » |

—

Կենդանիներից ընտիր սերունդ սեռուելու համար առհասարակ պէտք է ընտրել·

| | |
|---|---|
| Գառան . . . . | 2-ից 6 տարեկանը |
| Ոչխարի. . . . | 2-ից 8 » |



| | | | | |
|---|---|---|---|---|
| Խոզինը . | 9 ամսից | մինչև | 7 | տարեկ. |
| Վարազի . | 1 տարեկ. | մինչ. | 4 | » |
| Կովինը . . | 18 ամսից | » | 10 | » |
| Եզան (բուղի) | 2 տարեկ. | » | 7 | » |
| Մատակ ձիու | 4 » | » | 12 | » |
| Ձիու . . | 4 » | » | 15 | » |

—

Գիւղատնտեսական չափերը·

| | |
|---|---|
| Մի դոյլ ջուրը քաշում է | 30 գրվ. |
| » » կաթը » | 31 » |
| Գարու ռուսական չետվերիկը | 38 » |
| Ցորենի » » | 1 փութ 8 » |
| Սիսեռի » » | 1 » 10 » |
| Հարիւր հատ այրած աղիւսը | 20 փութ |

# XI. ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ

Կենդանիների յղութեան և թուխս նստելու տեւողութիւնը։

| | |
|---|---|
| Դեղձանիկը . . . . . . . | 14 օր |
| Հաւը . . . . . . . . | 21 » |
| Հնդկահաւը . . . . . . . | 26 » |
| Սագը . . . . . . . | 29 » |
| Բադը . . . . . . . | 30 » |
| Մուկը . . . . . . . | 30 » |
| Ճագարը . . . . . . . | 30 » |
| Աանէտը . . . . . . . | 31 » |
| Թութակը . . . . . . . | 40 » |
| Կարապը . . . . . . . | 42 » |
| Կատուն . . . . . . . | 54 » |
| Կտուան . . . . . . . | 55 » |
| Աղուէսը . . . . . . . | 62 » |
| Շունը . . . . . . . | 63 » |
| Գայլաշունը . . . . . . . | 64 » |
| Կատուառիւծը . . . . . . | 73 » |



| | |
|---|---|
| Առիւծը . . . . . . . . | 100 » |
| Խոզը . . . . . . . . . | 120 » |
| Կողբը . . . . . . . . | 4 ամիս |
| Այծը . . . . . . . . | 5 » |
| Ոչխարը . . . . . . . | 5 » |
| Կովը . . . . . . . . | 5 » |
| Արջը . . . . . . . . | 6 » |
| Կապ'կը . . . . . . . . | 7 » |
| Ոնգեղջիւրը . . . . . . | 9 » |
| Ձին . . . . . . . . . | 11 » |
| Էշը . . . . . . . . . | 12 » |
| Գոմէշը . . . . . . . . | 12 » |
| Ուղտը . . . . . . . . | 12 » |
| Ընձուղտը (ժիրաֆ) . . . . | 14 » |
| Փիղը ծնում է . . . . . . | 21 ամսից |

Պատահում են յղութեան անբնական տեւողութեան դէպքեր, օրինակ

Ձիունը 339 օրից մինչև 419-ն
Տաւարի 21 — — 321
Ոչխարների ու այծերի 145—168
Խոզերինը . . . . . 102

# XII. ԽԱՌՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

### Հետաքրքիր հայր։

Սիբիրի Գեաչանսկ անունով գիւղում բնակվում է Ղազար Աֆանասեվիչ Գակլանովը, որի տարիքը 115 անց է և պսակված է երկրորդ ամուսնութեամբ։ Այդ երկու ամուսնութիւնից նրանից ծնուել է քառասուն և չորս երեխայ։

—

### Ոսկու գլխաւոր շուկան։

Ամերիկեան Միացեալ Նահանգները մի տարուայ ընթացքում 1915 թ. յուլիսի 1-ից մինչև յունիսի 30-ը 1916 թ. արտահանութիւնը հասել է 4345 միլիօն դոլարի, որ հաւասար է 8½ միլիարդ ռուբլու, ըստ վերջին օրերի կուրսի 13½ միլիարդի։ Այսպիսով ոսկու գլխաւոր շուկան ներկայումս փոխադրվել է Եւրոպայից Ամերիկայ, ո-



րովհետև Միացեալ Նահանգների առև-տուրը գերազանցել է Անգլիայի առև-տրին ամբողջ 40%, իսկ Գերմանիա-յինը 65%։

—

### Թիֆլիսի անկարգութիւնների հետևանքը։

1916 թ. յուլիսի 5—6 ին տեղի ունեցած անկարգութիւններից (погромы) մի շարք առևտրական տների և խանութների կրած վնասները։ Այսպէս, մանուֆակտուրային առևտրականներից վնասվել են.— եղբ. Միլեանների առևտ. տունը 500,000 ռուբլու, Դօրօժնովի առևտրատունը 80,000 ռ., Օհանեան և ընկ. (Միքայէլ. պրոս.) մօտ 100,000 ռ., եղբ. Գրիգորեանցների (Միք. փող.) 15,000 ռ., Կիրակոսեան և Օհանեանի (Միք. փ.) 50,000 ռ., Կոզո-

րէզօվի առևտ տունը (Կիրօչնայա փ.) 50,000 ր., Ղլթճեան (Ձերքեզ. փ.) 25,000 ր., Օհանեան (Ձերքեզ. փ.) նոյնպէս 25,000 ր. և ուրիշ.: Հագուստեղէնի խանութներից վնասվել են եղբ. Սաֆարեան և Տէր-Սահակեաններ (Գօլովինսկի պր.) 20,000 ր., Ա. Յարութիւնեան (Վօրօնցօվի մօտ) 10,000 ր., Թառայեան (նոյն տեղում) 10,000 րուբլի: Կօշկեղէնի խանութներից վնասվել են. «Էլեգանտը» (Միքայէլեան փ.) 50,000 ր., Յ. Կ. Օհանեան (Վօրօնցօվի մօտ) 10,000 ր., Դիլանեան (Միքայէլեան փ.) 25,000 ր., Պապայեան (Վերայի վերևը) 50,000 ր., Մուխրանեան փողոցի վրա գտնվող կօշկեղէնի երեք խանութներ՝ Մալինեանինը, Տէր Օհանեանինը և Օֆիցէրսկինը՝ վնասվել են 15,000 րուբլու, Խանդուլեանի երկաթեղէնի խանութը (Գանքի և Մուխ-



րանեան փողոցների անկիւն) 25,000 ր.: Գալանտերէյնի ապրանքի խանութներից՝ Ժամհարեանինը (Միքայէլեան փ.) վնասվել է 50,000 ր., Մակարեանինը և Շահբուդաղեանի 50,000 ր. և Ս. Աբովեանի բակալէյնի խանութը (Միքայէլեան փ.) 50,000 ր.: Միայն այս վաճառականների կրած վնասների մօտաւոր հաշիւը անցնում է 1,200,000 րուբլուց: Հաշւված չեն վնասները 26 առևտրականների (պաշտօն. հաղորդ. համաձայն), որոնք պատկանում են պակաս վնասվածների թւին:

# XIII. ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ

Համաշխարհային նշանավոր անցքերի և պատմության.

Քրիստոսի ծննդից առաջ.

12000 Աշխարհի առեղծագործությունը —ըստ եւրոպացոց (Թեև գիտնականները միլիոնավոր տարիներ են հաշվում):
5509—Ըստ Աստվածաշնչի.
3246 Ջրհեղեղ.
2492 Հայ ազգի սկզբնավորությունը.
1750 Բաբելոնի աշտարակաշինությունը
1651 Մովսես մարգարեն ծնվում է.
1600 Ապակու գյուտը.
806 Արծաթ փողի գործածությունը.
384 Արիստոտելը ծնվում է.
149 Արշակունեաց թագավորության սկիզբը Վաղարշակից.
10 Հռոմ. հնարում են սապոն եփելը.



Քրիստոսից հետոյ.

Յիսուս Քրիստոսը ծնվում է.
34 Յիսուս Քրիստոսը խաչվում է.
» Հայերն ընդուն. են քրիստոնէութ.
41 Առաք. գրում են Աւետարանը.
257 Ս. Գրիգոր Լուսաւորչի ծնունդը.
303 Ս. Էջմիածնի հիմնելը.
304 Պարսիկները ձեռնարկում են Թիֆլիսի Նարիղալայ բերդի շինութ.
321 Մարտի 7-ից սկսում է Կիրակին տոնելը.
325 Առաջին տիեզերական Ս. ժողով.
328 Կ. Պոլսի հիմնարկությունը.
381 Կ. Պոլսի տիեզերական Ս. ժողովը.
400 Եւրոպայի եկեղեցեաց մէջ զանգակի գործածությունն սկսում է.
406 Մեսրոպը գտնում է հայոց գիրը.
431 Եփեսոս. երրորդ տիեզ. Ս. ժողովը
446 Վրացիք սկսում են գործածել մոր

Ս. Մեսրոպի հնարած այբուբենը (խուցուրին)։

451 Քաղկեդոնի ժողովը։

451 Վարդանանց պատերազմը (յունիս)։

458 Վարդանի դուստր Շուշանիկը նահ. և թաղ. է Թիֆ. (Մետեխի բերդ.)։

551 Մովսէս կաթ. հրամանով Աթ. Տարոնացին յօրինում է եկեղ. տօմարը։

570 Մահմեդը ծնւում է։

597 Վրացիք հայերից բաժանւում են։

850 Լատինացւոց եկեղեցեաց մէջ երգեհոն գործածելն սկսւում է։

862 Ռուսաց տէրութեան սկիզբը։

924 Բագրատունեաց թագ. սկիզբը։

1080 Ռուբինեանք նորոգում են Հայոց թագաւորութիւնը Կիլիկիայում։

1147 Կաթողիկոսական Աթոռը տեղափոխւում է Անուց Հռոմկլայ—Կիլիկ.։

1173 Ս. Ներսէս Շնորհալու մահը։

1323 Անի քաղաքի կործանումը։

1338 Վառօդը գտնում են։



1365 Ասեղը հնարւում են։

1380 Թնդանօթի գիւտը։

1384 Լենքթեմ. արշաւանքն. Ասիայում։

1393 Հայոց թագաւորութ. վերջանալը։

1441 Կաթողիկոսական Աթոռը վերջնականապէս փոխադր. Ս. Էջմիածին։

1492 Կոլոմբոսը գտնում է Ամերիկան։

1500 Ծոցի ժամացոյցը հնարում են։

1518 Պարսից Իսմայիլ-Շահն առնում է Թիֆլիսը և Մցխէթը։ Հաւլաբարի կամրջի մօտ էլ մզկիթ է շինում։

1524 Մակարիայի տօնավաճ. բացումը։

1552 Ամանների կլեկելը հնարւում է։

1567 Վենետիկում տպագրւում է առաջին հայերէն Սաղմոսը։

1603 Շահ-Աբասի հայերին գերի տանելը Պարսկաստ.—(Ջուղայի գաղթելը)։

1689 Շոգեշարժ մեքենաների գիւտը։

1779 Օդապարիկը հնարում են։

1785 Ժորժ Ստեփենսոնն առաջին շոգեկառքը շինում է։

1795 Աղա Մահմադ խանը յարձակւում է Թիֆլիսի վրայ և աւերում։
1799 Վրաց Գէորգի XIII-ը յանձնում է Վրաստանը Ռուսաստանին։
1800 Ջօնսոնը գտնում է մարմնի պատուաստումը։
1803 Շոգենաւի գիւտը։
1839 Տալբոթ անգլ. հնարել է լուսանկ.
1841 Առաջին հեռագիրը շինում են Վաշինգտօնից Բալտիմօր։
1848 Ելեքտր. հեռագիրը հնարում են։
1851 Առաջին ռեւոլվերը շինւում է։
1861 Ստրկութեան ոչնչացումը։
1862 Սուէզեան ջրանցքի բացումը։
1877 Էդիսոնը հնարում է ֆոնոգրաֆը։
1878 Սան-Ստեֆ. դաշնագրութիւնը։
» Բերլինի դաշնագրութիւնը որտեղ ստորագրում են և հայոց ինքնավարութեան 61-րդ յօդուածը.
1879 Ելեքտրակ. լապտերների հնարելը։
1880 Տելեֆոնի գիւտը։



1896 Հայկական կոտորածները Տաճկաստանում։
1900 Իտալացի Մանկօնին գտաւ առանց թելի հեռագիրը։
1905 Կովկասեան փոխարքայ գրաֆ-կոմս Իլար. Իվ. Վարանցով-Դաշկովի ժամանումն Թիֆլիս։
» Բարձրագոյն Հրաման Ռուսաստանի սահմանադրութեան։
1906 Հայ-թրքական կոտորածը։
1907 Պարսկաստանում յայտարարւում է սահմանադրութիւն։
1908 Տաճկաստանում սահմանադրութեան հրատարակութիւնը։
1912 Բալկանեան պատերազմը։
1913 Համազգային 1500 տարերի գիւտի և տպագր. 400 ամեայ յոբելեանը։
1914 Գերմանիայի ու Աւստրիայի պատերազմը ընդդէմ Սերբիայի, Չեռնագորիայի, Ռուսաստանի, Բելգիայի, Անգլիայի, Ֆրանսիայի և Ճապօնիայի։
1915 Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչի Կովկասի Փոխարքայ նշանակվելը։

18 յուլ. Գերմանիան՝ վերջնագիր է ուղղում Ռուսաստանին։

19. Ընդ. զորաժողով՝ Գերմանիայում։

Ընդհանուր զորաժողով՝ Ֆրանսիայում։

Գերմանիան պատերազմ է հայտարարում Ռուսաստանին։

20 յուլ. գերմանական զորքը անցնում է ֆրանսիական սահմանը։

Լյուքսեմբուրգը գրավում են Գերմանացիք։

Բելգիան պատերազմ է հայտարարում Գերմանիային։

22 յուլ. Գերմանացիք մտնում են Բելգիա։

23 յուլ. Անգլիան պատերազմ է հայտարարում Գերմանիային։

24 յուլ. Ավստրիան պատերազմ է հայտարարում Ռուսաստանին։

26 յուլ. Ռուսաց Պետ. Խորհրդի ու Դումայի պատմական նիստը։



27 յուլ. Չեռնոգորիան պատերազմ է հայտարարում Ավստրիային։

31 յուլ. Ֆրանսիան ու Անգլիան պատերազմ են հայտարարում Ավստրիային։

7 օգոստ. Գերմանացիք գրավում են Բելգիական Բրյուսել քաղաքը։

10. Ճապոնիան պատերազմ հայտարարեց Գերմանիային։

7 հոկտ. Բելգիական կառավարությունը տեղափոխվեց Ֆրանսիայի Հավր քաղաքը։

19. Տաճիկները դավաճանորեն հարձակվում են Ռուսաստանի Սև ծովի, ծովեզրյա քաղաքների վրա։

20. Ռուսաստանը, Ֆրանսիան ու Անգլիան պատերազմ են հայտարարում Տաճկաստանին։

21. Դաշնակիցները սկսում են ռմբակոծել Դարդանելի ամրությունները։

24. Ճապոնացիք գրաւում են Ցին-Դաօն։

Տաճկաստանում սկսվում է խառնութիւններն ու կոտորածը հայերի դէմ.

26 Սկսվում է հայերի աղէտալի գաղթականութիւնը։

23 Նոյեմբ. Գերմանացիք գրաւում են Լօձ քաղաքը։

4 դեկ. Տաճիկների պարտութիւնը Սարաղամիշում։

1915 թ.

22 յունվ. Սուէզեան ջրանցքի մօտերքը ճակատամարտ։

8 փետր. Գերմանացիք պաշարում են Անգլիայի ափերը։

2 մարտի, Ամբողջ Տաճկաստանում սկսվում է գլխովին հայերի բնաջնջման սիստեմատիկ գործողութիւնները։

19. Ռուսաց գրահակիր նաւերը, ռմբակոծում են Բոսֆորը։



5 ապրիլի, Հայոց Կաթողիկոս Գէորգ Ե-ը Տաճկահայերի բնաջնջման առթիւ պաշտպանութեան խնդրով դիմում է մեծ պետութեանց։

24. Գերմանացիք խորտակում են «Լուզիտանիա» շոգենաւը։

25. Գերմանացիք գրաւում են Լիբաւան։

6 մայիսի. Ռուս-հայկական բանակը մտնում է Վան։

10. Իտալիան պատերազմ է յայտարարում Տաճկաստանին։

25. Գերմանացիք գրաւում են Վարշաւը։

23 օգոստ. Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայեվիչը նշանակվում է Կովկասի Փոխարքայ և Կովկասեան զօրքի ու ռազմաբեմի ընդհանուր հրամանատար։

10 հոկտ. Բօլղարիան պատերազմ է յայտարարում Սերբիային։

7. Ֆրանսիան, Անգլիան ու Ռուսաստանը պատերազմ են յայտարարում Բուլղարիային։

8. Աւստրօ-գերմանական զօրքը գրաւում է Բելգրադը։

1916 Թ. 3 յուն. Ցաճկական 3-դ զօրագնդի պարտութիւնը Կովկասի ռազմաբեմում։

10 յունվ. Չեռնոգորիայի կառավարութիւնը անցնում է Ֆրանսիա Լիօն քաղաքը, իսկ Սերբիականը Կորֆու կղզին։

Փետ. 4. Կարինը ռուսները գրաւեցին։

» 6. Ռուս. գրաւեցին Մուշը և Աքաթը։

» 20 Ռուսն. յարձակ. առան Բիթլիսը։

» 27. Գերմանիան Պորտուգալիային պատերազմ յայտարարեց։

Մարտի 5. Ռուսն. պատերազմով գրաւեցին Մամախաթուն քաղաքը։

» 10. Իսպահանը առան ռուսները։



» 17. Ռուսները գրաւեցին Մշու Ս. Կարապետի վանքը։

Ապր. 6. Տրապիզոնը գրաւեցին ռուսները։

» 8. Ռուսական զօրքը ֆրանսիականի հետ գերմանացւոց դէմ պատերազմելու համար ափ իջաւ Մարսելիայում։

Ռուսները գրաւեցին Բայբուրթը և Երզնկան։

Օգ. 14. Իտալիան Գերմանիային պատերազմ յայտարարեց։

» 15. Աւստրիան ու Գերմ. Ռումինիային պատերազմ յայտարարեցին։

» 17. Ցաճկաստանը Ռումինիային պատերազմ յայտարարեց։

» 19. Բուլղարիան Ռումինիային պատերազմ յայտարարեց։

# XIV. ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

## ա) ԳՆԵՐԸ *)

| | II դ. | III դ. |
|---|---|---|
| Թիֆ. ուղ. Մոսկուա | 24—40 | 15 ր. |
| » » Ս. Պետերբ. | 27 ր. » | 18 » |
| » » Վարշաւ | 26 » » | 18 » |
| » » Պոդվոլոչինսկ | 25 » » | 17 40 կ |
| » » Ալէքսանդրօպօլ | 28 » » | 18 50 « |
| » » Վլադիվաստ. | | |
| » » Ռոստով (Դոնի) | | 13—70 |
| Վլադիկաւկազ. Պետեր. | » » | 14 40 կ. |
| Պետերբուրգէց Պարիզ | 60 » | 37 35 կ. |
| Մոսկուայից Պարիզ . . | 68 „ | 38 » » |
| Բագուից Կիսլավոդսկ | 12 80 | » » » |
| Բաթ.—Բագու մձա-րում են . . | 11 ր. 10 կ. | 7 ր. 40 կ. |
| Թիֆ.—Կարս . | 1 » 53 » | 1 » 2 » |
| « Միխայ. | 2 » 43 » | 1 » 62 » |
| » Քութա. | 4 » 8 » | 2 » 72 » |
| » Փոթի | 5 » 21 » | 3 » 47 « |
| » Բաթում | 6 » — » | 4 » — » |

*) Վերջերս հարիւրին 30% այս գներին աւելացրած է.



## ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ-ՆԵՐԸ

### ՍԱՐԱՂԱՄԻՇԻՑ—ՍԻՎԱՍ (723 վ.)

| | | |
|---|---|---|
| Ղարաղուրղան . . . . | 34 | վ. |
| Զիվին . . . . . | 6 | » |
| Զանջակ . . . . . | 17 | » |
| Արդոս . . . . . | 5 | » |
| Քէփրիքէօյ . . . . | 24 | » |
| Հասան-Ղալա . . . . | 13 | » |
| Ղուրջուխ . . . . . | 17 | » |
| Կարին . . . . . | 20 | » |
| Աշաւար . . . . . | 21 | » |
| Քոչուկ Քաֆդարիչ . . . | 23 | » |
| Բերնահաբան . . . . | 24 | » |
| Խան-մաղէն . . . . | 26 | » |
| Բայբուրդ . . . . . | 20 | » |
| Ուրաշտի . . . . . | 23 | » |
| Ղուրլուկլեա . . . . | 15 | » |
| Ուչլու-Տէհրան . . . . | 33 | » |
| Ձիրանդի . . . . . | 15 | » |
| Մէրչիմէկ . . . . . | 20 | » |
| Շէբին-ղարահիսար . . . | 32 | » |
| Էնդէրաս . . . . . | 29 | » |

| | | |
|---|---|---|
| Ինօու | 29 | » |
| Դեթիու-գիտի | 23 | » |
| Սամայիլ | 27 | » |
| Քաղի-քէօրպու-Կամուրջ | 26 | » |
| Յոնտան | 15 | » |
| Թոխատ | 50 | » |
| Խարտիշ | 23 | » |
| Երզխունէր | 14 | » |
| Ենի-խան | 19 | » |
| Մէլիթէլ | 22 | » |
| Սիվաս | 32 | » |

12) ԻԳԴԻՐԻՑ—ՎԱՆ (229 վ.)

| | | |
|---|---|---|
| Օրգովսկ | 14 | վ. |
| Զինգել | 12 | » |
| Ղարաբուլաղ | 6 | » |
| Բայազէթ | 51 | » |
| Գամարջիկ | 23 | » |
| Զօրան-Եզիդ | 22 | » |
| Տաթր-քեանդ | 28 | » |
| Ցերգան-ղալա | 23 | » |
| Մուրաք | 30 | » |
| Գեաչանի | 24 | » |
| Վան | 28 | » |



## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՃԱՆԱՊԱՐՀ.

16) ԷՆԶԵԼԻԻՑ—ԹԷՀՐԱՆ (292 վ.)

| | | |
|---|---|---|
| Փիրբազար | 15 | վ. |
| Ռաշտ | 8 | » |
| Մէնջիլ | 65 | » |
| Ղազվին | 69 | » |
| Թէհրան | 135 | » |

17) ԹԻՖԼԻԶԻՑ—ԹԷՀՐԱՆ

| | | |
|---|---|---|
| Բագուով | 1149 | վ. |
| Ջուղայով | 1135 | » |

18) ՆՈՐ-ՋՈՒՂԱՅՈՎ ԹԷՀՐԱՆ (674 վ.)

| | | |
|---|---|---|
| Մարանդ | 60 | » |
| Թաւրիզ ք. | 68 | » |
| Թուրքմանչայի | 110 | » |
| Լիանէք | 30 | » |
| Զէնգեան | 116 | » |
| Սուլթանիէ | 35 | » |
| Ղազվին | 120 | » |
| Թէհրան | 135 | » |

# ԿԱԽԷԹԻԱՅԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՆ

1915 թ. սեպտ. 1-ից կանոնաւոր ամեն օր երթևեկում է II և III կարգի վագոններով Թիֆլիսից դուրս գնալով առաւօտեան ուղիղ 8 ժ. 58 րոպէ (ըստ Թիֆլիսի ժամանակի) և հասնում է Թելաւ 5 ժ. 35 ր. երեկ.: Իսկ Թելաւից դուրս է գալիս նոյնպէս 5 ժ. 58 ր. առաւօտ. և հասնում Թիֆլիս 5 ժ. 1 ր. երեկոյեան:

| | հասնում է | գնում է |
|---|---|---|
| Թիֆլիս . | — | 8 ժ. 58 ր. առ. |
| Նաւթլուխ | 9 ժ. 13 ր. | 9 — 23 |
| Նաւթլուխ Կախէթի . | 9 — 28 | 9 — 43 |
| Վազիանի . | 10 — 37 | 10 — 42 |
| Խօրա . | 11 — 30 | 11 — 35 |
| Սագարէջօ . | 12 — 07 | 12 — 17 |
| Բաղիաուրի | 1 — 09 | 1 — 15 |
| Մելանի . | 2 — 32 | 2 — 37 |
| Գուրջաանի | 3 — 53 | 4 — 08 |
| Վաչնաձիանի | 4 — 48 | 4 — 53 |
| Թելաւ . . | 5 — 36 | — — |

# ԵՐԱԶԱՀԱՆ

Ինչ է երազը.—Ֆրանսիացի գիտնական Դէլօնէն երազների կանոնաւորութեան մասին.—Մեր կարծիքը ժողովրդական երազահանի մասին:

Ի՞նչից է առաջանում երազը, կամ երազում տեսած ամեն մի առարկայ ի՞նչ է գուշակում—դեռ մինչև օրս ոչ ոք ճշտօրէն բացատրած չէ: Թէև ի հնուց յետ է զանազան ժամանակներում եղել են երազների յայտնի բացատրողներ և մեկնիչներ, ինչպէս մեր այս տեսութեան վերջի մասում զետեղած երազների գուշակութիւնը, բայց քանի որ այդ գուշակութիւնները գիտութեան հիմնական փորձերով և ուսումնասիրութեամբ չէ բացատրուած, ի հարկէ դժուար է հաւատ ընծայելը երազի և տեսիլքների բացատրութիւնը, գիտութեան համար յայտնի նշանակութիւն ունենալով—ինչպէս հետևեալ գրուածքից կերևայ—շատերն այժմ քննութեան առարկայ են շինել

և ամեն մի մասնագէտ-գիտնական իւր տեսակէտից է քննում և հասկանում երազն ու տեսիլքը, այսպէս օրինակ.

Բնագէտը—այդ քննում է մարդկային մարմնին համապատասխանող և բնական օրէնքներին հպատակւող երևոյթների տեսակէտից:

Բժիշկը—համարում է մարդկային մարմնի գործարանների կանոնաւոր կամ անկանոն գործողութեանց արդասիք:

Հոգեբանը (պսիխոլոգ) բացատրում է քնի ժամանակ, մարդու մարմնի մէջ գտնուած անյայտ զօրութեանց տեսակէտից, ինչպիսին են խելքը, հոգին և այլն:

Իսկ մագնիտիզմով և հիպնոտիզմով պարապողները, երազի երևոյթը մի այլ տեսակ վիճակով և ընդունելով, նրանից տարբեր հայեացքներն ունենալու համեմատ էլ բացատրում են երազը. Այսպիսով եթէ որ քունը և երազը մի-



անդամից և միակերպ մինչև օրս դեռ չեն կարողացել բացատրել և վերջ դրել զանազան տեսակ կարծիքներին և մեկնութիւններին, ես առաւել դժուար է տեսիլքների և անուրջների պարզաբանութիւնը: Ներկայումս մեծ մասամբ հաւատ են ընծայում բժիշկների ընդդիմախօսութեան, որոնք հեշտ կարողանում են արհեստական քուն և երազ առաջացնել ուղիղ այնպէս, ինչպէս ոչնչացնում են աւելորդ քնարբութիւնը: Մագնիսացնողն ևս ուղղակի քնացնում է մարդուն առանց դեղատան օգնութեան դիմելու (շարժուածքով-ձեռքերով և աչքերով) և միայն իւր ազդեցութեան շնորհիւ գրգռում է ու թմրացնելով անզգայացնում:

Մինչև օրս եղած քննութիւններից նաև երևում է, որ երազներն, անուրջները ու տեսիլքները միշտ զանազան տեսակ են լինում, նայած մարդու կարողու-

թեանը, կազմուածքին, նիստ ու կացին և մարդկային խառնուածքների համեմատ, տարբերւում են միմեանցից և բնաւորութեան նշաններով. օրինակ, բարկացող մարդը՝ երեւակայում է զարհուրելի կռիւներ, պատերազմներ և այլն։ Մելամաղձոտը՝ ձորեր, անտառներ և մռայլ տեսարաններ։ Մաղասոտ՝ հեզաբարոյ մարդուն երեւում է անձրեւ, ծով, ջուր, ձկներ, անտառներ։ Արիւնային խառնուածք ունեցողին (songvinist) զուարճալի տեսարաններ։ Այսպէս, երազները հետեւանք են լինում զանազան և անթիւ տպաւորութիւնների։

Մի քանի աստղագուշակներ էլ պնդում են, թէ ինչպէս արեւը, լուսինը և այլ մոլորակներն իրանց դրութեամբ շարժամով ազդեցութիւն ունեն երկրագնդիս վրայ, այնպէս էլ ասում են նրանք, որ երազն էլ կախուած էլ նը-



րանից թէ ինչն է ազդում քնածին, ուսինը թէ արեւը. նրանց կարծիքով լուսինը հովանաւորում է քնածներին այն ժամանակ, երբ արեւը հակառակ է քնին, բայց երբ թէ չի դադարում մարմնի վրայ բարերար ներգործութիւն անելուց։

Շատերն ասում են—ինչպէս էլ հընումը—որ քունը նման է մահուան, իսկ տեսիլքը կամ անուրջը մեր կեանքի ուղղութեան մի ինչ-որ տեսակն է։

Այսպիսի եղելութիւններին պէտք է վերագրել ամեն ժամանակի և շատ ազգերի պատմութիւններից յայտնի տեսիլքների երեւոյթները, որոնք շատ անգամ ուղիղ նախագուշակում էին աղէտներ և ուրախութիւններ։ Այս պատճառով էլ հին ժամանակներում թագաւորներն ունէին իրանց գուշակող-խորհրդատուներն, որոնք անուանում էին պալատական աստղագէտներ, աստղագուշակներ և մեկնիչներ։

Շատ նոյնանման օրինակներ կարող էինք բերել այստեղ՝ եթէ թոյլ տար մեր այս հրատարակութեան չափը։ Բայց ժամանակը և գիտութիւնը դեռ շատ բան կասեն այս խնդրի վերաբերութեամբ, որ մեծամասնութեանն այնքան հետաքրքրական և դեռ ևս անմատչելի գաղտնիք է։

Իսկ երազների կանոնաւորութեան մասին Ֆրանսիացի գիտնական Դէլոնէն իւր վրայ գործ դրած փորձերից համոզուեց, որ երազը ուղղակի նրանից կախում ունի, թէ քնած ժամանակ ուղեղի որ մասն աւելի է տաքանում։ Օրինակ երբ իւր ճակատը ծածկում էր բամբակով, այդ ժամանակ քնում էր հանգիստ և կանոնաւոր։ Երբ գլխի ետևի մասն էր տաքացնում, արմանալի և անհանգիստ երազներ էր տեսնում. ձախակողմը տաքացնելուց՝ ֆանտաստիկական երազներ, որոնց մէջ երևում էին վաղուց մոռացուած տեսարաններ և պատկերներ. իսկ աջակողմը տաքացնելուց երազները աւելի հանգիստ, խելացի և այնպիսի տեսարաններ էին ներկայացնում, որոնք մօտիկ անցեալին էին վերաբերում։



Վերջացնելով այս տեսութիւնը, աւելորդ չենք համարում մեր կողմից յայտնել, որ թէև մենք համամիտ չենք հետևեալ երևոյթներում զետեղուած երազների առանց գիտնական հաստատ բացատրութեանը, բայց ուսումնասիրութեան տեսակէտով քննելու որպէս—դարերով ժողովրդի գործածութեան մէջ մտած—նրա հետաքրքրութիւնը շարժող—ընթերցանութեանը նպաստող և գրաւող նիւթ՝ մենք հրատարակում ենք։

Մ. Զ. . .

# ԲԱՑԱՏՐՈՒԹԻՒՆ

## Զանազան տեսակ երազների մասին

**Ա.** Աստուած.—Երազում Աստծուն տեսնելը՝ իբր թէ տեսնողի համար լաւ է բոլոր չարերից կազատուի. թէ աղքատ լինի կը հարստանայ, հիւանդ լինի կառողջանայ։ Երազում Աստծուն տան մէջ տեսնելը՝ նորոգութիւն է։

Աստղ.—Աստղ տեսնելը լաւ է. եթէ տան մէջ տեսնես՝ բարիքդ կաւելանայ, օտար տեղ լինիս, յաջողութեամբ կը վերադառնաս։ Եթէ շատ աստղեր՝ ճանապարհ կը գնաս և կը շահուես։

Ասպար առնելը՝ պատիւ է։

Արեղայ տեսնելը՝ յարկ, պատիւ կամ կռիւ է։

Աքաղաղ.—Զոհած աքաղաղը՝ բարի է և կռուի նշան։

Ագռաւներ.—Թշնամիներդ կը յարձակուեն քեզ վրայ։

Աթոռ տեսնելը մեծութիւն է։



Աթոռ նստելը՝ բարձրութիւն է։

Ալեւոր.—Իրան ծերացած տեսնելը հարստութիւն է։

Ալիւրը շահ և ուժ է։ Ալիւրն ամանով տեսնելը՝ մուրազ է։

Ականջը.—աղջիկ է, կնիկ և կամ աչքալուանք։ Ականջ կտրելը վնաս է։

Աղաւնի տեսնելը՝ շնորհք է։

Աղուէս տեսնելը՝ ահ ու երկիւղ է, թէ որսաս՝ թշնամուդ կը յաղթես։ Աղուէսը, որ մարդուց փախչի—պարտականն էլ կը փախչի իրենից։ Աղուէսի հետ կռիւ անողը՝ իր օգտին կռիւ կ՚անի։

Աղջիկ.—աղջիկ տեսնելը՝ խնդութիւն է։ Փոքր աղջիկ տեսնելը օգուտ է։

Աղբիւր.—Երազում աղբիւր տեսնելը շատ բաներից օգտուել է նշանակում. աղբիւրի վրայ լուացուելն՝ օգուտ է։ Աղբիւրից ջուր վերցնելը վատ է. աղբիւրից ջուր խմելը՝ շնորհք է և բարի։

Աղ.—Աղ և անանուխ տեսնելը՝ բարի և անուշ խօսք է. միմիայն աղ տեսնե-

ը կսկիծ է, սպիտակ աղը՝ փող և օգուտ է. սև աղը՝ վատ խօսք և տրտմութիւն է. կարմրած աղը՝ կռուի խափանում է։

Աղի ձուկը՝ հոգս է։

Աղեղն.—Աղեղ տեսնելը՝ զրոյց ճշգք է։

Ամպերի ճայթմունք լսելը՝ բարի չէ։

Իրեն աղեղնաւոր տեսնելը թշնամանող լեզու է։

Աղխս հանելը՝ տան շինութիւն է և լաւ։

Աղքատին բան բաշխելը՝ բարի և օգուտ է։

Ամանաթ առնել և պահելը ճշմարտութիւն է։

Ամբաստանել մէկին՝ շատ վնաս է։

Այծ տեսնելը՝ ճանապարհ է։

Այրուած.—Այրուած հանդերձը՝ (շորը երկիւղ է։ Այրուած և աւերուած տեսնել իր տունը՝ վնաս է։

Անձրև ժամանակ տեսնելը՝ բարի է։

Անդաստան տեսնելն՝ աշխատանք է։

Անուշ ուտելիքը՝ լաւ է։

Անապատում նստելը՝ նեղութիւն է։



Աչք տեսնելը՝ փողի շատութիւն է։

Աչքեր տեսնելը՝ շատ հարստութիւն է։

Մեծ աչք ունենալ՝ երկարակեցութիւն է. աչք հանել երազում, վատ դէպք է։

Ապարանջանը նեղութիւն և հոգս է։

Առիւծ.—Երազում առիւծ տեսնելը թագաւոր, իշխան և կամ մեծ մարդ է։

Եթէ երկու առիւծ իրար հետ կըռուին՝ երկու թագաւոր կամ երկու մարդ կը կռուին։

Եթէ դու առիւծի վրայ նստած լինես՝ իշխանութիւն է։

Եթէ Առիւծը՝ դէմդ դուրս գայ՝ մեծ մարդուց երկիւղ կը հասնի քեզ։

Առու.—Տանդ մէջ առու տեսնելը գանձ և օգուտ է։

Ատամ.—Եթէ բոլոր ատամներդ թափուեն՝ շատ գանձ կը գտնես։ Եթէ առաջին ատամդ ընկնի՝ ճանապարհ կը գնաս։ Առաջին ատամները հանելը վատ է։ Ներքին ատամներ հանելը տրտմութիւն է, իսկ թէ վերը հանես,

ազգականներից վնաս է։ Սևացած ատամները՝ հիւանդութիւն է։

Արեգակ.—Երազում արեգակ տեսնելը՝ թագաւոր է։ Արեգակը իր ձեռքում տեսնելը՝ պարոնութիւն է տեսնողի համար։ Խաւար արեգակ տեսնելը՝ տեսնող պարոնի համար չար է։ Երկնքից ընկած արեգակ տեսնելը՝ թագաւորի մահ է։ Արեգակ (մէկ) տեսնելը նեղութիւն է. արևն ամպի տակ տեսնելը՝ նեղութիւն կամ պայծառութիւն է։

Արծաթը նեղութիւն է։ Արմաւը՝ շատ բարի և անոյշ խօսք է։ Արմաւենին զաւակ և ուրախութիւն է։

Արիւն թափելը՝ մեծ վնաս է։

Արիւն կամ արիւն առնելը՝ շնորհք է։

Արծիւ.—Արծիւ տեսնելը՝ առաջութիւն է։ Արծուի վրայ որ նստես՝ պարոնութեան կը տիրանաս։ Արծուի հետ, որ կռուես կամ խփես՝ մեծ մարդկանց կը նախանձես և հետները կը կռուես։



եթէ արծիւը քեզ խփի՝ մի պարոնից զէնք կ'առանաս։

Արջ տեսնելը՝ անիրաւ և աղէտ մարդու խօսք է։ Արջից հալածուելը՝ կռուից կազատուես կամ մեծից զգոյշ կաց։

Ամեն գայլ դազան՝ թշնամի է։

Աւետարանը՝ մուրազ է։

Աւազանը՝ ռոճիկ և օգուտ է։

Աւազը որ ձեռք առես՝ մեծ մարդուց բան կը առանաս։

Աւազակ որ տեսնես՝ զգուշացիր կռուից։

Աւագ.—Իրան աւագ տեսնելը՝ շատ լաւ է և բարի։ Աւագ որ տեսնես՝ թըշնամին երկրի վրայ կը յարձակուի։

Աւրեղ.—որ է Սուլուսի՝ շատ դանձ է։

Բ. Բարձրանալ երազում և վայր ընկնել, մէկի ձեռքով՝ վնաս է։

Բարձր տեղերի վրայ եթէ քայլես, մեծութիւն կը գտնես։

Բարձր տեղից ընկնելը՝ վնաս է։

Բարբարոսի և ուրիշ ազգերի ձայնը՝ անոյշ խօսք է։ Բակս տալը՝ կռիւ է։

Բաղանիքը՝ հոգս է։ Բաղանիք եթէ գնաս, խարէութեան մէջ կ՚ընկնես. Բաղանիքից եթէ դուրս գաս, հոգսերից կազատուես։ Բաղանիքում լուացուելը ռոճիկ և մեծ նեղութիւն է։

Բադ տեսնելը՝ մեծ մարդ է։

Բագ շինելը կամ հիմք ձգելը բարութիւն է։

Բահը լեզու է։

Բամբակն՝ արդարութիւն է։

Բանջարը՝ շահ է։

Բերդ որ տեսնես՝ թշնամիներից մօտ ճշմարիտ դուրս կը գաս։ Բերդ մտնելը՝ պարիսպ և ամրութիւն է։ Բերդի մէջ նեղութիւնից ազատուել է։

Բերան լուանալը՝ ռոճկի պակասիլ է։

Բիր տեսնես կամ առնես՝ եղբայր կամ որդի է։ Բիր կտրելը՝ եղբօր կամ ազգականին վնաս գայ։

Բլուր տեսնելը՝ երկրի խաղաղութիւն է։

Բու տեսնելը՝ նեղութիւն է։

Բուրվառ տեսնելը կամ առնելը՝ լաւ



է, կռիւ է։

Բուրդ.—Սպիտակ բուրդ տեսնելը կամ առնելը՝ առողջութիւն և օգուտ է։ Սև բուրդը՝ տրտմութիւն է։

Բոբիկ իրեն տեսնելը՝ զէնք կը գայ իւր վրայ։

Բորոտ.—Իրեն բորոտ տեսնելը՝ գանձի շատանալ, մեծութիւն և շահ է։

Բողկ ուտելը՝ առողջութիւն և օգուտ է։

Բրել կամ գործել, բարի և շահ է։

Գ. Գառներ տեսնելը՝ մեծ շահ է, Գառներ մորթելը՝ լաւ չէ. գառներ լուանալը՝ զէնք և տրտմութիւն է։

Գաղան տեսնելը՝ առանց վնասի կռիւ և երկիւղ է։ Գաղանի խաղալը՝ թշնամու հաշտութիւնն է, իսկ փախչելը խաղաղութիւն։

Գանձ տեսնել կամ առնելը՝ շահ է։

Գարին՝ բաղդ կամ բաժին է։

Գայլ սպանես՝ թշնամուդ կը յաղթես. գայլի վրայ նստես՝ նեղութիւն է։

Գաւազան որ տեսնես՝ թշնամուդ դէմ կ'ամրանաս։ Գաւազանը ձեռքիդ՝ լաւ է, որդի կամ մեծ շահ է։

Գաւաթ բռնելը՝ զաւակի (ունենալու) խնդութիւն է։

Գետ.—Գետ անցնելը՝ ձի հեծնել է։ Յստակ ու պարզ գետին մօտիկ տալը՝ ազատութիւն է, պղտորը՝ լռութիւն է. գետում լուացուիլը նեղութիւն է։ Գետում վերևից ներքև գնալը՝ պարտութիւն է։

Գերի տեսնելը՝ նեղութիւն է. իրեն գերի տեսնելը՝ մեծութիւն և շահ է։

Գերի.—Ճանապարհ գնալ՝ նեղութիւն է։

Գերանը որ կոտրուի՝ տանուտէր կ'մեռնի։

Գերեզման բացելը՝ վնաս է.—իրան գերեզմանում տեսնելը՝ պատասխանի ենթարկուել կամ բանտ ընկնել է։

Գեղեցիկ պատկերը նկարած տեսնել՝ փառք է։

Գէշ հոտը՝ գէշ խօսք է։

Գինի խմել կամ գնել՝ ոյժ և շահ է։

Գինձը՝ անուշ խօսք է։ Գինձ ուտել



կամ ժողովելը՝ կռիւ է։ Գինձ հագնելը մեծ շահ է։

Գիսաւոր աստղը՝ մեծութիւն և պատիւ է։

Գիրք կարդալը՝ ժողով է և նեղութիւն։

Գիր գրելը՝ բարի և մուրազ է։

Գլուխ.—Կտրած գլուխ ձեռին տանելը՝ շատ գանձ գտնել է, գլխին դեղ քսելը՝ անուշ խօսք է, գլուխ ածելել տալը՝ նեղութիւնից ազատուել. ուրիշների գլուխն ածելելը՝ ցաւից ազատուել է, գլուխ լուանալը կամ գլխով բան տեսնելը՝ զէնք է։ Սպիտակ գլուխը՝ յանկարծակի վնաս։

Իրեն գլխատուած տեսնելը՝ մեծ վնաս է

Գխտոր տեսնելը՝ ցոյց է տալիս ցընծութիւն և աղքատութիւն։

Գնդակ խաղալը՝ մեծի համար լաւ է, իսկ փոքր մարդուն՝ վատ։

Գոմէշ.—Գետի մէջ գոմէշ տեսնելը՝ բարի զրոյց է նշանակում։

Գոմ շինելն ուրախութիւն և շահ է։

Գոյնզգոյն հալաւը՝ ուրախութիւն է։

Գորտի ձայն լսելը՝ ուրախութեան լուր է։ Գորտ եթէ սպանես՝ հաւատացեալ մարդու հետ հաշտութիւն կանես։

Գլխարկ ծածկելը՝ հարկիք է։

Գրաւական հանելը՝ իր տանից վնաս է։

Գրող տեսնելը՝ վատ է։

Գրիչ և կաղամարը, խելք կամ ճանապարհ է։ Գրչամանը՝ կին է։

Դ. Դանակ տեսնել կամ գնել, լաւ չէ, բայց վատ լեզուն խափանել է։

Դաշտ՝ անու բան կ'անես։

Դաշտից որ դուրս գաս՝ ազատութիւն է։

Դատաւորն՝ Աստուած է և դրութիւնըդ կ'լաւանայ։

Դատաստանը՝ մեղաց քննութիւն է։

Դարպաս շինել կամ տեսնելը՝ հարուստ կնիկ է։ Դարպաս լայնացնելը պարոնութիւն է։ Դարպաս փակելը՝ մեծ մարդուց վնասուել է։

Դարբինը մեծ մարդ է։ Դարբնութիւն



թէ ինքդ անես, լաւ տանտէր կը լինես։ Դարբնի հարուածը, ամենը բարի է։

Դեղին գոյնը՝ բոլորովին վատ է։

Դեղ՝ նեղութիւն և մեղաց նշան է։

Դդում ցանելը՝ ջերմ, իսկ ուտելը հիւանդութիւն է։

Դիակ՝ բարի գրոյց է։

Դիպակ տեսնել կամ հագնելը՝ մեծ պատիւ է։

Դմակ տեսնել կամ ուտելը՝ հիւանդութիւն է։

Դուռը՝ պատիւ է և մեծ մարդու հետ ծանօթանալ։ Դուռ բանալը՝ իր բաղդի բացուիլ և իր կամքի կատարուիլն է։ Դուռ ձգելը՝ կործանումն։ Դուռ կոտրելը վատ նշան է։ Դուռը դուրս գալը՝ լաւ չէ։

Դրամ տեսնել կամ ժողովելն՝ ագահութիւն է։

Դպրանոցին բարև տալը՝ կռիւ է։

Ե. Եզն՝ անհի մէջ գնայ։ Եզը նստած տեսնես՝ մեծ աւետիս է կամ արբեմիդ կը գայ։ Եզան միս ուտելը՝ լաւ է

բայց ոմանք ասում են թէ նեղութիւն է։
Եզների կռուելը՝ թշնամի է։ Եզը մորթել՝ վնաս է։ Եզ ուտելը՝ բարի է։

Եզնիկը տանը տեսնելը՝ սիրելին գայ։

Եկեղեցի տեսնել կամ շինելը՝ փառք է։
—Եկեղեցի երթալ ազատութիւն է։

Եղջերուն՝ երկրի նեղութիւն է։

Երգեհոնը՝ տրտմութիւն է։

Երկինք բարձրանալը՝ մեծ պատիւ է

Երկիրն՝ խնդութիւն է։

Երկանք տեսնել կամ աղալն՝ անհանգստութիւն է։

Երկաթ տեսնել կամ գնելը՝ տրտմութիւն և շատ վատ է։

Երակ կտրելը՝ վնաս է։ Երակից արիւն անելը՝ սրբութիւն է։

Երես լուանալը՝ զէն է.—Դեղին երեսը մեղք է. կարմիր երեսը՝ գործը լաւ կերթայ.—Գեղեցիկ երեսը՝ մեծ փառք է։

Երազ պատմելը երազում շատ լաւ է

Երեցը յարութիւն անելիս՝ հին

գրոյց է։ Մեռած աւագ երեցին կենդանացած տեսնելը՝ մեծ գրոյցի նորոգութիւն



է։ Երէցին մեռած տեսնել՝ մեծ գրոյցի խափանումն է։ Երէցի գրիչ տեսնելը՝ խելք ու ճանապարհ է։

Զ. Զանգակի ձայն լսելը՝ խնդութիւն և ուրախութիւն է։

Զաֆրանը՝ հիւանդութիւն է։ Զաֆրանով կերակուրը՝ լաւ է։

Զենելը—մորթելը՝ մեծ նեղութիւն է։

Զինուորը՝ տրտմութիւն է։

Զմրուխտը լաւ է։

Զնդանը մեծ հոգս է։

Զուռնան կամ զուռնի ձայնը որ լսես՝ անձրև կամ կռիւ է։

Զրոյց անելը՝ նեղութիւն է։

Զրահը՝ վատ է։ Զրահ հագնելը՝ զէն է։

Է. Էշը՝ շատ նեղութիւն է. սպիտակ էշին հեծած կամ բեռած՝ բարի է և պատիւ։

Ը. Ըզունգ ունենալը՝ աղքատութիւն է։ Ընկոյզ ժողովելը՝ լաւ չէ։

Թ. Թագաւորին ողջունելը՝ փառք է։
Թամբ շինելը՝ իրաւարար է։

Թանաք եփելը՝ լաւ է։ Թանաք վե-
րևից թափելը՝ վատ խօսք է։
Թարախով իրան տեսնելը՝ շահ է և
հարստութիւն։
Թաղնուած իրան տեսնելը՝ բարի է։
Թևաւոր իրան տեսնելը՝ հոգիներին
հանդիպել է։
Թիր բանը՝ նեղութիւն է։
Թզի ծառը՝ լիքը մարդ է.—Թուզը (կա-
նաչ) տեսնել կամ ուտելը վնաս է։ Թուզ
(չոր) ուտելը՝ շահ է։
Թուխ իրան տեսնելը՝ մեծութիւն է։
Թռչելը՝ ուրիշ տեղ գնալ է։ Թռչել
կտուրից՝ այլ կին առնել է նշանակում։
Թռչել բարձրանալու համար՝ լաւու-
թեան հասնել է. Թռչելիս՝ ուրիշ եր-
կրում մեծութիւն կ'ստանայ։
Թռչունի քեզ մերձենալը՝ մի անձն երա-
նի է տալիս քեզ. Թռչուն արձակելը՝ բա-
րութիւն է. Թռչունի փախչելը՝ վնաս է։
Թռչունների կռուելը՝ վնաս է։ Թռչունի
հետ խաղալը՝ թշնամիքդ կ'սիրեն քեզ։

Ժ. Ժամատունը եթէ զարդարած տես-



նես՝ արքայութեան արժանի կը լինես։
Ժամ գնալը՝ կեանքդ բարի լինել է։
Ժամատանը աղօթելը՝ լաւ բան անել է։
Ժամհարը՝ վատ գրութեան կըհասնես։
Ժուռ գալը՝ լաւ չէ։
Ժամացոյցը՝ օգուտ է։

Լ. Լոյսն.—աշխարհի խաղաղութիւն
է —հանգած լոյսը տրտմութիւն է։
Լուսին—և արեգակն առաւօտեան
տեսնելը՝ ազգին վնաս է։
Լուանի ասողը՝ խիստ շահ է.—կար-
միր լուսինը՝ վնաս է։
Խաւար լուսինը՝ թագաւորի մահ է.—
Երկու լուսին տեսնելը՝ թագաւորներ
իրար դէմ կը վերկենան։
Լուն՝ առճիկ է։
Լուծը՝ (եզների) բարի է։
Լեառն (բարձր) որ տեսնես՝ ազատու-
թիւն է։

Խ. Խան կամ սուլթան տեսնելը անչափ
լաւ է։
Խաչակնքել երազում՝ մեծ պատիւ է։
Խաչը՝ չարչարանք է։
Խաւարը՝ նեղութիւն է։
Խաւեարը՝ հիւանդութիւն է։

Խաղողը՝ անձրև և ցնորք է.—սպիտակ խաղողը՝ խնդալ է։ Սևը՝ լաւ է. Ժողոված խաղողը՝ գանձ է։

Խաչահանդերձը՝ իշխանի մահ է։

Խեցեղէն աման բռնելը՝ ուրախութիւն է։

Խմոր ունելը՝ շահ է։

Խնդալը՝ լաւ չէ։

Խնձորը՝ տղայ է, իսկ ունելը՝ շահ.—խնձոր առնելը՝ բարի համբաւ է.—խընձորի ծառը մեծ մարդ է։

Խուլը և համրը՝ շահ է։

Խունկ ծխելը՝ ապրանք և անոյշ խօսք է

Խորոված միս ուտելը՝ շահ է։

Խոզը՝ այլազգի է.-խոզի միս ուտելը՝ ազգականների մահ է։

Խոտը՝ լաւ մարդ է.-խոտ ժողովելը պատիւ և փառք է։

Ծ. Ծաղիկ.—Ծաղկեայ անդաստանը՝ կանանց, ուրախութիւնէ.ծաղկըն անհանգստութիւն. է ծաղիկ քաղելը՝ կին առնել է. ծաղկելը՝ բարի է։

Ծառ.—Ծաղկած ծառը—պտղով ծառը բարի է. ծառ կտրելը կամ այրելը վնաս է. ծառը եթէ ծխի՝ լաւ չէ. ծառի



տերև թափուելը՝ արիւնհեղութիւն է. ծառ վայր ձգելը մարդուն վատ է. մեծ ծառ կտրելը՝ մեծ մարդու մեռնիլ է.ծառի վրայ նստելը՝ և մանգալը՝ փառք է. կանաչ ծառը՝ գանձ է. չոր ծառը՝ տրտմութիւն է. ծառ զուգելը կին է։

Ծամ (հիւս) կտրելը՝ բաժանումն է։

Ծառան՝ աւետիք և խնդութիւն է։

Ծարաւելը՝ բարի չէ։

Ծանր բան շալակելը՝ մեծ մեղք է։

Ծիծաղելը՝ տրտմութիւն է։

Ծիծը՝ տղայ կամ մեծութիւն է։

Ծնանելը՝ (կնոջ) մեծ շահի գալ է։

Ծունր դնելը՝ առ Աստուած յոյս է։

Ծով.—պղտոր ծովը՝ նեղութիւն է. ցամաք ծովը՝ աշխարհի լիութիւն է. ծովում լուացուելը՝ շահ է. ծով մտնելը՝ թշնամիներից կարդարանաս. ծովը որ մարդու ներս քաշի՝ գողի ձեռքով ապականուիլ է նշանակում։ Ծովակի վրայ նըստելը՝ զուարթութիւն է. ծովից դուրս գալը՝ պատիւ է և ազատութիւն,-չը դուրս գալը՝ մեծ վնաս է։

Ծեր.—Ծերութեան ժամանակ իրան մանուկ տեսնելը՝ կեանքի աւելանալն է։ —Իրան ծեր տեսնելը մանկութեան ժա-

մանակ՝ նոյնպէս կեանքի աւելանալն է։

Կ. Կամուրջ շինելը, շատ լաւ է։

Կառք նստելը՝ մեծ պատիւ է։

Կաղամբի տակ հանելը՝ վնաս է։

Կենդանի իրան գերեզմանի մէջ տեսնելը՝ մեծ զրոյց է։

Կին առնելը՝ վնաս է. կնոջ հետ խօսելը՝ տրտմութիւն է. մազերն արձակած կինը՝ նոյնպէս վնաս է. գեղեցիկ զարդարած կինը՝ երկիր է կամ քաղաք. կնոջ մազ կտրելը՝ շատ վնաս է. կնոջ նայելը՝ բարի և լաւ է.

Կիտրոնը՝ անոյշ խօսք է։

Կոյս.—իրան կոյս տեսնելը՝ խիստ շահ է. կոյսի հետ խօսելը տրտմութիւն է. կոյսի հետ հաց ուտելը՝ բարի է։

Կուժը՝—որդի է. ջրով կուժը՝ բոլորովին բարի է։

Կորեկը տանը տեսնելը կամ ուտելը լիութիւն է։

Կրակ ձգելը՝ սով է։

Կտաւ հանելը՝ բարի չէ։

Կայծակը՝ խռովութիւն է։

Կարկուտը՝ երկրի նեղութիւն է։

Կարասը՝ նեղութիւն է։



Կօշիկ տանը տեսնել կամ հագնելը ճանապարհ է։

Հ. Հաց տեսնել՝ երազում բարի է և լաւ։

Հաւ.—հաւը ձուի վրայ՝ անակնկալ շնորհք է. հաւ-սիրամարգ մեծ իշխան է. հաւի խօսելը՝ մարդու կեանքից զրկուելն է։

Հաղորդ առնելը՝ մարդու ծեծ է։

Հասկ քաղելը՝ ուրախութիւն է։

Հարսանիքը՝ տրտմութիւն է։

Հայրապետը՝ մեծ զրոյց է։

Հայր.—մեռած հօրը կենդանացած տեսնել՝ մեծ շահ է։

Համր և խուլը՝ շահ է։

Հալաւ այրած տեսնելը՝ կնոջից շահուել է։

Հանդերձ կորցնելը՝ վնաս է։

Հեռաւոր տեղ իրան տեսնել՝ կամ ուրիշ մէկին՝ շահ է և բարի։

Հիմք ձգելը՝ հարստութիւն է։

Հիւանդը՝ նեղութիւն է։

Հող վեր առնելը՝ նեղութիւն է։

Հում միս ուտելը՝ մեծ զրոյց է։

Հոր փորելը՝ շատ նեղութիւն է։

Ձ. Ձի.—սպիտակ կամ սև ձի նստելը՝ բարի է և պատիւ. վազող ձի նստելը խիստ լաւ է. սև ձի կամ ջորի նստելը մեծամեծներից շահ ստանալ է։ Ձին ասպարում տեսնելը՝ մեծութեան հասնելու նշան է։

Ձեռը լուանալ՝ բարի է. ձեռից ճրագ թռնած՝ որդի լինի քեզ։

Ձէթ եփելը՝ մուրազ և լաւ է։

Ձու տեսնել կամ ժողովելը՝ կռիւ է։

Ձոր տեսնել կամ անցնելը, նեղութիւնից կ՚ազատուես։

Ձուկը՝ չար լեզու է.—ջրից հանես՝ ամպ, ձիւն կամ ջերմ կ՚լինի. ձուկը ողջ կրակին տեսնեմ՝ երկրի նեղութիւն է։

Ղ. Ղամպար վառելը՝ բարի է։

Ճ. Ճանապարհ գնալն ու գալը բարի է։

Ճուտն՝ երկայն ճանապարհ է։

Ճառ՝ գրած տեսնել կամ լսել՝ հոգս է։

Ճնճղուկ տեսնել կամ բռնելը՝ բարի է։

Ճրագ վառած՝ ծածուկ գործ կ՚յայտնուի. անցած ճրագը տան կործանումն է։

Մ. Մատանի.—մատանին իշխանու-



թիւն է. մատանին կտրած՝ վնաս է. մատանին կորցնեմ՝ կինդ կամ սիրելիդ կը վնասուին. երկու մատանի ունենալը՝ երկու կին կ՚առնես. արծաթի մատանի՝ նեղութիւնից ազատուելու նշան է։

Մարգարիտը՝ մեծութեան նշան է։

Մարդու լերդ ուտելը՝ գանձ գտնել է. մարդու ոսկոր ուտելը՝ բանտ մըտնել է. փոքր մարդը շնորհք է։

Մեխեր ժողովելը լեզուներ են։

Մեծահասակ իրան տեսնելը՝ փառք է։

Մեծ փակեղ ուսովդ ձգելը՝ շնորհք է։

Մեռել.—իրան մեռած տեսնելը՝ շատ ապրել է. մեռելը մէջ խօսի զգուշ կաց մի հաւատայ. մեռել թաղելը՝ շփոթուել է. մեռելը գերեզմանում տեսնելը չարը կ՚խափանուի. շատ մեռելներ տեսնելը՝ թշնամիներդ կ՚յարձակուեն։

Մեղր ուտելը՝ սրտնեղութիւն է։ Մետաքս տեսնելը՝ օգուտ է։

Միս տեսնել կամ ուտելը հիւանդութիւն է, իսկ խորոված միս ուտելը՝ շահ է։

Միրգ ուտելը՝ հիւանդութիւն է։

Մոմը վառած՝ ուրախութիւն և որդի է։

Մորեխը՝ հոգս է և աշխարհի վնաս։

Մութը՝ վնաս է և չար։
Մուկը՝ նոյն է։
Մորուքով իրան տեսնելը՝ շնորհք է։

Ն. Նախիրը որ գեղը գնայ՝ պաշտօն է։

Նապաստակը՝ իրեն տղայ լինի։

Նաւ.—Նաւորդ լինելը՝ զրոյց դուրս գայ. ոսկու կամ արծաթի նաւը՝ բարի է. նաւ նստես՝ շատ կ՚ապրես. նաւերի խումբ տեսնես՝ շահ կ՚գայ քեզ. նաւը թանձով՝ նեղութիւն է. նաւ այրելը երկրի վնաս է. կոտրած նաւը՝ վատ է։

Նոր բան տեսնելը՝ օտարութեան կ՚երթաս։

Նուռը՝ օտարներից շահուել է։

Նստել և ողբալը՝ շատ նեղութիւն է։

Շ. Շապիկ սպիտակ տեսնել կամ կարել՝ ուրախութիւն է. սևը՝ տրտմութիւն է. [illegible]ատը մեղք է։

Շինութիւն կառուցանելը՝ բարութիւն, քանդելը՝ վնաս։

Շաքարաջուր խմելը՝ իմաստութիւն է։

Շիշ իւղով՝ առճիկ և շահ է։

Շոզը՝ փառք է։ Շորեր (հոր) ուրախութիւն և շնորհք է։ Շորեր գոյնզգոյն



վնաս է։ Խայաշորեր, աւագ մարդ մեռնի՞ Շորեր կորցնելը վնաս է։

Շուն.—շների իրար հետ կռուիլը՝ վատ է. շունը որ հաչէ կամ կծէ չար լեզու է և չար մարդուց պէտք է զգոյշ լինես։

Ո. Ոսկին կամ արծաթը՝ շահ է։ Ոսկէ խնձորը՝ պատիւ է։

Ոչխարը—ձմեռ է և ցուրտ. սև ոչխարը՝ սուգ և տրտմութիւն է. ոչխարը ճանապարհին հարստութիւն է։

Ողբալը՝ շատ նեղութիւն է։

Ուղտը - պարոն է. երկու ուղտի կռուիլը թշնամիներ կ՚կռուեն. էգ ուղտ նստելը հիւանդութիւն է։

Որս գնալը՝ բարի է։

Ջ. Ջամիչը՝ շատ վնաս է։
Ջամանը՝ կռիւ և աղաղակ է։
Ջանկը՝ տրտմութիւն է։
Ջիրը՝ տակաւ շահ է։
Ջուխա.—կանաչ չուխան՝ հարստութիւն է. սևը՝ տրտմութիւն։

Պ. Պատարագը կռիւ է։
Պարտէզ տնկելը՝ բարի է։
Պղպեղը—կսկիծ է. պղպեղ ուտելը

Թշնամիներից պատրաստ կաց։

Պսակ—արծաթի՝ հիւանդութիւն է. փշից պսակ շինելը՝ մեծ շահ է. քարից շինած պսակը՝ մեծութիւն է։

Պսակուիլը՝ լաւ է, յաճախ կռիւ է։

Ջ. Ջաղաց—շինելը՝ մեծութիւն է. քանդելը՝ շինութիւն է. ջաղացի աղունք հիւանդութիւն է։

Ջայլամը՝ նեղութիւնից կ'ազատուես։

Ջուր—սուրբ խմելը՝ լաւ է. պղտոր ջուրը տեսնելը կամ խմելը՝ տրտմութիւն է. տանդ մէջ ջուր տեսնելը՝ լաւ չէ. գնացող ջուրը՝ բարի է. գետից ջուր վեր առնելը՝ վնաս է. աղբիւրիցը՝ բարի է։

Ռ. Ռեհանի ծաղիկը՝ բարի է։

Ռումբ—կանգնած ռումբը՝ մեծութիւն և պատիւ է. ձեռքին ռումբ բռնելը՝ ճանապարհ է և երկիւղ։

Ռուս տեսնելը՝ մեծ հակառակութիւն է։

Ս. Սազը՝ մեծ մարդ է։

Սազը.—սազ ունելը հիւանդութիւն է։

Սալորը՝ առողջութիւն է։



Սամիթ.—դալարը՝ լաւ, չորը՝ վնաս է։

Սանդուղ (կանգնած) մեծութիւն է։

Սանդր բռնելը՝ զէնք է։

Սենեակ քանդելը՝ կնոջից բաժանուիլ է։

Սեխը՝ լաւ է, ուտելը՝ հիւանդութիւն։

Սիսեռը՝ բարի է։

Սիւնը՝ նեղութիւն և կռիւ է։

Սխտորը՝ կսկիծ է։

Սոխը.—կսկիծ է. ուտելը՝ հիւանդութ-

Սուգ անելը՝ ուրախութիւն է։

Սուլուխ տեսնելը՝ գանձ է։

Սուլթան տեսնելը՝ անչափ ցաւ է։

Սիրամարգ տեսնելը՝ մեծ եղջիւր է։

Վ. Վախեցած իրան տեսնել՝ օգուտ է։

Վանք և արեղայ, նեղութիւն է։

Վառած. մէկին տեսնել վնաս է. իրան վառած տեսնելը հարստութիւն է։

Վարդ.—կին կ'առնես. վարդ քաղելը բարի է։

Վերմակը՝ հարուստ կին է։

Պիշտակը՝ մեծութիւն կամ վնաս է։

Տ. Տաճար զարդարած՝ բարի են տաճար այրելը թշնամիքդ կը կոտրի.

Տաճիկը՝ թշնամիների յարձակումն է։

Տախտը՝ մեծութիւն է։ Տախտը դիպակով՝ բարի է. տախտը, կանաչ, ցաւ է

Տանձ ուտելը՝ հիւանդութիւն է։

Տաւեխ-ձուկը՝ ճանապարհ է։

Տիկը՝ տրտմութիւն է։

Տիկինը՝ նոյն է։

Տղայի գիրկն առնելը, ցաւ է։

Տուն—շինելը՝ շատ բարի է. տուն քանդելը՝ վատ է. իր կամ ուրիշի տունը քանդուած տեսնելը՝ անիրաւութիւն է։

Ց. Ցեցը –լեզու է. ցեց հանելը՝ նեղութիւն կամ լաւ է։

Ցեխը՝ վնաս և տրտմութիւն է։

Ցորեանը՝ ցնորք է։

Ցուլ բռնելը՝ լաւ է։

Փ. Փայտը, շատ բարի է։



Փոխինձ ուտելը՝ զէնք է։

Փող ածելը՝ մեծութիւն և բաղդաւորութիւն է։ Մարդուց փող առնելը՝ շահ է, իսկ եթէ կինն փող՝ առնի տղայք կունենայ։

Փուշ կտրելը՝ թշնամիներին կորուստ է։

Փոքր մարդը՝ շնորհք է։

Ք. Քաղաք մտնելը՝ բարի է։

Քաղցր բան ուտելը՝ լաւ չէ։

Քար ձգելը՝ վնաս է. քար ժողովելը․ լեզու է. քարից հիմք ձգելը՝ թշնամի է։ քարի վրայ նստելը՝ մտածմունք է։

Քացախ խմելը՝ չարը կ՚խափանուի։

Քղամիտ հագնելը՝ խնդութիւն է։

Քահանայից խաչ առնելը՝ վիշտ է։

Քոչ տեսնելը ճանապարհ է ցոյց տալիս

Օ. Օձը.—թէ հետդ խօսի, այնպիսի բան կ՚անես որ բոլոր աշխարհը կ՚զարմանայ. օձ թէ սպանես՝ թշնամուդ կյաղթես. մահճիդ վրայ եթէ օձ տեսնես

կին կ'առնես. օձը թէ խայթէ՝ թշնամիներից վնաս գայ. օձը թէ վրադ յարձակուի թշնամիներից ահ գայ. օձը թէ փորդ մտնի՝ թշնամիներդ կը չարախօսեն. օձին անկողնում սպանելը՝ կինը կ'մեռնի. օձ տեսնես և չվախես՝ թշնամիներիցդ անհոգ կաց. օձը տանդ մէջ տեսնես, կինդ կը թշնամանայ. օձին թէ երկու կտոր անես՝ թշնամուդ շահ կ'գայ։

Օղի խմելը՝ ուրախութիւն է։

Օշինդր տեսնել կամ խմել՝ կռիւ է։

---

## ԵՐԱԶԱՑՈՅՑ ԼՈՒՍՆԻ

Ըստ Պտղոմէոսեան աղիւսակի *)

Լուսնի 1, 3, 5, 9, 13, 18, 19, 22, 26, 30 օրն—Երազն ի բարին կատ.
" 2, 10, 12, 16, 28—Երազն երեք օրն կատարի։
" 8—Երազն ութ օրն կատարի։
" 23—Երազն երեսուն օրն կատ.
" 14—Երազն քառաս. օրն կատ.
" 11, 15, 17—Երազն օրն կատ.
" 6—Երազն ի տարին կատարի։
" 29—Երազն լաւ է։
" 4, 7, 20, 21, 24, 25, 27—Երազըն սուտ է։

---

*) Ի հնումն ոչ թէ միայն տգէտ ամբոխն էր հաւատում երազների գուշակութեանը, այլ և դրան հաւատ էին ընծայում այն ժամանակուայ գիտնական ուսումնասէրները և աստղագուշակները (աստրոլոգ), որովհետև կարծում էին որ երազ տեսնելը կախուած է տարւայ եղանակներից, որոշ օրերից և

# ԻԳՆԱՏԻՈՍԻ ԱՐԱԾ ՓՈՐՁԵՐԸ*)

## մարդու մարմնի խալերի մասին

Գագաթը երբ խալոտ՝ բարի է, ամենքից սիրուի, իշխաններից պատուի, ճանապարհորդի, շահի և ուրախանայ։

Գաղտն՝ մեծութեան նշան է, ճանապարհ գնայ և ուրախանայ։

Գլխի վերի կողմը՝ պատիւ է և հոգս։

Գլխի ամբողջ խալոտը՝ շատ բարի է, կորուստ կ'ունենայ, գաղտնիք տեսնէ և լսի։

Ճակատը՝ շատերից պատուի, գանձ գտնի և մեծ փառքի հասնի։

Քներակն աջը՝ ցաւից ազատուի, կանանց պատճառաւ հոգս քաշի և վնասուի

---

լուսնոյ՝ ինչպէս շարժողութիւնից, այնպէս էլ նրա ազդեցութիւնից։

Այդ հիման վերայ և հնարուած է վերոյիշեալ Պտղոմէոսեան երազացոյց ազիւսակը, որը զետեղում ենք այստեղ որպէս ի հետաքրքրութիւն ընթերցողներիդ։ Ծանօթ. Աշխատասիրողի։



Ձախ քներակն՝ յլութիւն շնորհք եւ պատիւ է կամ մարդու հետ կռուի։

Յօնքն աջը՝ կորուստը գտնի և սրտին թեթեւութիւն լինի.—Ձախը՝ ելութիւն, կեանքի երկարութիւն շահի կամ տկարանայ.—յօնքի մէջը՝ նեղութեան համբաւ լսի, անկարգ բանի հանդիպի, տրտմի և վիրաւորուի։

Աչքը—աջ ագիւրն՝ սրտնեղութիւն, տրտմութիւն է, բայց բարի լինի թշնամու հետ կռուի, վէրք կամ լաց է.— Ձախ աչքի ագիւրն՝ բարի և առողջութիւն, հեռաւորին տեսնի սրտնեղի. աջ աչքի յետի ագիւրը շատ բարի է, հեռաւորին տեսնի խնդայ.—Ձախ աչքի ագիւրն՝ հարստութեան և մեծութեան հանդիպի, ազգականներին տեսնի և խնդայ.—աջ աչքի վերի կոպը՝ հարստութիւն է, ցնծայ կամ սրտնեղի, արտասուի, բայց շուտ ազատուի.—Ձախ աչքի կոպը՝ առողջութիւն և լաց է. յետոյ բարի և ուրա-

խութիւն.—Աջ աչքի ներքևի կոպն՝ հեռու ճանապարհ գնալ, հեռաւորին տեսնել, բարի և խնդութիւն է.—Ձախ աչքի կոպն՝ ցնծալ, ցանկացածին հասնել.—Աչքի աջ պտուղը՝ սրտնեղութիւն է.—Ձախ աչքի պտուղը՝ բարի է.—Աչքը ողջ խաղալ (աջ) բարի է, առողջանալ. հեռաւորն գալ.—Ձախ աչքն ողջ՝ շատ բարի է, գանձ գտնել, սրտնեղել և զայրանալ.—Աջ աչքը կոպերով՝ հեռաւոր տեսնել.—Ձախը՝ հիւանդանալ, բայց ապրել։

Արտևանունքն աջը և վերինը՝ հեռաւորն գալ, ուրախ և իր կամքը կատարել.—Ձախը՝ խնդալ և առողջութիւն գտնել.—Աջ ներքևի արտևանունքը՝ լաց և սրտնեղութիւն է.—Ձախը՝ սրտնեղութիւն է, բայց հեռաւորը գալ։

Ականատակն՝ մեծ մարդերից պատուել,

Քիթն՝ աջը, քիչ հիւանդանալ, նեղութիւնից ազատուել, կռուել.—Ձախը՝ որդի առնել, թշնամիներին յաղթել և առողջանալ։



Քթի ամեն մասերը՝ մեծերից շահ է։

Քթի ծայրը, պարտքից ազատուել, վշտանալ կամ մարդու հետ կռուել։

Քթափողը՝ մարդու հետ սիրահարուել կամ պարտքից ազատուել։

Քթի օղը՝ հարստանալ.—Երկու պինչը՝ հարստանալ, կամ սրտակիցն վնասուել։

Այտն աջ, ուրախ, հիւանդանալ և առողջանալ.—Ձախը՝ որդի լինի սրտնեղել, խնդալ և հարստանալ։

Երեսն աջ, գանձ գտնել և առողջութիւն է.—Ձախը ուրախ, տկարանութիւն վէրք ստանալ և կեանքը կարճ լինել։

Ականջն աջը—համբաւ լսել, խնդալ, տկարանալ և ազգականը մեռնել.—Ձախը հեռաւորը գալ և առողջութիւն է։

Շրթունքի երկու կողմը՝ բամբասանք լսել ուրախ և սգալ. ներքևի և վերևի մասերը երբ խաղա իր սիրելիին համբուրէ։

Շրթունքները՝ բարի է, ցուցմար ստանալ։

Կզակն աջ՝ հեռու տեղից շահ գալ, բան գտնել, հարստանալ.— Ձախը խնդա-

հարստանալ և բամբասանք լսել. ամբողջ կիրը նեղութիւն, տունն այրուիլ և կիրը սրով կտրուիլ։

Թիկնամէջն աջը հարստանալ, բայց տրտնեցի.—ձախը՝ այն բանը կ'անես որ պատիւ չէ։

Թիկունքը, յորոգայթէ պատրաստ կաց։

Արմունկն—աջը սէր է, պաշտօն առնալ, գլուխը ցաւի, տրտմի հիւանդանալ և Աստուծով շուտով առողջանալ.—ձախը ցնծութիւն է, հիւր գնալ: վիրաւորուիլ և հիւանդանալ։

Բազուկն աջը, համբոյր է, ցնծալ և հարստանալ.—ձախը, բարի և շահ լինի, մարդկանցից պատիւ ու գանձ գտնի։

Թեւն աջը ցաւի և նեղութեան հանդիպի.—ձախը փշտանալ։

Ձեռն աջը եթէ ողջ խաղայ, մեծերից պատուի, հարստանալ և ցնծալ, կամ դժբաղդութիւն պատահի, զգոյշ կաց.—ձախը բարի է, թագաւորից պարգև առնալ, խնդա և հարստանալ։

Մատները աջ ձեռքի կ'տրտմի, վերջը



սիրտը կ'հանդարտուի—ձախ ձեռքինը գանձ և պատիւ է։

Ուսն աջը՝ առողջութեան նշան է և նոր շորեր հագնի.—ձախը խնդալ Աստուածանից և մարդկանցից պատիւ ու պարգև առնալ։

Ծիծն աջը ուրախանալ, ազգականները զօրանան, բազմանան.—ձախը հեռաւոր տեսնի, ընտանիքով խնդալ։

Կուրծքը խնդութիւն, բարի համբաւ հարստութիւն և սէր է.— աջը բարի է, չարից ազատուի, անկարգ գործի պատճառով զղջալ.—ձախը, ամենքը կսիրեն և չարից կ'ազատուես։

Սիրտը սրտի նեղանալ է և տրտմութիւն.—աջը իր սիրելիքը շատանան և ուրախանան.—ձախը տրտմութիւն է։

Ողն պաակուի, զաւակ կ'ծնի և մեծութեան կ'հասնի.—ողի մէջը՝ բարի է։

Կողն աջը մեծութիւն է, պաակուիլ բարի է և ցնծութիւն ինչ էլ խնդրես Աստուածանից կ'տայ.—ձախը զաւակ ծնի և սիրտդ հանգստանալ։

Փորը լաց է և տրտմութիւն, վերջը

մեծութիւն է և հարստութիւն։

Ծունկն աջը վէճ է մեծութիւն և պատիւ.— ձախը վատ գրոյց լսի։

Սրունքն աջը հարստութիւն է, մեծերից գովասանք, ա՛ն կ'անցնի.— ձախը հարստութիւն է, նեղութիւնից ազատուի։

Անդամներն — աջը բարի, խնդութիւն, վախենալ և տրտմութիւն է.— ձախը բարի է և ուրախութիւն, բամբասուի և հետը թշնամանան։

Կոճը — աջը սիրելի մարդ կ'մեռնի և տրտմի.— ձախը վրան կ'խօսեն, բարի և ուրախութիւն է.— կոճի ներսը, բարի է և ուրախութիւն։

Ներբանը — աջը ճանապարհորդել, վախենալ, չեղած բարի, և տրտմութիւնից ազատուի.— ձախը բանն աջողի և պատուի։

Թաթն — աջ ոտի, ուրախութիւն է և ճանապարհ գնալ.— ձախ ոտինը գանձ, բարի է և հարստանալ։ Ողջ թաթն — տրտմի իւր ազգականից, ճանապարհ գնալ և իշխանութիւն առնալ.— ձախ



թաթն, ազգականներից հեռանալ, տըկարանալ, ապրի և հարստանալ։

Ոտի մատերը — աջու բոլոր հինգ մատերը՝ ճանապարհ գնալ, բարի լինի, ցնծալ, պարգև առնալ.— ձախինը դատաստան, նեղութիւն, վէրք է և աղքատանալ։

Ճկույթը ոտի — աջը, մեծութիւն, և հաւատութիւն, է կամքը կատարի կամ բան կորցնի.— ձախը տրտմի մեծիցը, սիրելիների մէջ աղմուկ, գանձ և առողջութիւն գտնի։

Բութը ոտի — աջը ուրախանալ, հեռաւորն գայ, հարստանալ.— ձախը առողջութիւն է, հեռաւոր տեսնի և սաստիկ հիւանդանալ։

Ճկույթը ձեռքի — աջը, գանձ, հարստութիւն է, և զրպարտութիւն — ձախը վէճ է և աղմուկ. կ'բամբասեն, և կ'ուրախանայ։

Ձեռքը ողջ — աջը տրտմի բայց յետոյ իրար կ'հանգստանալ, չարը հեռանալ։ — ձախը, գանձի և պատուի հանդիպել.

Թուշը աջը թշնամիներից պատրաստ կաց. ձախը—բարութիւն է։

Կզակը—աջը կռիւ է, ոսկարանալ, Աստուծով ազատուիլ.—ձախը հեռաւորը գալ, ճանապարհ գնալ, առողջանալ և ցնծալ։

Ներբանը—աջը առողջութիւն և գանձ է.—ձախը սրտմի, ոսկարանալ, (զգոյշ պիտի լինել) և շուտով կ'փրկուի։

---

*) Թէև երազահանների և սրանց նման հրատարակութիւններն անկարգ և աննպատակայարմար են տպագրութեան, բայց գաւառական մեր մի քանի գործակալների անընդհատ պահանջին զոհացում տալու համար, որպէս զի ընթերցանութեան գործը չը վնասուի և գաւառական ընթերցող հասարակութիւնը չզրկուի օրացոյցների միւս մասերում զետեղած օգտակար նիւթերից, հակառակ մեր ցանկութեան, հրատարակում ենք այս „Լիակատար երազահանը" (աշխարհաբարի վերածած և որոշ կերպիւ դասաւորուած), վերապահելով մեզ միայն նորա արտատպելու իրաւունքը։ Տ. Ա.

# ԲԱՂԴԱԳՈՒՇԱԿ *)




*) Հետեւեալ VI բաժանմունքների հարցերից ամեն մինը, ցանկացողները իրանց մտքումը պահում են և գնդակը գցում են վերը նշանակուած շրջանի մէջտեղը։ Սրա պատասխանը պէտք է գնդակի տակի թուերի մէջ փընտռել։

## I Բաղդաւոր կը լինիմ արդե՞օք

1. Այո, կը լինես, բայց ծոյլ ես։
2. Որ չես աշխատում՝ ինչ կը լինես։
3. Եթէ առաւօտները վաղ զարթնես։
4. Գործիդ արի եղիր միայն:
5. Եթէ այդ ուրիշին ես ցանկանաս։
6. Խնայողութիւն չունես։
7. Այնպէս չես վարւում՝ որ լինես։
8. Ինչ կը ցանես, այն էլ կը հնձես։
9. Որդիներանցով՝ ծեր ժամանակը։
10. Ամենքի հետ չես վարւում, կոչն-չտնաս, այդպէս մի շարունակի։
1. Բաղդդ ընտաւորութեան մէջն է։
12. Խոնարհութեամբ միայն կարող ես բախտաւոր լինել։

## II. Յաջողութիւն կունենամ

1. Միայն ճարպիկ և հնարամիտ եղիր։
2. Եթէ քեզ աւելի խոնարհ պահես։
3. Եթէ ազնիւ և չափաւոր լինես,
4. Նանանց միջոցով ամեն բանի կը հասնես։



5. Եթէ թողնես յիմարութիւններդ։
6. Բոլորը՝ քեզանից է կախուած։
7. Միայն ամուսնացուդ հարուստ պէտք է լինի, թէ կուզ տարիքը 60-ից էլ անցք։
8. Եթէ եռանդով գործես։
9. Առանց այն էլ ինքդ լաւ կաս։
10. Այնպէս, ինչպէս ինքդ ցանկանաս։
11. Ցանածդ դուրս կը գայ, ծլածդ կը ծաղկի։
12. Ամեն բանում յաջողութիւն կը գտնես, բայց կանանցից կարգին տանջուելու ես։

## III. Իմ իղձալս սիրո՞ւմ է ինձ արդեօք

1. Նայիր հայելուն, տես արդեօք կարելի՞ է քեզ սիրել։
2. Սիրում է, բայց ծածկում է,
3. Չի էլ մտածում այդ մասին։
4. Բայց քեզ հետ և ուրիշներին էլ է սիրում։
5. Նայելով թէ ի՞նչ ես ընծայելու։
6. Չե՞ս ամաչում, ի՞նչ քո սիրելու ժամանակն է։
7. Սիրում է և կսիրի միայն թէ մինչև

քո կարողութեան վերջին կոպէկը։
8. Քեզ շատ սիրելուց տանջւում է։
9. Միայն քանի որ տեսնում է քեզ։
10. Շատ քիչ։
11. Սիրում է քեզ միայն երբ լիքն է գրպանդ։
12 Ոչ սիրում է, ոչ ատում, այլ մի-մի անգամ միայն դուր ես գալիս։

## IV. Շուտ կը լինի արդեօ՞ք իմ հարսանիքը

1. Երբէք, եթէ վերջդ չմտածես։
2. Երբ քո քէփն է, միայն զգուշացիր։
3. Ո՞ւմն ես պէտք, կամ ո՞ւմն ինչ։
4. Մինչև քեզ չապահովես։
5. Երբ բարեկամ գտնես։
6. Երբ խելօքանաս։
7. Շատ ուշ ես մտածում։
8. Որ միտք չունես՝ լաւ է մի վանք մտնես։
9. Շուտ, հէնց այս տարի, բայց չես աշխատում։
10. Ունեցած առաւելութիւններդ գործ դիր։
11. Դու լաւ գիտես թէ երբ։
12. Դատարկ գրպանով ի՞նչ հարսանիք։



## V. Եկող տարի ինչպէ՞ս կը լինի

—

1. Նայելով թէ դու ինչ կը լինես։
2. Լաւ, եթէ խելքդ գլխիդ պահես։
3. Եթէ առաջուց առած ունենաս վի-ճակահանութեան տոմսակ, կը տանես։
4. Ամառը շոգ՝ ձմեռը ցուրտ։
5. Հարուստների համար լաւ կը լինի։
6. Խելքիդ զոռ կը տաս, փող շատ կը ծախսես։
7. Այդ վատ ընաւորութիւնդ չես փոխիլ։
8. Բանդ որ պինդ չբռնես՝ շատ վատ կը լինի։
9. Ուրախ և բաղդաւոր։
10. Փողեր շատ կստանաս, շատ էլ կը ծախսես, տակը բան չի մնալ։
11. Յիմարը կաշխատի, խելօքը կուտի։
12. Ծնուածին կը մկրտեն, մեռնողին կը թաղեն։

## VI. Երկար կապրեմ արդեօ՞ք

—

1. Ամեն բանի մէջ չափաւոր լինելով հարիւրից կանցնես։

2. Ոչ մի կողմից քեզ չես զսպում, ի՞նչ երկար կապրե՞ս:

3. Այնքան անգամ մէկ ու կէս, որքան ծնողքդ:

4. Եթէ պարտքերը չանես, իննսուն և ինը:

5. Անչափ աչքածակութիւնդ, կեանքդ կարճացնում է:

6. Ապրես՝ չապրես. ի՞նչ օգուտ, երբ ոչ քեզ համար ես և ոչ ուրիշի:

7. Ինն անգամ ինը տարի, բայց ցրտից զգուշացիր:

8. Գլուխդ հով, փորդ թոյլ և ոտքերդ տաք պահելով երկար կապրես:

9. Նախանձոտ սրտովդ երկար չես ապրելու:

10. Փառասիրութիւնդ է կեանքդ կարճացնում:

11. Գործդ իմացիր, քեզ դեռ այդ է հարկաւոր:

12. Զերից զգուշացիր միայն: *)

---

*) Այս բաղդագուշակը զետեղում ենք որպէս պարապ ժամանակի խաղ՝ մեր ընթերցողների համար. Ծան. Աշխ.

# ԴԻՄԱԳՈՒՇԱԿ

Զանազան դարերում գիտնականները և փիլիսոփաները դիմագուշակութեանը մեծ նշանակութիւն են տուել, նոքա, մարդուս բարոյական արժանաւորութիւնները այդ գիտութեամբ էին որոշում, և այն ժամանակ այդ բացատրում էին նրանով, որ երեսի գծագրութիւնն է որ իբր հանդիսանում է միջնորդ մարդու ներքինի և արտաքինի մէջ:

Այսպէս էին այն գիտնականների կարծիքը, որոնց թւում անպայման պատկանում էին, Վոլֆը, Հէլլէրը, Սկալիգէրը, Դէկարտը, Մոնտօնը և նշանաւոր բնագէտ Բիւֆոնը:

Դիմագուշակութեան գիտութիւնը մարդկային կեանքին ժամանակակից է, այն պատճառով որ մարդիկ իրար հետ որև է յարաբերութիւն սկսելիս, չէին կարող ուրիշ կերպ քննել և միմեանց հասկանալ, եթէ ոչ արտաքինով, տեսքով և գծագրութեամբ: Եւ շատ պատճառներով, այդ բնական է

թւում, երբ հենց ներկայումս ես երեսի գծագրութեամբ այնպիսի գործեր են վճռվում որ մեր կեանքում մեծ դեր են խաղում, օրինակ ինչպէս պսակն և այլն։ Դէմքի գծագրութեամբ և հայացքով է որ քննում են մարդուն, որոշում հիւանդին և նրա հիւանդութիւնը, Գծագրութեամբ յայտնվում է մարդու բարի, չար և զայրացկոտ լինելը. Մի խօսքով մարդու հենց մի հասարակ բարեձև տեսքը և քաղցրանկատ հայացքը, մինչև անգամ ամենահասարակ մարդու աչքում մեծ դեր է կատարում և այնպիսի տպաւորութիւն անում, որ գրաւում է նրա սէրը և համակրութիւնը։

Ի հարկէ այդպէս էլ պէտք է լինի, որովհետև անձնական տեսակցութեամբ և իր ներկայութեամբ մարդը աւելի շուտ և մօտ է ճանաչվում, քան թէ նրա խօսքը և հեռուից ստացած նրա գրութիւնը։ Մարդ ամեն բանում կարող է խաբել, բայց նրա երեսը չի կարող մի անգամից այնպէս փոխուել, որ խաբի։ Ու ճշմարիտ, ով կարող է նրա մտնել



մարդու հոգու խորքը կամ շօշափել նրա ուղեղը, թէ ինչ է գտնվում մարդու գանգի մէջ։

Ինչը կարող է թափանցել այն զգացմունքների անդունդը, հասկանալու համար այն հակումները և կրքերը, որոնցով լի են մարդու գլխի ներքնակողմը։ Աչքերի և ականջի շնորհիւն է, որ լոյսի և ձայնի հրաշալիքները գաղտնագողի մտնելով մեր գլուխը, տալիս են մեր խելքին բաւականութիւն։

Դիմագուշակութեան գլխաւոր կանոնը, հիմնուած է հոգեկան դրութեամբ տեղի ունեցող զգացմունքներ ն անցնող և մարմնի և երեսի գծագրութեանց շարժողութիւնը արտայայտող յարձակումներով ինչպէս օրինակ հոգու խաղաղ դրութեան ժամանակ երեսը հանգիստ լինելով հասկացվում է մարդու յատկութիւնը. Մինչև անգամ ոչ թէ երեսի գծագրութիւնը, նոյն իսկ մարդու ձայնը նաև որոշում է մարդու դրութեան որպիսութիւնը, ինչպէս նաև նրա հոգու յատկութիւնը և այլն։ Ամենքիս հասկանալի է, որ երեսը կրքե-

րի արտացոլացումն է։ Զզուանքը, տըխրութիւնը, վիշտը, անքաղաքավարութիւնը և յիմարութիւնը դնում են իրենց դրօշմը մարդու ճակատին։ Հենց երբ նկատում ենք որ մարդ իր ճակատը խոնարհեց, յօնքերը կիտեց, դէմքը խոժոռեց, դրանից հասկացւում է որ զգացմունքը անցնում է կամքին, և մենք զգում ենք, որ մարդուն անհաճոյ է տեղի ունեցած խօսակցութիւնը և թէ առաջարկած խնդիրը մնալու է անկատար։

Այս հոգու այս ժամանակաւոր հակումները, մարմնի շարժողութեամբ միշտապէս դնում են իրանց կնիքը մարդու երեսին։ Եւ այդ վատ հակումները սրտի խորքից վեր են սկսվում մի մասով երեսի գծագրութիւնը, որը յաճախ անցնում է սերնդից սերունդ։ Հենց այս հանգամանքներից է կախուած այն փոփոխութիւնները, որը յաճախ ոչընչացնում է գեղեցկութիւնը մարդկանցից, արբեցողութեան, զզուանքի, խանդոտութեան, ինքնասիրութեան և տխրութեան ազդեցութեամբ։



Ահա և այդ յայտնի փիլիսոփաների գուշակութեանց տեսակէտով։

## ՃԱԿԱՏԸ

Ճակատի լայնութիւնը — նըշան է այնպիսի խելքի, որ կարող է ընդգրկել շատ առարկաներ։

Կարճ ու սեղմուած ճակատը — հաստատ բնաւորութեան նշան է։

Կարճ ճակատը ըստ Բիւֆոնի. մարդուս յամառ, ագահ, և մաքրասէր ու շատակեր լինելն է ցոյց տալիս։

Լայն ու մեծ ճակատը ընդհանրապէս արտաքին ազդեցութիւններին դանդաղ տպաւորուելն ու անհասկացողութիւնն է արտայայտում։

Տափակ ճակատը առհասարակ ինքնահաւան լինելն է ցոյց տալիս։

Ճակատի վերին կողմն ուղղուած երբեմն էլ հետքերի նման գծեր թողնող կնճիռները՝ խելացիութեան

Ուռած, քնքուշ մորթ ունեցող ճակատը՝ ցոյց է տալիս տիրոջ քաղաքավարի, հաճոյական ու զուարճասէր բնաւորութեան տէր լինելը։

Դարուփոս, անհարթ ու մոր-թով ծածկուած ճակատը ապա-քէն. խորամանկ ու զաւաճանող լինելն է ցոյց տալիս։

ՅՕՆՔԵՐԸ

Հորիզոնական գրութեամբ ուղիղ գը-ծով տարածուող յօնքերը այրական բնաւորութիւնն են արտայայտում։

Անկանոն գրութեամբ ու անկանոն գծերով յօնքերը՝ բնաւորութեան կոշ-տութիւնն են ցոյց տալիս։

Թանձր յօնքերն ու ուղիղ յօնամա-զերը — Ողջախոհութիւն, ճշմարտախօ-սութիւն ու խոհեմութիւն։

Աչքերին շատ մօտ դասաւորուած յօնքերը — Համառութիւն ու զննող բնա-ւորութիւն։

Շէկ յօնքերը — Թուլութիւն։ Նոսրը — Թեթեւամտութիւն, երբեմն և խորամանկութիւն։ Թուխը — Նախանձ։

ԱՉՔԵՐԸ

Ո՛վ գոհ է իր վիճակից, ո՛ւմ խիղճը մաքուր է, նրա հայեացքը միշտ հան-դարտ է, մինչև անգամ համեստ, և հո-



գու անդորրութիւնն է արտայայտում։

Կապոյտ աչքերը — Թուլութիւն։

Շագանակագոյնը — Հաստատ բնաւորութիւն։

Սեւը — Կորովամտութիւն։

Մոխրագոյնը — Խորամանկ ու յող-դողդ բնաւորութիւն։

Բացկապոյտը — Դանդաղ լինելն։

Խոշորը — Ծլատի ու շատակեր։

Վառվռունը — Այրական, աներ-կիւղ ու հնարագէտ բնաւորութեան և հայհոյիչ լինելու։

Շուտ շուտ աչքերը թարթողը կամ աչքացաւ ունի, կամ երկչոտ է։

Այն մարդը, որի աչքերը յաճախ դէ-պի գետինն են բեւեռուած՝ մտածող ու աշխատասէր է։

ԲԵՐԱՆՆ ու ՇՐԹՈՒՆՔԸ

Սեղմ բերանը ցոյց է տալիս կարգա-պահութիւն, մաքրասիրութիւն, գոր-ծունէութիւն, ու ճշդութիւն։

Բաց բերանը — Մելամաղձոտութիւն։

Փակ բերանը — Համբերատարութիւն։

Լայն բերանը յիմարութեան նշան

է, եթէ վէրը է բարձրացած դէպի ռունգ-ները, և ագահութեան՝ եթէ սեղմած է։

Փոքրիկ, նուրբ բերանը, համապատասխան փոքրիկ ծնօտին ու քթին —թոյլ ու երկչոտ բնաւորութեան։

Հաստ շրթունքները հեշտասիրութեան ու որովայնամոլութեան։

Ստորին շրթան վերայ եղած փոսիկը՝ ուրախ բնաւորութեան նշան է։

Այն մարդը, որի խօսելու ժամանակ շրթունքների մի ծայրը վերև ու մի կողմն է բարձրանում, արհամարհող ու անզգայ բնաւորութեան տէր է։

## ՔԻԹՆ ու ՌՈՒՆԳՆԵՐԸ

Արմատի մօտ կորացած քիթը—Հը-րամայող ու խստաբարոյ լինելու նշան։

Ճակատի հետ ուղիղ գծով միացող քիթը—Հեզ բնաւորութիւն։

Շրթունքի վերայ կորացած քիթը—Սառը, անզգայ ու նենգմիտ լինելը։

Վեր բարձրացած քիթը՝ բարձր Ճակատի տակ—Կոպիտ ու բարկացկոտ։

Հարթ և ուղիղ քիթը՝ առանց նկատելի գծերի, ոչինչ առանձին բն-



գունակութիւն չէ ցոյց տալիս։

Փոքրիկ ռունգները—Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կանոնաւոր զարգացած ռունգները—հեշտասիրութիւն, և քնքշութիւն

Այս ու այն կողմն ուղղուած ռունգները—Բարկացկոտի ու կրքոտի նշան։

## ԿԶԱԿՆ ու ԱՅՏԵՐԸ

Սուր կզակը—Խորամանկութիւն ու սրամտութիւն։

Տափակ կզակը—Մտածողութիւն։

Գէր կրնակի կզակը—Շատակերութիւն ու զգայունութիւն։

Փոքրիկ, կարճ կզակը—Թուլութիւն ու երկչոտութիւն։

Կլոր, փոսաւոր կզակը—Բարի բնաւորութիւն։

Երկու կէս եղածի պէս կզակը—Զգոյշ և խոհեմ լինելը։

Չոր ու կուճ եկած այտերը—Մելամաղձոտութիւն։

Գէր ու մսոտ այտերը—Մաղասա-յին բնաւորութիւն ու կոպիտ միտումներ։

## ԱԿԱՆՋՆԵՐԸ

Մեծ ականջները - Անքաղաքավարութիւն ու ծուլութիւն.
Փոքր ականջները - Խորամանկութիւն ու խելք:
Հաստ ականջները—Պարոնութիւն:
Բարակ, թափանցիկ ականջները—Պատուականութիւն:

## ՄԱԶԵՐԸ

Սև ու խիտ մազերը, որոնք չեն ոլորւում քիչ խելք՝ բայց աշխատասիրութեան ու կարգապահութեան նշան:
Երկայն, հարթ մազերը—Քաղցր բնաւորութիւն:
Խարտեաշ մազերը—քնքշութիւն:
Սևուները, ոլորիկ և փայլուն մազերը չարութեան նշան են, մանաւանդ երբ նրանց գոյնը յոնքերի գոյնից տարբերւում է.



## ՄԱՏՆԵՐԸ

Մեծ մատը– առաջի յօդը, ցոյց է տալիս կամքի ոյժը լինելը, երկրորդը—դատողութիւն, երրորդը սէր:

Առաջի—մատը (Լուսնթագի մատը) եթէ երկար է, դատողութեան և խընայողութիւն է ցոյց տալիս. եթէ սըրածայր է.– սրամիտ հասկացողութիւն, եթէ քառանկիւնի, — ճշմարտասիրութիւն. եթէ վերջումը լայնացրած է (թիակի նման),—եռանդուն գործունէութիւն:

Երկրորդ մատը (Կռոնոսի մատը) սրածայրը,— ունայնամտութիւն քառանկիւնաձևը,— զգուշութիւն, թիականմանը,— գործունէութիւն:

Երրորդ մատը— (Փայլածուի մատը) սրածայրը,—նկարչական ձիրք. քառանկիւնաձևը—ճշմարտութիւն, քննադատողութիւն, թիականմանը, թատերական տաղանդ:

Չորրորդ մատը—սրածայրը,—պերճախօսութիւն, քառանկիւնաձևը—քննադատական հաւատարմութիւն:

### ԲԱՂԴԱՒՈՐ ԱՄՈՒՍՆՈՒԹԵԱՆ ՕՐԱՑՈՅՑ

Ֆրանսիական մի քանի գիտնական հետախոյզների կարծիքով՝ ամուսնութեան համար գոյութիւն ունին թէ բաղդաւոր և թէ անբաղդ օրեր։ Նրանց գիտողութիւնների համաձայն, ամենից աւելի բաղդաւոր և հաճելի օրեր պէտք է համարել՝

| | |
|---|---|
| Յունուարի | 1, 3, 10, 19 և 21. |
| Փետրուարի | 3, 10, 19 » 21. |
| Մարտի | 3, 5, 12, 20 » 23. |
| Ապրիլի | 2, 4, 12, 20 » 22. |
| Մայիսի | 2, 4, 12, 20 » 23. |
| Յունիսի | 1, 3, 11' 13 19 և 21. |
| Յուլիսի | 1, 3, 12, 19 և 21. |
| Օգոստոսի | 2, 11, 18, 20 և 30. |
| Սեպտեմբերի | 1, 9, 16, 23 և 28. |
| Հոկտեմբեր | 1, 8, 16 18 27 և 29. |
| Նոյեմբերի | 5, 11, 13, 22 և 25. |
| Դեկտեմբերի | 1, 3, 11, 16, 23 և 29 |

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՅՍ-Арм. ССР

### Բ) ՅՕՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ

...իլի 23.—Անուանակոչութիւն Ն. Մ. Կայսրուհւոյ Աղէքսանդրայ Ֆէօ...նայի։

...յիսի 6.—Ծնունդ Ն. Կ. Մ. Կայսր...այ Աղէքսանդրովիչի։

...յիսի 14.—Թագադրութիւն Ն. Կ. ...Կայսր Նիկոլայ Աղէքսանդրովիչի և ...անդրայ Ֆէօդորովնայի։

... 25 Ծն. Ն. Կ. Մ. Թագուհի-Կայ...հւոյ Աղէքսանդրայ Ֆէօդորովնայի։

...ալ. 22.—Անուանակոչ. Ն. Կ. Մ. Մայր Կայսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի։

...ւլ. 30.—Ծնունդ Ն. Կ. Մ. Թագա...ռանգ Կայսր Աղէքսէի Նիկոլայեւիչի։

...ոստ. 25.—Յիշատակ նուաճման ...ելեան Կովկասու։

Հոկտ. 5.—Անուանակ. Ն. Կ. Մ. Թագաժառանգ Կայսր Աղէքսէի Նիկոլա...եւիչի։

Հոկտ. 21.—Գահակալութիւն Ն. Կ. ...Կայսր Նիկոլայ Աղէքսանդրովիչի։

...յեմբերի 14.—Ծն. Ն. Կ. Մ. Մայր Կ...յսրուհւոյ Մարիայ Ֆէօդորովնայի։

...եկտ. 6.—Անուանակոչութիւն Ն. ...Մ. Կայսր Նիկոլայ Աղէքսանդրովիչի։

3748

«Մուրճի», «Աղբիւրի» և ռուսերէն լե-
զուով „Армянскій Календарь съ п[рило-]
сказаніями" օրացոյցները (երեքը մ[իա-]
սին) ճանապարհածախքով ուղ[արկւում են]
մէկ ռուբլի։

Վաճառւում են Թիֆլիսի յայ[տնի]
գրավաճառանոցներում և բոլոր եկ[ե-]
ղեցիների խանութներում։ Մեծ [քա-]
նակութեամբ գնողներն առանձին զեղ[չ]
ստանալու համար՝ աղդակի դիմում
են։

Օրացոյցների մէջ տպագրւում են յ[այ-]
տարարութիւններ չափազանց յեղու[...]
ցով, մանրամասն գնով։ Ցանկացո[ղ-]
ները դիմում են հետևեալ հասցեով
Թիֆլիս՝ Մակար Չմշկեանին։ Тифли[съ]
Макару Чимишкяну Tiflis, Makar Tsc-
michkian.

Գին[...]

059
Կ-70

6735
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0032317